


Է. ՋԱՄԻԱԾԻՆ



Զ-Է
2001






ԾԵ ՏՈՒՆ

ԾԵՍՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ

Յ - - Ն ի - - Յ - - Լ ի - -

2001



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Միացյալ Թագավորության խորհրդարանում	3
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Լոնդոնի Սուրբ Եղիշե եկեղեցու օծման առիթով	7
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը երիտասարդներին՝ ուխտագնացության առիթով	10
Հայրապետական ուղերձ Սահմանադրության օրվա կապակցությամբ	12
ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատն ընդունել է բանաձև՝ ի շանավորումն 1700-ամյակի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամենիկյան այցի	13
Վանականների միջեկեղեցական հավաք Ծաղկաձորում	15
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Գերդ Պռային	15
ԱրմենՏեյի գործադիր փնօրենը 10 հազար դուրս նվիրաբերեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը	16
Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ Երևանում կատարվեց Ս. Երրորդություն եկեղեցու հիմնարկեքը	17
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Լոնդոն	17
Գարեգին Բ Կաթողիկոս. «Այս Կենտրոնում Հոգևոր մեր հայրերը կերպել են հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը»	18
Հունիսի 16-ին Հայ Եկեղեցին փոխում է Ս. Գրիգոր Լուսավորչի ելն ի վիրապեն, հունիսի 17-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի փոխերը	19
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Նիկոլայ Ռիժովին	20
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	21
Գարեգին Բ Կաթողիկոս. «Առաքելություն է Սուրբ Էջմիածինը»	22
Հանդիպումներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	23
Գարեգին Բ Կաթողիկոսն իր օրհնությունը փվեց ամենիկահայ ուխտավորներին	24
Գարեգին Բ Կաթողիկոս. «Զորացրեք Հայրենիքը և զորացեք Մայր Հայրենիքով»	25

Կադիցա Չեկավիչը հրաժեշտ Կարեգի Բ Կաթողիկոսին	26
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց տիեզերագնաց Վալենտինը	26
Լեբեդևին	26
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի Նախարարների խորհրդի Վերահսկման «Ազգյի խմբի» պատվիրակությանը	27
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց գերմանացի բարերար Գերհարդ Մայերին	28
Վեհափառ Հայրապետն ընդունեց Մոնրեալի քաղաքապետին	28
Գարեգին Բ Կաթողիկոսն իր ցավակցությունն է հայտնել Ալեքսի Բ Պարրիարքին Իրկուտսկում տեղի ունեցած ինքնաթիռի վթարի ամիթով	29
Վեհափառ Հայրապետն ընդունեց Նուսաստանի փոխարքեպիսկոպոսին	30
Վեհափառ Հայրապետն այցելեց պրոկտորգիայի գլխահետազոտական ինստիտուտ	31
Աղավաճեց օծվեց Ս. Աստվածածին մատուռը	32
Ավարական դիպլոմներ հանձնվեցին Աստվածաբանական ֆակուլտետի շրջանավարտներին	33
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին	34
Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը Կարմիր Սարգսյանի ուխարազանության մասնակիցներին	35
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Ժողովրդական Ժողովի նախագահ Աբդ Ալ-Կադեր Կադորային	36
Նուրի 22-ին Զրիստոսի Պայծառակերպության տոնն է	37
Նոմի Պապը Հայաստան կժամանի սեպտեմբերի 25-ին	38
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի փոխվարչապետ Իլյա Կոնստանտինովին	38
Չարենցավանում առաջին անգամ դոկտորներ են Կոնստանտին Կոնստանտինովին	39
Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսարարությամբ տեղի ունեցավ մանրանկարչության դպրոցի նորոգված շենքի բացումը	41
Վերանայվի Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանությունը	42
Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պարրիարքները ժամանեցին Մայր Աթոռ	42
Եղեգիս գետի ափին մկրտվեցին շուրջ 1500 հայորդիներ	43
Ավարտվեցին հավաքական մկրտությունները Սյունյաց թեմում	44
Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պարրիարքների հետ այցելեց Գյումրի	44

Ամենայն Հայոց Հայրապետի և Երուսաղեմի ու Կ. Պոլսո Պատրիարքների խորհրդակցություններն անցան արդյունավետ . . .	45
---	----

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Ռումինիայի հայոց թեմի կազմավորման 600-ամյակի առթիվ . . .	47
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Գերաշնորհ Տ. Հակոբ Եպիսկոպոս Գրլընճյանին արքայական պատիվ շնորհելու մասին	50
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը երգահան Էդվարդ Միրզոյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	52
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանին քահանայական գործունեության 30-ամյակի առթիվ	54
Հայրապետական պարգևաբաշխություններ	56

1700-ԱՄՅԱԿ

1700-ամյակի օր Ռավեննայում	57
ՖԼՈՐԱ ԿԱՔԱՂՅԱՆ - Համահայկական երիտասարդական ուխարազնացություն	58

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԴՊԻՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ - Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն	61
Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյան	62
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն և վեղարի տվչություն	63
Տ. Գարեգին արքեպա Հարությունյան	67
Տ. Գեղարդ արքեպա Վահունի	69

S. Մամբրե արևդա Տաշչյան	70
S. Խոսրով քահանա Ստեփանյան	71
S. Պարոյր քահանա Ավետիսյան	73
S. Ռուբեն քահանա Գառապարյան	74
S. Վահրամ քահանա Մելիքյան	75
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Մայրավանքում	77
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Գևորգյան Հոգևոր ճեմարանի ամսվերջի հանդիսությունը Վեհարանում	81
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից	87

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԻԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ - <i>Աստված</i> անունը վաղմիջնադարյան հայ թրիստոսարանական մտքի մեկնությամբ	88
ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Սր. Նազարյանցի պատմագիտական հայացքները	97

ՀՈՔԵԼՅԱՆՆԵՐ

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ - Սրբի խոսք	110
--	-----


ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն (1984-2000 թթ.)	112
Եկեղեցական բնմ. լուրեր	127
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	130
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	135
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzin	140

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հարգարժան փիկնայք և լպարոնայք.

Գոհություն ենք վերառաքում մեր Երկնավոր Հորը, որ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-րդ հոբելյանազարդ փարում առաջնորդեց Մեզ որպես համայն հայության հոգևոր առաջնորդ վերստին այցելել Անգլիա՝ Ալբիոնի այս օրինյալ նրկրում սրբազործելու Ս. Եղիշե հայոց եկեղեցին: Մեր հիշողության մեջ թարմ է փակավին Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Անգլիա, նրբ հանգուցյալ Հայրապետը այս բարձր ամբիոնից հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի օրհնությունը փոխանցեց Ձեր հնազույն ու ավանդաշատ Հայրենիքին: Ուրախ ենք, որ Մեզ ևս առիթ ներկայացավ Միացյալ Թագավորության պատկառելի այս հաստատության հարկի ներքո հանդիպել Ձեզ հետ և հանուն հայ ժողովրդի հավաքացյալ զավակների Մեր հարգանքն ու եղբայրական սերը հավաստել Անգլիայի պետությանն ու ժողովրդին:

Այիգբը նոր հազարամյակի՝ 2001 թվականը, Հայոց կյանքում նշանավորված է համազգային մկրտության 1700-ամյա հոբելյանով, որ գեղեցիկ մի առիթ է մեր ժողովրդի համար հավաքով նորոգվելու և ամրապնդելու քրիստոնեական մեր եղբայրությունը քույր Եկեղեցիների և ժողովուրդների հետ: Դարերի խորքը գնացող ավանդույթներ ունի բարեկամությունը Զրիստոսասեր մեր երկու ժողովուրդների: Մեր երկրները, թեև զարգված փարածությամբ, անգլիական ծովերով ու հայկական լեռներով, սակայն կամրջված են մեր ժողովուրդների հոգևոր-մշակութային և փնտեսական դարավոր կապերով: Հնազույն Ալբիոնը մեր մատենագրության մեջ հիշվում է փակավին 7-րդ դարում՝ Հայ Եկեղեցու գիտնական հոգևորական Անանիա Շիրակացու աշխարհագրական երկում: Անգլիայում հայերի ներկայության մասին առաջին հիշատակությունները նույնպես վերաբերում են 7-րդ դարին և շարունակվում հետագայում: Հայ-անգլիական առևտրությունները պետական հարաբերությունների մա-

կարդակ են ստացել Կիլիկյան Հայաստանի 11-14-րդ դարերում և առավել ընդլայնվել 17-19-րդ դարերում, երբ Հնդկաստանի առևտրական կարևոր կենտրոններում Մադրասում, Կալկաթայում և այլուր, արդեն ձևավորված հայկական համայնքներն իրենց գործունեությունը շարունակեցին բրիտանական հովանու ներքո: Երբ Բրիտանիայում հայկական լառաջին համայնքները կազմավորվեցին 19-րդ դարի սկզբին, երբ հայ վաճառականներն իրենց առևտրական գրասենյակները հիմնեցին Լոնդոնում, Մանչեստրում, Լիվերպոլում, ապա նաև բնակություն հաստատեցին այս քաղաքներում: Հայ բնակչության թիվն այնուհետև արագորեն ավելացավ Անգլիայում մասնավորաբար համարվելով Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանից գաղթողներով: Պարտադրյալ տնտեսական հետևանքով աշխարհի չորս կողմերը սփռված հայությունը, հոգով միշտ կրելով Հայաստանի ազատագրության հույսը, իրեն հանգրվան փոխեց երկրներում նախ և առաջ հիմնել է իր եկեղեցին ու դպրոցը՝ որպես գոյապահման հիմնասյուներ: Հավաքարիմ ազգային ավանդներին՝ Անգլիայում հաստատված հայերը 1870 թվականին Մանչեստր քաղաքում հիմնեցին հայկական առաջին եկեղեցին՝ Սուրբ Երրորդություն անունով: Խորհրդանշական է, որ ազատագրական իր հույսերը մեր ժողովուրդը կապել է նաև Անգլիո պետության ու ժողովրդի աջակցության հետ:

Աղոթքով ու երախտագիտությամբ հիշենք անգլիական ժողովրդի ազնիվ գավակներին, ովքեր, սկսյալ Բայրոնից, բողոքի իրենց ձայնը բարձրացրին հայ ժողովրդի արևմտահայ հարվածի՝ եանդեպ Օսմանյան Թուրքիայում իրականացվող դժնդակ հալածանքների դեմ: Բռնություններն ու վայրագ սպանությունները բարձրակետին հասն 1915 թվականին, երբ մեկ ու կես միլիոն հայություն ընաչքվեց իր պատմական հայրենիքում և Թուրքիայի հայաշատ բնակավայրերում: Կոտորածից փրկված հայության բեկորները ապաստան գտան Միջին Արևելքի, Ամերիկայի ու Եվրոպայի երկրներում, և ձևավորվեց արդի Հայոց սփյուռքը: Երազյալ Թագավորությունը մեկն էր մարդասեր այն պետություններից, որ այդ զոհարին ժամանակներում աջակցության ձեռք մեկնեց հայությանը:

Վերապրեց եղեռնահար մեր ժողովուրդը: Վերապրեց Հարության կենսահաստատ հավատով, իր եանդեպ գործված չարը բարիով հաղթելու Ջրիստոսաշնորհ պարգամով, վերապրեց եույսով, որ ազգերի ու պետությունների կողմից Հայոց Զեղասպանությունը ճանաչում և դատապարտում պիտի գտնի, բուրգի արդարության հաղթանակը, մարդու և ազգերի իրավունքների անշեղորեն հարգումն ու պահպանումը, մարդկային հոգիներից ներս բռնության ու չարիքի մերժումը միայն կարող են առաջնորդել մարդկությանը դեպի խաղաղության, հաշտության ու համագործակցության ցանկալի հանգրվան:

Այսօր պատմական իր Հայրենիքի փոքր մի հարվածի վրա, խորքերդային 70-ամյա ժամանակաշրջանից հետո, մեր ժողովուրդը վերագրել է իր անկախությունը և ցանում է վերակազմակերպել իր հասարակական կյանքը ժողովրդավարության, ազատ տնտեսության, մարդու իրավունքների հարգման և խղճի ազատության սրի-

նահաղց սկզբունքներով: Մենք հավատում ենք, որ Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությունը պիտի նպաստի մեր երկրում արդեն իսկ սկսված այդ գործընթացի գորացմանը, խորհրդային ծանր ժառանգության վերջնական հաղթահարմանը մեր կյանքի բոլոր բնագավառներում:

Բռնադիրության ու անաստվածության փաստամյակներին Հայոց Առաքելական Եկեղեցին նույնպես հալածվել ու ճնշվել է անողորմարար: Բանտարկվել, աքսորվել ու սպանվել են հազարավոր եկեղեցականներ, ավելի քան յոթ հարյուր վանքեր ու եկեղեցիներ ավերվել են ու խոտարհվել: Չի մարել, սակայն, մեր ժողովրդի վստահությունն առ Աստված: Այսօր բոլոր ջանքերն ուղղված են վերականգնելու սրբապրդվածն ու ավերվածը: Խոստովանեմ. դուրին չէ բուժել մարդնչող աթեիզմի վերքերը մեր ժողովրդի սրբում և հուսարակական մեր կյանքում: Մակայն լավապես նմ. բանգի բրիստոնությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակը հոգեհորությունն և հավատի վերարթնության նոր ոգի ու շունչ է հաղորդել հայությանը Հայրենիքում և սփյուռքում:

Ի՞նչ ժողովուրդը պայքարում է, որ ազատ ապրելու Աստվածաշնորհի, անօրարելի իրավունքը, արդարությունն ու ճշմարտությունը հաղթանակեն նաև Ղարաբաղի բազմաչափաբար ու հերոսական եռոտմ, և հայությունը խաղաղ իր կյանքը կառուցի հարևան բոլոր ժողովուրդների հետ եղբայրական բարի կամեցողության ու անխաթար համագործակցության մեջ: Անգլիացի ժողովրդի խաղաղասիրությունն ու մարդասիրությունը, Կովկասյան փարածաշրջանում նույնպես խաղաղություն հաստատելու պատրաստակամությունը մեր ժողովուրդն այսօր փեսնում է ի դեմս Մեծ Բրիտանիայի ազնիվ դուստր, այս Պալատի արժանավոր անդամ, Տիկին Ջերոլայն Ջոքսի: Երախտագետ հոգով ցանկանում ենք եիշել նաև երկրաշարժի մեծ աղետի ավերների ու վերքերի դարմանման և իր անկախ պետականության վերակերպման ճանապարհին անգլիացի ժողովրդի եղբայրական աջակցությունը մեր ժողովրդին, որի վկայությունն են «Օգնություն Հայաստանին» կազմակերպության աղետյալ շրջանում կառուցած հիվանդանոցն ու Բայրոնի անունը կրող դպրոցը:

Քրիստոնյա մեր ժողովուրդների և բույր Եկեղեցիների եղբայրությունը օրերս իր նոր հավաստումն ունեցավ լոնդոնահայ մեծ բարեգործ Վաչե Մանուկյանի ազնիվ ձեռնարկով՝ առ ի հավերժացումն իր հանգուցյալ հոր բարի անվան ձեռք բերված ու նորոգված հայոց Ս. Եղիշե եկեղեցու օծումով, որը առիթ դարձավ, որպեսզի Մենք մեկ անգամ ևս մեր ժողովրդի երախտագիտությունը փոխանցենք Անգլիո պետությանն ու ժողովրդին:

Մենք աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված ժողովուրդների մեջ գորացնի բարի կամեցողության ու համագործակցության շինարար ոգին և ճշմարտության Իր Հոգու շնորհով արթուն պառի արդարության ու խաղաղության սերը աշխարհում, որպեսզի ոչ մի ժողովուրդ երբեք չկրի իր հոգում ցեղասպանության վիշտն ու վիրավորանքը և ոչ մի հոգում չկառուցվեն երբեք եղեմնի և հույսոստի հուշարձաններ: Ճեղասպանություն տեսած ժողովրդի Հայրապետիս հայցն է առ Աստված, որ անփորձանք ու ա-

պահով պահպանի աշխարհը համայն, ի Բրիտանոս սիրտ մեջ օրհնի Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը և Հայաստանի Հանրապետությունը, մեր ժողովուրդներին և միշտ պահի մեր քույր Եկեղեցիները: Եվ թող Տերը բարության բազմապատկերով արդյունավորի պատասխանարտ Ձեր գործունեությունը՝ հանուն Մեծ Բրիտանիո պետության ու ձեր բարեպաշտ ժողովրդի:

«Ողջ լիքաբ ի Տեր գորացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալք ի Մենջ. ամէն»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՈՆԴՈՆԻ ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

*«Սեղան Զո, Տէր զօրութեանց, հաա-
րով կանգնեցաւ զսա պահեա ի խաղա-
ղութեան...»:*

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Յնծություն է այս պահին մեր հոգիներում, քանզի մի նոր Տաճար Աստծո, հայոց մի նոր եկեղեցի արքայության իր դռներն է բացում մեր առջև՝ աղոթք բարձրացնելու առ Աստված և Տիրոջ օրհնությունը առաքացնելու Անգլիո եկեղեցու հոգում ու անգլիահայ համայնքի կյանքում: Գոհություն Բարձրային, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնական տարում Թեմ-գայի ալիին կատարում ենք օծումն ու բացումը Սուրբ Եղիշեի անունը կրող այս գե-ղեցկազարդ տաճարի՝ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և ի վկայություն, որ թեև աշխարհացրիվ, բայց մեկ ամբողջականություն է կազմում ազգս հայոց՝ իր հավատով, հոգևոր-ազգային արժեքներով:

Այս բերկրաշատ առիթով, սիրելիներ, բերում ենք ձեզ ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը, հայրենաբնակ Մեր զավակների ու համայն հայոց աղոթքն ու շնորհավորանքները:

Սրբի անհուն գոհունակությամբ ողջունում ենք այստեղ ներկայությունը Երուսա-ղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, թեմակալ առաջնորդ Սրբազանների և տարբեր երկրներից ժամանած պատվարժան անձանց, մեր Եկեղեցու հավատավոր զավակներին: Առանձնակի սիրով և ուրախու-թյամբ ողջունում ենք ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայր, Անգլիկան Եկեղեցու Պեպո, Արքեպիսկոպոս Զորջ Ջեյքին, նրան ուղեկից և մյուս քույր Եկեղեցիների հոգևորա-կաններին, պետական իշխանության, դիվանագիտական առաքելության ներկայա-ցուցիչներին. ովքեր Սուրբ Եղիշե հայոց եկեղեցու օծման այս հիշարժան ու նվիրա-կան օրը մեր կողքին են, մեզ ուրախակից ու աղոթակից, քանզի «ունիմք զնոյն հոգի հաւաքոց» (Բ Կորնթ. Դ 13) և նույն առաքելությունը սիրով առ Քրիստոս ու նույն պատասխանատվությունը առ մարդիկ: Արդարև, քրիստոնեական եղբայրության ոգին է թևածում պայծառաշուք և նորածն կամարների ներքո Սուրբ Եղիշե եկեղեցու՝ սաղմոս հնչեցնելով մեր հոգիներում «Զի բարի կամ զի վայելուչ, զի բնական եղբայրք ի միասին» (Սղմ. ՃԼԲ):

Անգլիայում մեկ և կես դարի կենսագրություն ունի հայոց բնմը. Բայց խոր հնություն և ուսանելի ավանդներ ունեն հայ-անգլիական առնչությունները. որ, սկիզբ առնելով վաղ միջնադարից, այսօր առավել ամրապնդվում են մեր երկու պետությունների և քրիստոնեական մեր բույր Եկեղեցիների բարեկամական հարաբերություններով ու համագործակցությամբ:

Միդելի բարեպաշտ հավատացյալներ.

1700 տարիներ առաջ նոր ազատագրված Հայաստանի երկնքում Արևազալ էր քրիստոնեության: Աստվածային օրենությունն էր ցողվում հայոց հողին ու հայտորդյաց հոգիներին: Սուրբ Գրիգոր Լուսավորչի հավատի գործությամբ ի Քրիստոս դարձան ու մկրտվեցին Տրդատ Գ թագավորը, հայոց արքունիքն ու զորքը, ողջ մեր ժողովուրդը: Աշխարհում առաջին անգամ քրիստոնեությունն ստացավ պաշտոնական ճանաչում: Պետականորեն ընդունվեցին ու խրախուսվեցին քրիստոնեական արժեքներն ու չափանիշները: Ձերբազատված շուրջ 250-ամյա հալածանքներից, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիմնած Հայոց Եկեղեցին Ավետարանի լույսով լուսավորեց Արարարի փեշերին տարածված հայ կյանքի բոլոր բնագավառները, Հայության հավատով ու քրիստոնեական արժեքներով շաղախեց հայոց հոգևոր ամբողջականությունը՝ դառնալով գորավիզ ու ապավին ազգային ու պետական իշխանությանը, իսկ փորձությունների դեմ հանդիման՝ հայ հոգու բերդամրոցը անհատը: Այսօր, թոթափած խորհրդային բռնապիտոթյունը, մեր ժողովուրդը միասնական ջանքերով վերստին հաստատել է իր անկախ պետականությունը, ազատագրել Արցախը և վերստին հայացքը հառել հայրենյաց երկնքում ծագող Արդար Արեգակի լույսին: Հայոց համազգային մկրտության 1700-րդ արշալույսն է բացվել ազգային մեր կյանքում, 1700-րդ առավոտը Լույսի: Տիրոջ օրհնյալ կամքով հոգևոր նոր զարթոնք ու վերածնունդ է Մայր Հայրենիքում, քրիստոնեության նոր Արևազալ, որի կենդանարար շողերը լուսավորում ու ջերմացնում են ազգային հայ կյանքը աշխարհասփյուռ:

Այսօր հայոց սփյուռքում հոգևոր արթնության նոր վկայություն է Արբալույս Մյուռնուով օծված Ս. Եղիշե եկեղեցին, որ նորոգվել է ազգային մեծանուն բարեգործներ, փեր և փրկին Վաչե և Թամար Մանուկյանների նվիրավորությամբ՝ ի հիշատակ իրենց սիրեցյալ հոր՝ լուսառեղծ Եղիշե Մանուկյանի: Մենք բազմիցս առիթ և ուրախություն ենք ունեցել Մեր գնահատանքը հայտնելու Հայ Եկեղեցու արժանավոր մեր զավակներին՝ Մանուկյան ամուսիններին, այն եկեղեցեացին ու հայրենաճակեր գործերի համար, որ նրանց նախաձեռնությամբ ու արդար վաստակով կյանք են առել Հայրենիքում և հայոց սփյուռքում: Բայց առանձնակի գործով ու մասնավոր գնահատանքով ենք ուզում նշել Սուրբ Եղիշե եկեղեցու նորոգությունը, որում ներդրված է Մանուկյան ընտանիքի ջերմեռանդ հավատն ու սերը առ Աստված, անմնացորդ ողջ նվիրումը Առաքելական և առաքելագործ Հայ Եկեղեցուն: Երանի եկեղեցի շինողաց, որոնց Աստվածնվիրումը հավատի ակունքներ է բխեցնում բազում այլոց հոգիներում: Աղոթքով եղիշեք, սիրելիներ, երջանկափառալույս մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն

Հայոց Կաթողիկոսին, որին որդիաբար սիրում և մեծարում էր Մանուկյան ընտանիքը: Իրականություն է նրա երազը ու երջանիկ՝ նրա հոգին այս պահին, քանզի Ս. Եղիշն եկեղեցին, շքեղաշուք նորոգյալ, իր դռներն է բացել Անգլիո մեր սիրելի գավա-կաց առջև՝ լուսավորելու և գորացնելու նրանց հավաքն ու կյանքը:

Սուրբ Եղիշն եկեղեցու օծման ու բացման այս նշանակալի առիթով նրախտագի-տության Մեր խոսքն ենք ուղղում Մեծ Բրիտանիայի պետությանը, Անգլիկան Եկե-ղեցուն, որոնց բարյացակամությունը վայելելով հայ համայնքը կառուցում ու զո-րացնում է իր ազգային-եկեղեցական կյանքը: Սիրով և խորին գնահատանքով Հայ-րապետական Մեր օրհնությունն ենք բերում Անգլիո հայոց թեմի բարեջան առաջ-նորդ, Գերաշնորհ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանին, նվիրյալ ու ծառայասեր եկեղեցականներին և Մեծ Բրիտանիայում ապրող մեր ժողովրդի հանուր զավակնե-րին, ինչպես նաև Սուրբ Եղիշն եկեղեցու նորոգությունն իրականացրած բոլոր շինա-րարներին: Մեր գնահատանքն ու օրհնությունը՝ Հայաստանի կամերային երգ-չախմբի անդամներին, որոնց հոգեպարար կատարմամբ այսօր հնչեց Սրբազան Պատարագի երգեցողությունը:

Սիրելիներ, եկեք ի խորոց սրբի մեր աղոթքն ու մաղթանքը բարձրացնենք առ Աստված և հայցենք, որ Տերը հաստատուն ու ծաղկուն պահի Անգլիո հայոց թեմը և պահպանի բարեպաշտ հավատացյալ մեր ժողովրդին, Իր Աջի հովանու ներքո՝ բարձր ու երջանիկ Մանուկյան ընտանիքը և միշտ արթուն բարեգործության ոգին հայորդյաց: Թող Բարձրյալն Աստծո սերը ողորմությամբ իջնի երջանկահիշարակ Եղիշն Մանուկյանի շիրմին և երկնային լույսերի մեջ հավիտենական խաղաղություն պարգևի նրա հոգուն:

Հայցենք Ամենակալ Տիրոջից, որ օրհնի Մեծ Բրիտանիայի թագավորության հնագույն հողը և ծագումով հարազատ, ավանդասիրությամբ նման ու Քրիստոսի լույս հավաքով եղբայր մեր ժողովուրդներին, Հայ ու Անգլիկան Եկեղեցիների և մեր երկու պետությունների բարեկամությունը:

«Շնորք, սէր և խաղաղություն Տեսան մերայ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան. ամէն»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԻՆ՝ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՒԹՈՎ

(15 հուլիսի 2001 թ.)

Միտելի ուխտավոր հայորդիք.

Մեծ ուրախություն է Ամենայն Հայոց Հայրապետիս համար երիտասարդական այս մեծ ուխտագնացության առիթով հանդիպել և խոսք ուղղել ձեզ. որ հույսերով ու երազներով զարդարուն երիտասարդ ձեր հոգիներում և ավյունով լեցուն, ամուր ձևեր ձեռքերում կրում եք հայոց ապագան:

Մայր Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինն այսօր Հայոց համագգային մարտության ու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի սքանչելի խորհրդով իրենց սիրառատ գիրկն են բացել ձեր առջև և համախմբել ձեզ նույն լուսնյա ասոր հողում՝ Հայաստանի մարզերից ու աշխարհի փարբեր երկրներից: Դուք բոլորդ հարազատ որդիքն եք էինավուրց մեր ժողովրդի. որի հիշողությունը մարդկային բաղադրությունների վաղնջական ժամանակները անընդմեջ արարումով կամրջում է 21-րդ դարի նոր այգաբացին: Փոքրաթիվ ժողովրդի մեծ ժառանգության արքան եք դուք, սիրելիներ: Մեր հողը մշակվել ու մարդուն արդյունք է փվել դեմսս քարե գործիքներով և առաջին մեծադե գործիքներով, ոռոգվել է պարտությանը հայտնի հնագույն ջրանցքներով: Ուր որ նայեք, հիշատակներ են. հին ու նոր ժամանակներին ծանոթ անուններ՝ ավանդություններ ու հուշարձաններ: Դուք ժառանգել եք հարուստ լեզու, մարդկային հոգիներն ու փիեզերքի խորքերը քննող բազմազան մշակույթ: Այդ ժառանգության մեջ ամենամեծ գանձը, սիրելիներ, որ սրբորեն պահվել ու այսօր փոխանցվում ու վստահվում է ձեզ, քրիստոնեական մեր հավատն է՝ մեծագույն շնորհը Աստծո, որ իմաստ է փվել մեր ժողովրդի կյանքին, նկարագիր՝ հայ էությանը, ու դարձել մեր գոյության խորհուրդը:

Այսօր դուք կանգնած եք այն սրբազան վայրում, ուր 1700 փարիներ ստաց Աստծո լույսը ճառագեց հայրենի մեր հողին ու երկնքից հորդաբուխ հեղվեց մարդկանց հոգիներում արքայից ու գորավարից մինչ շինական ու զինվոր: Աստծո առատ ողորմությամբ և Սուրբ Լուսավորչի հավատի գործությամբ երկնային օրհնություն իջավ Հայաստան աշխարհին: Դուք գիտեք, որ 301 թ. Հայոց պետությունն ու Եկեղեցին Քրիստոսի կենարար խաչը հաղթականորեն կանգնեցրեցին պարսկական Հայաստանի ողջ փարածքում, և Արարարի ծաղկուն փեշերին ծնունդ առավ աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը: Հիշարժան այդ օրերից նոր առաքելություն ստանձնեց մեր ժողովուրդը՝ ալրելով ու արարելով խաչի լույսը իր հոգում և հարկ

եղած ժամանակ իր կյանքով պաշտպանելով քրիստոնեական հավատը՝ որպես Աստծո հետ կենդանի ու կենդանացնող հաղորդություն:

Այսօր դուք եկել եք համբուրելու սուրբ հողը ազատ մեր Հայրենիքի, այն հողը, որ իջավ Աստված, եկել եք ձեր հողում նորոգելու հայրենյաց ուխտը առ Աստված և նորոգվելու հայ ինքնությամբ:

Ուխտավորի հուսանատը հողով ձեր քայլերը ուղղեք դեպի մեր սրբապնդիները, հպվեք մեր նախնյաց աղոթքի ցերմությունը պահած քարերին հինավուրց եկեղեցիների, վանքերի ու խաչքարերի, զգացեք ձեր արմատները կենսունակ և փառաբանեք Աստծուն նույն սիրով ու հավատարմությամբ, ինչպես զարեր շարունակ մեր հայրերը, պապերն ու նախապապերը: Ծառն արմատով է ամուր և շինությունը՝ իր հիմքով, իսկ մարդու ւրժեքը՝ առ Աստված իր հավատով: Զորացեք հավատով, և թող ամենայն ձեր գործերը հավատով լինեն ու ծառայեն Բարուն, հույսի ու սիրո արգասավորմանը աշխարհում, մեր անկախ ու ազատ Հայրենիքում, աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

Ձեր համահավաք ներկայությամբ երիտասարդացել է այսօր դարավոր մեր Եկեղեցին, լցվել աշխույժով, կյանքի ձեր սիրով, նորոգ հավատով: Ձեր աղոթքներն այսօր միախառնվեցին Սուրբ Լուսավորչի շուրթերից 13 փարի առ Աստված ենցած աղոթքին, որով Հավատի մեր Հայրը աստվածային ամենատաք ողորմությունը և շնորհը հայցեց այս հողին և մահվան գուրի վրա հայոց առաջին Ուխտի Սեղանը կապեց Աստծո հետ: Ձեր քայլերն այսօր նորոգեցին հայոց համագգային ուխտի ճամփան Լսող Վիրապից մինչ Էջմիածին՝ ձերաղբելու Միածնի Էջջի Սուրբ Սեղանին՝ մեզ հետ Արարչի կապած Ուխտի Սեղանին, և հայցելու, որ սքանչելագործ երկնացող Լույսը աննվազ լինի հայոց հողում ու հայորդյաց հոգիներում: Սերունդների հանձնառության, հավատարմության ու պատասխանատվության ոսկե շղթայում այսօր դուք անցկացրեցիք ձեր օղակը, և Մեր աղոթքն է, որ Աստված այնպես գորացնի ձեզ ու հաստատի հարանց մեր հավատի մեջ, որ մեր Եկեղեցու անդաստանը լինի միշտ Տիրոջ կանաչ ու բուրավետ այգի, որ առաքու ու բարի պտուղներ է պարգևում:

Թող Աստված ընդունի սուրբ սրտով, բարի մարքով ու անկեղծավոր հավատով կատարված ձեր ուխտը, և օրհնի ձեր կյանքի ուղին իր շնորհներով ու բարիքներով:

Թող հայոց հավատի լուսավորիչներ Սուրբ Թադեոս ու Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, Սուրբ Գրիգոր Լուսավորիչն ու մեր հողը սրբացրած բոլոր սրբերը բարեխոս լինեն ձեզ համար և համայն մեր ժողովրդի, մեր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու համար այժմ և միշտ և հավիտյանս:

Եվ թող «այնպես լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի Կոստան զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է» (Մատթ. Ե 16) Ամէն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐԲ

Միրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական օրհնությամբ ողջունում և շնորհավորում ենք մեր ժողովրդի զավակներին Սահմանադրության օրվա առիթով:

Հայրությունամբ են լեցուն այսօր մեր հոգիները. քանզի հայրենի մեր հողի վրա իրական է Հայոց անկախ պետությունը՝ դարավոր սրագը մեր նախնյաց: Սահմանադրությունն ազգային մեր պետության վավերագիրն է և գալիքի հանդեպ մեր վստահության երաշխիքներից մեկը:

Մեր աղոթքն է, որ բարձրյալն Աստված անփորձանք պառնայանի Հայաստան և Արցախ մեր աշխարհները, զորակից լինի սրբեղծագործ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի և շնորհագարդի՝ բարօր և օրինաւարդ իր նոր կյանքի շինության ճանապարհին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ա. Էջմիածին.

5 հուլիսի 2001 թ.

ԱՄՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՊԱՍՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲԱՆԱՉԵՎ՝ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ 1700-ԱՄՅԱԿԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՆԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԱՅՅԻ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 2 հունիսի 2001 թ.:

Մայիսի 23-ին Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատը Սենատի սատարմամբ ընդունել է Աջակցության բանաձև՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի և ի պատիվ Միացյալ Նահանգներում այցելությամբ գտնվող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսի:

Բանաձևում մասնավորապես ասվում է.

«Նկատի ունենալով, որ հայ ժողովուրդն ավելի քան 3000 տարի ապրել է իր հայրենիքում և ստեղծել ինքնատիպ բազմապրծություն,

Նկատի ունենալով, որ Տիսուս Քրիստոսի Առաքյալներ Ս. Թադևոսը և Ս. Բարդուղիմեոսը տարածեցին քրիստոնեությունը Հայաստանում և եղան հայոց նոր հավաքի հիմնադիրները,

Նկատի ունենալով, որ մ. թ. 301 թվականին Ս. Գրիգոր Լուսավորիչը քրիստոնյա դարձրեց ողջ Հայաստան աշխարհը, օժվեց Հայաստանի առաջին Կաթողիկոս և մկրտեց ու քրիստոնյա դարձրեց Տրդատ թագավորին,

Նկատի ունենալով, որ մ. թ. 301 թվականին Տրդատ թագավորը քրիստոնեությունը հռչակեց Հայաստանի պետական կրոն՝ Հայաստանը դարձնելով աշխարհում առաջին քրիստոնեական պետությունը,

Նկատի ունենալով, որ Հայ Եկեղեցու առաջնորդները բացեցին դպրոցներ, հոգ տարան եկվանդներին ու կարիքավորներին և ստեղծեցին Հայաստանի և Վրաստանի համար այբուբեններ՝ Ս. Գիրքը մարդկանց մարտչելի և հասանելի դարձնելու համար,

Նկատի ունենալով, որ հայերի նվիրվածությունն Աստծուն ոգեշնչեց նրանց՝ ստեղծել ձևագրերի ծաղկման, նկարազարդման, ճարտարապետական, քանդակագործական և մանածագործական հայկանշական, բնորոշ ոճեր, որոնք ճանաչված են քրիստոնեական արվեստի գլոխգործոցներ և մեծ ներդրում են համաշխարհային արվեստում,

Նկատի ունենալով, որ Հայ Եկեղեցին անցած 17 հարյուրամյակների ընթացքում իր եանդեպ թե՛ թշնամաբար, և թե՛ բարեկամաբար տրամադրված մշակութային միջավայրերում պահպանել է հավատը,

Նկատի ունենալով, որ Հայ Եկեղեցին ակտիվ մասնակցություն է բերում էկումս-նիկ (միջեկեղեցական) կառույցներին և շարժումներին՝ միանալով ողջ աշխարհի քրիստոնեական հարանվանություններին.

Նկատի ունենալով, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանը Միացյալ Նահանգների ողջ տարածքում տոնում են ավելի քան 100 համայնքներ՝ պաշտամունքային և էկումենիկ բնույթի առանձնա-հատուկ արարողություններով.

Նկատի ունենալով, որ 1700-ամյակի տոնակատարության շրջանակներում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը այցելում է Միացյալ Նահանգներ.

Նկատի ունենալով, որ Հայ Եկեղեցին, Կաթոլիկ Եպիսկոպոսների Ազգային Կոն-ֆերանսը և ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհուրդը 1700-ամյակի առիթով եղբայրակցության և բարեկամության էկումենիկ ոգին արտահայտող ուղերձ են ընդունել «Մեր Տիրոջ լույսի ներքո միասնաբար ընթանալիս» թեման, և

Նկատի ունենալով, որ Հայ Եկեղեցին ծխեր է հիմնել Միացյալ Նահանգների ողջ տարածքում և նպաստել այդ ազգի մեջ կրոնական կյանքի բարելավմանը.

Ուստի, այժմ

Ներկայացուցիչների Պալատը, Սենատի աջակցությամբ, ընդունում է բանաձև, որով Մենատը

1. Շնորհավորում է Հայաստանի Հանրապետությանը՝ Հայաստանում քրիստո-նեության ընդունման 1700-ամյա հոբելյանի առիթով.

2. Շնորհավորում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագույն Պապրիարքին և Ամն-նայն Հայոց Կաթողիկոսին, որը այցով գտնվում է Միացյալ Նահանգներում.

3. Միանում է Հայաստանի ժողովրդին, Ամերիկայում գործող Հայ Եկեղեցուն և Նորին Սրբություն Գարեգին Երկրորդին՝ փոնելու իրենց այն իղնալները և արժեքնե-րը, որոնք հոգեհարազատ են նաև Միացյալ Նահանգների ժողովրդին»:

Կոնգրեսի մայիսի 23-ի նիստը սկսվել էր Նորին Սրբության աղոթքով՝ Մենատում և Ներկայացուցիչների պալատում, երբ Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ գտնվում էր Միացյալ Նահանգներում:

Բանաձևի փոքրորդ ստացված է ԱՄՆ Հայոց Արևելյան թեմից և ներկայացվում է հաղորդմամբ:

ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԱՎԱՔ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 5 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հունիսի 1-ից Ծաղկաձորում Կրեդիտ և Կրեդիտային միջակայքի միջոցով՝ Արևելքի և Արևմուտքի վանականների հավաք՝ «Կորած մարգարտի որոնումներում» խորագրով: Հավաքը, որ կշարունակվի մինչև հունիսի 6-ը, նպատակ ունի որոնել Եկեղեցիների միության ուղիները՝ վանական համագործակցության միջոցով:

Այսօր, հունիսի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջակայքի հարաբերությունների բաժնի Կրեդիտ Ս. Եզնիկ եպս. Պետրոսյանի ուղեկցությամբ ժողովի մասնակիցները՝ վանականներ հոգևոր Կաթողիկոս Եկեղեցուց, Կ. Պոլսի Տիեզերական Պապի Կաթողիկոսից, հայկ. Ուղղափառ, Ռուս Ուղղափառ, Հնդկ Մալաբար Եկեղեցիներից, ներկայացուցիչներ Անգլիկան և Գերմանիայի Լյութերական Եկեղեցիներից, այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Հյուրերին ընդունեց ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Ս. Նաժակ արքեպս. Պարսամյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐԴ ՊՈՊԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 6 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնության ԱԳ նախարարությունում մարդու իրավունքների և մարդասիրական օգնության հարցերով դաշնային կառավարության հանձնակատար Գերդ Պոպին՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլկեր Ջայթցի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց հյուրի այցը հայոց հոգևոր կենտրոն, որը փոխում է իր մեծ հոբելանսը՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ հայրապետը պր. Պոպին ներկայացրեց Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայիս գործունեությունը, մանրամասնորեն անդրադարձավ Եկեղեցու իրականացնող սոցիալական ծրագրերին:

Այսպես Նորին Սրբությունը պատասխանեց գերմանացի հյուրին հեղափոխող մի շարք հարցերի՝ անհավանական Եկեղեցի-պետություն հարաբերություններին, մարդու իրա-

վունքներին վերաբերող խնդիրներին: Ի պատասխան այլընտրանքային գինծառայության մասին Գերդ Պոպի հարցումի, Նորին Սրբությունը, ողջունելով այդ գաղափարը, միաժամանակ նշեց, որ այն ընդունելի է միայն խաղաղ պայմաններում. երբ երկիրը գերծ է խաղաղությանը սպառնացող վտանգից: Վերջինիս առիթով Հայոց Հայրապետը միաժամանակ նշեց, որ Եկեղեցին ևս փորձում է իր նպաստը բերել կայուն խաղաղության հաստատման գործին՝ նման մթնոլորտի ձևավորման նպատակով հանդիպումներ ունենալով Ադրբեջանի եղգևոր իշխանության հետ:

ԱՐՄԵՆՏԵԼԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ 10 ՀԱԶԱՐ ԴՈՒԱՐ ՆՎԻՐԱԲԵՐԵՑ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 6 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «ԱրմենՏել» հեռախոսային ընկերության նորանշանակ գլխավոր գործադիր տնօրեն Նիկոս Յորդուսսին, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Գեորգիոս Վասիլակիսին և ՕՏԷ ընկերության գործադիր փոխնախագահ Վասիլիոս Մազարասին:

Հանդիպման ընթացքում հյուրերը Վեհափառ Հայրապետին հանձնեցին 10 հազար դոլարի չեկ՝ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության համար:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ազնիվ ներդրման համար՝ այն ընդունելով իբրև հավաքագյալ հույն ժողովրդի նվեր Հայաստանում քրիստոնեությանը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված սրբազան կառույցին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԻՄՆԱՐԿԵԶԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 հունիսի 2001 թ.:

Հունիսի 7-ի երեկոյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Երևանի հարավ-արևմտյան թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցու հիմնարկների արարողությունը: Օրհնվեց և եկեղեցու հիմքերի մեջ դրվեց 16 սրբազործված հիմնաքար՝ առաքյալների, ավետարանիչների և հայոց հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով:

Եկեղեցին կառուցվում է ազգային բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի մեկենասությամբ: Ճարտարապետն է Բաղդիկ Արզումանյանը: Աղոթարտուր լինելու է եռա-հարկ. արտաքինից՝ Զվարթնոց տաճարի նմանությամբ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿԵՑ ԼՈՆԴՈՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը մեկնեց Լոնդոն՝ կատարելու Ս. Եղիշ հայկական եկեղեցու օծումը:

1870 թ. կառուցված նախկին անգլիկան Ս. Պետրոս եկեղեցին հայ համայնքի համար ձեռք էր բերվել դեռևս երջանկափառապետ Գարեգին Ա-ի կաթողիկոսության շրջանում՝ հայ եկեղեցու մեծ բարերար Վաչե Մանուկյանի շնորհիվ: Ամբողջական վերանորոգումից հետո եկեղեցին վերանվանվել է Ս. Եղիշ: Եկեղեցու օծումը տեղի կունենա հունիսի 10-ին:

Նորին Սրբությունը Մայր Աթոռ կվերադառնա հունիսի 14-ին:



ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. « ԱՅՍ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՆՈԳԵՎՈՐ ՄԵՐ ՆԱՅՐԵՐԸ ԿԵՐՏԵԼ ԵՆ ՆԱՅ ԵՎ ՌՈՒՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ »

ՌՈՒՄԱՅԱՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԽՈՍՆԱԿՆ ԱՅՏԵԼԵՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 8 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելեց Ռուսաստանի Հանրության Պետական Դոմայի խոսնակ Գենադի Սելեզնյովը՝ ՆԱ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց խոսնակի այցը հայոց հոգևոր կենտրոն, ուր դարեր շարունակ Հայ Եկեղեցու հոգևոր հայրերը կերպել են հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը: Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց, որ այսօր էլ երկու անկախ պետությունները շարունակում են զարգացնել ջերմ ու եղբայրական հարաբերությունները՝ ի շահ երկու ժողովուրդների և երկրների: Այս առիթով նշվեց նաև, որ Մայր Աթոռի և Ռուս Ռադափառ Եկեղեցու միջև շարունակում են եղբայրական կապերը:

Վերջինիս վկայականն են կաթողիկոսության կարճապես շրջանում Նորին Սրբության և Ռուս Ռադափառ Եկեղեցու հոգևոր պետ Ալեքսի Պապրիպրեցի միջև պեղի ունեցած բազմաթիվ հանդիպումները, որոնցից յուրաքանչյուրն, ինչպես նշեց Հայոց Հայրապետը, առավել ամրացնում և հաստատում է ջերմ սերն ու եղբայրությունը:

Պրն Սելեզնյովն իր հերթին շնորհակալություն հայտնելով հանդիպման համար ուրախություն հայտնեց, որ շուրջ չորս տարվա ընդմիջումից հետո վերադառնալով Երևան և այն ստոր և հնաբույր վայրում, որն այսօր պտնում է 1700-ամյա իր մեծ հորեկանը: ՌԴ Պետդոմայի խոսնակը շնորհակալությամբ անդրադարձավ նաև երկու ժողովուրդների դարավոր կապերի ամրապնդմանն ուղղված Հայ Եկեղեցու դերին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունն իր հայրապետական օրհնությունը փոխեց պատվարժան հյուրին՝ մաղթելով հաջողություններ օրինաստեղծ գործում:

ՆՈՒՆԻՍԻ 16-ԻՆ ՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏՈՆՈՒՄ Է Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵՆՆ Ի ՎԻՐԱՊԵՆ, ՆՈՒՆԻՍԻ 17-ԻՆ՝ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԵՐԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկարկության համակարգ, 15 հունիսի 2001 թ.:

Ինչպես վկայում է ավանդությունը, Նոիփսիմյան և Գալանյան կույսերի նախա-
րակությունից հետո, շուրջ 13-ամյա բանարկությունից ազատ է արձակվում Ս.
Գրիգոր Լուսավորիչը, որ կոչված էր դառնալու Նայոց Մեծ դարձի ռաիվիրան և ա-
ռաքին Նայրապետը:

Նունիսի 16-ին՝ *էյն ի Վիրասպեն* փոխին. Խոր Վիրապում և Մայր Աթոռ Ս. Էջմի-
ածնում կմալուցվի Պարարագ: Նույն օրը 1700-ամյակի Երիտասարդական ուխ-
տագնացության գրասենյակի 200 անդամներ ուխտի կմկենեն Խոր Վիրապ, որոնք,
շարունակելով իրենց ուխտը, հաջորդ օրը ուղքով կհասնեն Մայր Աթոռ Ս. Էջմիա-
ծին:

Տոնի առիթով, հավարտ երեկոյան ժամերգության, Վեհարանի հանդիսություն-
ների դահլիճում Վեհափառ Նայրապետի կողմից կազմակերպված է նաև ընդունե-
լություն, որին հրավիրված են Նայաստանում հավաքարմագրված դիվանագետներ,
կյուրեր:

Ի նշանավորումն փոնի և Նայաստանում քրիստոնեությունը պետական կրոն
հռչակելու 1700-ամյա հորեկյանի, Նայաստանի նկարիչների միության ցուցասրա-
հում կրացվի հայ նկարիչների գործերի ցուցահանդես:

Նունիսի 17-ին Նայ Եկեղեցին նշում է *Կութողիկն Ս. Էջմիածնի* փոնը՝ Ս.
Գրիգոր Լուսավորչի փեսիլլիով Ս. Էջմիածնի հիմնադրման փոնը:

Խոր Վիրապից դուրս գալուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը փեսնում է նշանա-
վոր փեսիլլը, ուր, Միածինը, ողողված հրաշափառ լույսով, իջնում է երկնքից և ոսկե
ուռով զարկում Սանդարամսի գեփնափոր մեհյանին՝ ցույց տալով այն փեղը, ուր
պետք է կառուցվեր հայոց ս. հավաքչի փաճարը: Ս. Գրիգոր Լուսավորիչն իր փե-
սիլլը պարմում է հայոց Տրդատ թագավորին, որի արքայական հովանավորությամբ
կառուցվում է Ս. Աստվածածնին նվիրված Մայր Տաճարը:

Նունիսի 17-ը Գրիգոր Լուսավորչի փեսիլլի հիշարակության փոնն է, իբրև Զրիս-
տոսի Եկեղեցու և մասնավորապես Նայոց Եկեղեցու փոն:

Տոնի օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կմալուցվի Ս. Պարարագ: Նավարտ Ս.
Պարարագի Մայր Տաճարում կկատարվի Մաղթանք Ս. Էջմիածնի:

Երեկոյան Մայր Աթոռում տոնը կշարունակվի 70 երիտասարդների մկրտության արարողութայնը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՄՆԵՅ ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 15 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռ.Ղ. Պետրոս-մայի պարգամավոր, Ապրանքարտադրողների միջազգային միության նախագահ Նիկոլայ Ռիժկովին և նրա գլխավորած պատվիրակությանը, որն այս օրերին մասնակցում է Երևանում բացված Ապրանքարտադրողների միջազգային համաժողովին:

Նորին Սրբությունը ջերմորեն ողջունեց հյուրերին՝ նշելով, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս չափազանց բարձր է գնահատում հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

«Մենք կապված ենք բարեկամական ամենասերտ կապերով, և ոչինչ չի կարող խաթարել այդ բարեկամությունը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ Հայ Եկեղեցին ևս առանձնահատուկ տեղ է հատկացնում հայ-ռուսական կապերի գորացմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց պրն Ռիժկովին և պատվիրակության անդամներին՝ Հայաստանում նմանատիպ համաժողով կազմակերպելու նախաձեռնության համար, համոզմամբ, որ երկու ժողովուրդների միջև առկա զիտական, տնտեսական և նմանօրինակ բոլոր տեսակի կապերը նաև հոգևոր միասնության և կապի արդյունք են:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Ռիժկովը նշեց, որ համաժողովը Երևանում կազմակերպելու համար կարևոր աօիթ է հանդիսացել Հայ Եկեղեցու 1700-ամյա մեծ հոբելյանը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 16 հունիսի 2001 թ.:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Ս.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, փնդի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի մեկօրյա նիստ: Տևրուական աղոթքից և Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքից հետո ընթերցվեց նախորդ նիստի արևնագրությունը: Ապա ԳՎՍ-ը անցավ օրակարգային հարցերի քննարկմանը՝ առնչված Հայ Եկեղեցու ներքին կազմակերպական խնդիրներին:

Օրակարգի զլխավոր հարցերից էր Հայաստանում քրիստոնեությունը պեպական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված սեպտեմբերի 20-24-ը կայանալիք հիմնական միջոցառումների կազմակերպումը, որի մասին գեկուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

ԳՎՍ-ը քննարկեց նաև Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմում ստեղծված կացությունը՝ ի հետևանս Ղազարոս Կյուրեղյանի (թեմի նախկին առաջնորդի) դավապարտելի գործողությունների:

Ժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետի ԱՄՆ և Կանադա կարարած հովվապետական այցի վերաբերյալ իրենց տպավորությունները կիսեցին ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը և հովվապետական այցի ընթացքում Նորին Սրբությանը ուղեկցող Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ Հայոց Հայրապետի այցը գնահատելով որպես ամերիկահայ համայնքի համար բացառիկ խանդավառության և հոգեկան մխիթարության առիթ:

ԳՎՍ-ի նիստը արենապետում էին ժողովին ներկա ԳՎՍ-ի ավագագույն անդամները՝ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԸ»

ԿԱԹՈՂԻԿՈՍ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկալուծության համակարգ, 18 հունիսի 2001 թ.:

Կիրակի, հունիսի 17-ին, Հայ Առաքելական Եկեղեցին պոռնեց Կաթողիկե Ս. Էջմիածնի պոռնը՝ ի հիշարակ Ս. Գրիգոր Լուսավորչի պոնսիլով Ս. Էջմիածնի հիմնադրման:

Նախորդ օրը, երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցական մեծաշուք թափորով Վեհարանից առաջնորդվեց Մայր Տաճար՝ հավարտ երեկոյան ժամերգության ազդարարելով Ս. Էջմիածնի պոռնը: Հանդիսավոր ժամերգությանը ներկա էին նաև Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա ղեկավարներ, ղեկավանագետներ, որոնք մասնակիցը եղան նաև Հայ Եկեղեցու նվիրական պոռնի առիթով Վեհարանում հրավիրված ընդունելությանը:

Կեսցիճերին Մայր Տաճարում, առաջին անգամ լինելով, մարտցվեց Հայրապետական Պատարագ: Մրբազան այս արարողությունը, որ Վեհափառ Հայրապետը կոչեց Ուխտի Պատարագ, այսուհետ կդառնա ավանդույթ՝ նվիրված Ս. Էջմիածնի պոռնին:

Հունիսի 17-ի առավոտյան բազմամարդ էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ս. Պատարագին մասնակցելու էին եկել բազմաթիվ օտարերկրյա հյուրեր, ներկայացուցիչներ Անգլիկան Եկեղեցուց՝ Մանչեսթրի եպիսկոպոսի գլխավորությամբ, ուխտագնացների բազմաթիվ խմբեր՝ Հայաստանից և սփյուռքից, հավատացյալներ:

Պատարագիչն էր Եզիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Պատարագի ընթացքում, անդրադառնալով օրվա խորհրդին, Նորին Սրբությունը Հայրապետական իր պարգամը հաղորդեց ներկաներին:

«Ցնծագին հոգով մենք պոռնախմբում ենք հիշարակները հավատակերտ այն օրերի. երբ նորադարձ մեր նախնիները, Սուրբ Լուսավորչի ձեռքով Արածանիի ջրերում ի Քրիստոս մկրտված, 1700 արիներ առաջ հիմքերը դրեցին և հավատով կանգնեցրին Էջեի Տաճարը Միածին Որդու ու հավատով կոչեցին այն Սուրբ Էջմիածին», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ լցելով, որ Ս. Էջմիածինն է եղել ու մնում հայության կյանքի շաղախը, իբրև հավարի կենտրոն ու Սրբություն Սրբոց:

«Առաքելություն է Սուրբ Էջմիածինը, ինչպես բնորոշել են մեր Հայրապետները. խավարից ղեպի յույս, մահվանից ղեպի կյանք առաջնորդող առաքելություն», -

շարունակելով քարոզը՝ ասաց Վեհափառ Հայրապետը, մաղթելով ներկաներին հավատ, սեր և միություն:

Հավարդ Ս. Պապարագի Իջման Ս. Սեդակի առջև կատարվեց Մաղթանք Ս. Էջմիածնի:

Տոնը շարունակվեց Վեհարանի դահլիճում, ուր Ամենայն Հայոց Հայրապետն ու բոլոր երկրսերը ունկնդիր եղան հայաստանյան բոլոր թեմերից թեմակալ առաջնորդների հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած հարյուրավոր մանուկների երգին ու արտասանությանը:

Երեկոյան Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի Երիտասարդական ուխտագնացության գրասենյակի կողմից կազմակերպված Խոր Վիրապ - Ս. Էջմիածին ուխտագնացությանը մասնակից երիտասարդների մկրտության արարողություն: Դեռ նախորդ օրն սկսված ուխտագնացության 200 մասնակիցները ուղբով էին անցել Խոր Վիրապ - Ս. Էջմիածին ճանապարհը: Նրանցից դեռ մկրտություն չստացած շուրջ 70 երիտասարդներ սրբալույս մյուռոնի դրոշմով դարձան Հայ Առաքելական Ս. Եկեղեցու անդամներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 18 հունիսի 2001 թ.:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Խուան Կառլոս Սանչես Առնաուն: Ողջունելով նորանշանակ դեսպանի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն, Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Ս. Էջմիածնի օրհնությունը ուղեկից կլինի դեսպանի առաքելությանը:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ հայ-արգենտինական սերտ կապերին՝ նշելով, որ Արգենտինան էր առաջին այն պետությունը, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հայոց Հայրապետը միաժամանակ իր երախտագիտությունը հայտնեց Արգենտինայի կառավարությանը՝ արգենտինառայ համայնքի հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի համար:

«Արգենտինայի հայ համայնքի ներկայությունը զեղեցիկ կամուրջ է մեր ժողովուրդների միջև», - համոզմունք հայտնեց Վեհափառ Հայրապետը:

Իր հերթին պրն դեսպանը փոխանցեց Արգենտինայի ժողովրդի սերն ու գնահատանքը հանդեպ հայ ժողովրդի և մասնավորապես արգենտինառայ համայնքի, որը,

դեպքանի խոսքով, առանձնառում է իր ազգային հայրությունը, ազգային արժեքների նկատմամբ հոգածությամբ և աշխարհելու բացառիկ կամքով:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելությամբ Վեհափառ Հայրապետին իր հարգանքը մատուցեց ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան մասնաճյուղի նորանշանակ ներկայացուցիչ Լյուդ Դեյքինը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայրենց փախստականների հոգսը թեթևացնելուն ուղղված ՄԱԿ-ի ջանքերին՝ համոզմամբ, որ այն իր նպատակն է բերում նաև հայ-ադրբեջանական հակամարտության հարթեցմանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 18 հունիսի 2001 թ.:

Կիրակի, հունիսի 17-ին, Կաթողիկե Ս. Էջմիածնի պոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց ԱՄՆ Արևելյան թեմի շուրջ 150 ուխտավորներին:

Ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի, ամերիկահայ ուխտագնացներն իրենց ուղևորությունն սկսել էին պատմական Հայաստանի սրբավայրերից՝ ուխտագնացության վերջին հանգրվան ունենալով Մայր Հայրենիքն ու հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Վեհափառ Հայրապետն ընդունելով ուխտագնացների խմբին՝ ունկնդիր եղավ նրանց մտածումներին, ապա օրվա խորհրդով իր պատգամն ու օրհնությունը հաղորդեց նրանց: Հայոց Հայրապետի հորդորն էր՝ մշտապես ամուր ու կենդանի պահել հայրերի հավատքը, սեփական հոգում կառուցել հավատքի եկեղեցի, որի շնորհիվ միայն կարելի է շենացնել ու վերականգնել կորցրածն ու ավերվածը:

Հանդիպման ավարտին ուխտագնացները Վեհափառ Հայրապետին դիմեցին իրենց հուզող հարցերով՝ Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան կյանքի, Հայ Եկեղեցու և քույր Եկեղեցիների, ինչպես նաև Ս. Էջմիածնի և նվիրապետական Աթոռների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Նույն օրը ուխտագնացները ներկա եղան Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին և ևս մեկ անգամ առիթ ունեցան լսելու Վեհափառ Հայրապետի քարոզն ու պատգամը:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ նաև Հայաստանում բրիտոններությանը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով արտասահմանից Մայր Աթոռ ժամանած օպար և սփյուռքահայ հյուրերի ու ուխտագնացների հետ: Նրանց թվում էին Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչները՝ Մանչեստրի եպիսկոպոսի գլխավորությամբ, Գերմանիայի Ս. Պողոս աստվածաբանական ակադեմիայի ժեկտոր Պատրիկ Նոֆը և դասախոսներ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Լոնդոնի մասնաճյուղի բարերարները, Ֆրեզնոյի պետական համալսարանի հայագիտական ամբիոնի ուսանողները՝ պրոֆեսոր Պարույր Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԶՈՐԱՅՐԵՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՎ ԶՈՐԱՅԵՔ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՎ»

**ՎԵՀՄՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻՆ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 27 հունիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ԱՄՆ արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի երիտասարդ մասնագետների խմբին:

Սա ամերիկահայ երիտասարդ մասնագետների 6-րդ խումբն է, որ ՀՕՖ-ի նախաձեռնությամբ այցելում է Հայաստան՝ հերթափոխում հայաստանցի գործընկերների հետ համագործակցություն սկսելու նպատակով:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փալով երիտասարդներին՝ նշեց, որ նման այցելությունները փոխադարձաբար կարևոր և էական են ինչպես իրենց պատմությանը, անցյալին ու ինքնությանը հաղորդակցվող սփյուռքահայերի, այնպես էլ հայաստանցիների համար, որոնք կտրիք ունեն սփյուռքահայ եղբայրների գորակցությանը:

«Զորացրեք Հայրենիքը և գորացեք Մայր Հայրենիքով»,- ասաց Նորին Սրբությունը:

Ավելի քան մեկժամյա հանդիպման ընթացքում երիտասարդները առիթ ունեցան իրենց ենտաքրքրող հարցերը փալու Վեհափառ Հայրապետին և իրենց ուրա-

խաթմանը կիսելու մայիսին Նորին Սրբության ԱՄՆ կաթարած հովվապետական
այցի կապակցությամբ:

ԿԱՏԻՑԱ ՉԵԿԱԼՈՎԻՉԸ ՆՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 27 հունիսի 2001
թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց Հայաստանում
ՄԱԿ-ի գրասենյակի համակարգող, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցիչ
Կապիցա Չեկալովիչին:

Տիկ. Չեկալովիչը, որն ավարտում է իր առաքելությունը Հայաստանում, իր հար-
գանքը մատուցելով Հայոց Հայրապետին, կարևոր համարեց Եկեղեցու դերը երկրի և
ժողովրդի կյանքում:

Ինչպես ասվեց իսկապես ընթացքում, Հայաստանի զարգացմանն ուղղված
ծրագրերում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը համագործակցում էր նաև Մայր
Աթոռ Ս. Էջմիածնում գործող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստա-
նի Կոորդինատոր և ECLOF գրասենյակների հետ:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց տիկ. Չեկալովիչին՝ Հայաստա-
նին և հայ ժողովրդին մատուցած կարևոր ծառայության համար, և նշեց, որ ՄԱԿ-ի
ներկայությունը մշտապես նկատելի է երկրի բոլոր շրջաններում: Վեհափառ Հայ-
րապետն ընդգծեց նաև, որ չափազանց տալիս է մայիսին Նյու Յորքում ՄԱԿ-
ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի հետ ունեցած իր հանդիպումից:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՅ ՎԱԼԵՆՏԻՆ ԼԵԲԵԴԵՎԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 28 հունիսի 2001
թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց ռուս տիեզերա-
գնաց, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վալենտին
Լեբեդևին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրին, իր հարգանքն ու գնահատանքն արտա-
հայտեց բոլոր այն մարդկանց հանդեպ, ովքեր նվաճեցին տիեզերքում, քանզի տիեզեր-

քի նվաճմամբ և փինգերագիտության զարգացմամբ մարդկությունն արձանագրել է մեծագույն ձեռքբերումներ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ փինգերագիտության զարգացումն իր հետքն է թողել նաև աստվածաբանական գիտելիքների զարգացման վրա:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ «ԱԳՈՅԻ ԽՄԲԻ» ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 3 հուլիսի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի նախարարների խորհրդի վերահսկման «Ագոյի խմբի» ղեկավարներին Իգալիայի Հանրապետության դեսպան Պիեռոտ Ագոյի գլխավորությամբ:

Ավելի քան մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում արծարծվեցին խղճի ազատությանը և համապատասխան օրենքներին, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, մահապատժի վերացման խնդրին առնչվող հարցեր:

Նորին Սրբությունը ուրախությամբ նշեց, որ անկախության հաստատումից ի վեր Հայաստանն ընթանում է ժողովրդավարության ուղիով, և միաժամանակ փաստեց այն դժվարությունները, որոնց հանդիպում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր գործունեության ընթացքում դեռևս անկախար օրենսդրական դաշտի հետևանքով: Մասնավորապես Վեհափառ Հայրապետն իր մտախոհությունը հայտնեց Հայաստան ներթափանցած զանազան աղանդների առնչությամբ, որոնք անհարիր են հայ ժողովրդի հոգևոր կերտվածքին և ավանդույթներին:

Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ օրենսդրական դաշտի մշակման հետևանքով իրավականորեն կհստակեցվի Հայ Առաքելական Եկեղեցու դերը հասարակական արդի կյանքում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԲԱՐԵՐԱՐ ԳԵՐՆԱՐԴ ՄԱՅՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 4 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց գերմանացի հոս-մանիստ և բարերար Գերհարդ Մայերին:

Գերմանացի մեծ բարերարը Սպիտակի երկրաշարժից ի վեր բազմաթիվ բարե-գործական ծրագրեր է իրականացրել Հայաստանում. օժանդակել «Սպիտակ» փոր-կարարական ֆոկարի ստեղծմանը:

Հանդիպման ընթացքում պրն Մայերը Վեհափառ Հայրապետին պատմեց բարե-գործական իր նոր ձեռնարկների մասին, որոնք իրականացնելու է հայաստանցի ծների համար:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց պրն Մայերին՝ նշելով, որ գերմա-նական բարի կամեցողությանը ծանոթ է դեռևս Գերմանիայում անցկացրած հոգևոր ծառայության տարիներին:

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՆԻՏԱՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 5 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոնրենալի քա-ղաքացի Պիեռ Բուրգին և նրա գլխավորած պարզիրականը, որ Հայաստան է ժամանել Երևանի քաղաքացիների հետ «Բարեկամության» համաձայնագիր կնքելու նպատակով:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, իր ուրախությունը հայտնեց եր-կու քաղաքների միջև հաստատված ջերմ հարաբերությունների համար՝ իբրև լավա-գույն ապացույց հայ-կանադական բարեկամության, որի զորացման գործում իր նպաստն ունի նաև կանադահայ համայնքը:

Նորին Սրբությունը ջերմորեն հիշատակեց նաև մայիսին կատարած եովվապե-տական իր անդրանիկ այցը Կանադա, որի ընթացքում արդեն իսկ առիթ է ունեցել հաղորդակցվելու պրն Բուրգի հետ՝ պեսնելով նրա մեջ ազնիվ քրիստոնյայի և մեծ հայասների:

Պրն Բուրգը, իր սերն ու համակրանքն արտահայտելով հայ ժողովրդի հանդեպ, նշեց, որ հայերը վեհության և հպարտության բազում օրինակներ են տվել մաքա-

որմաներով չի իրենց պարտության ընթացքում: Նա նշեց նաև, որ Հայաստան կապարած այցը նոր լիցք է հաղորդում իրեն՝ մղելով նորանոր գործերի՝ ի շահ հայ-կանադական բարեկամության, որ առավել կամրապնդվի առաջիկա օրերին Հայաստանում Կանադայի դեսպանատան բացմամբ:

Հանդիպման ավարտին պրն Բուրգը խնդրեց Ամենայն Հայոց Հայրապետի օրինությունը՝ նույնբերին կայանալիք Մոնրեալի քաղաքապետի նոր ընտրություններում հաջողության հասնելու համար:

«Ձեր հավարքը երաշխիքն է ձեր հաղթանակի»,- Հայրապետական աչք ղենելով պրն Բուրգի գլխին՝ հաջողություն մաղթեց Վեհափառ Հայրապետը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ ԱԼԵՔՍԻ Բ ՊԵՏՐԻԱՐԹԻՆ՝ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՆՔՆԱԹԻՈՒ ՎԹԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 5 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, տեղեկանալով Իրկուսկում տեղի ունեցած ինքնաթիռի վթարի մասին, ցավակցական հեռագիր է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պապրիարք Ալեքսի Երկրորդին:

«Սրբի խոր ցավով տեղեկացանք ռուսական ինքնաթիռի վթարի մասին:

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Գերագույն Հոգևոր Խորհրդի և ողջ միաբանության Մեր խորին վշտակցությունն ենք բերում Ձերդ Սրբությանը, հանգուցյալների սգացող բոլոր հարազատներին:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ ամենողորմ Տերը գթառապ իր սիրով մխիթարություն պարգևի Ձեզ, հանգուցյալների հարազատներին ու բարեկամներին: Թող Աստված երկնային հավիտենական հարկերում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալների հոգիները:

Թող Տերը Ձերդ Սրբությանը հոգևոր ամրություն պարգևի Ձեր ծանր Հովվապետական ծառայության մեջ»,- ասված է Վեհափառ Հայրապետի ուղերձում:

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՓՈԽԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկարկության համակարգ, 6 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի փոխարքեպոսկոպոս Գրիգորիոս Նիտարիսին՝ Հայաստանում Հունաստանի արքեպիսկոպոս և լիագոր դեսպան Պանայոտիս Զոգրաֆոսի ուղեկցությամբ:

Պրն Նիտարիսը նշեց, որ մեծ պատիվ և ուրախություն է այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որն այս պարի պտնում է Հայաստանում բրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանը: Ինչպես նշեց պրն Նիտարիսը, Հայ Եկեղեցու հոբելյանը պտնում է նաև հույն ժողովուրդը: Առաջիկայում Հունաստանի փոստային ծառայությունը շրջանառության մեջ կդնի 1700-ամյակին նվիրված դրոշմանիշեր:

Նորին Սրբությունը, ողջունելով պատվավոր հյուրին, զոհունակությամբ նշեց, որ Հայաստանի անկախացումից հետո հայ-հունական բարեկամական կապերն ամրապնդվում են արդեն պետական մակարդակով, ինչը նպաստում է երկու երկրների գորակցմանը: Հայոց Հայրապետը ուրախություն հայտնեց նաև 1700-ամյա տոնակատարություններին հույն ժողովրդի մասնակցության համար:

Մեծ հոբելյանի առիթով նախադեսվում է Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարքի այցը Ս. Էջմիածին: Պրն Նիտարիսը հույն ուղղափառների և հունահայ համայնքի համար կարևոր նկատեց երկու հոգևոր պետերի ներկայությունը Երևանում Ս. Ռաֆայել հունական եկեղեցու հիմնաքարի տեղադրման արարողությանը, որի կառուցումը ֆինանսավորելու է հունահայ համայնքը:

ՎԵՆԱՓԱՌ-ՆԱՅՐԱԴԵՏՆ ԱՅՅԵԼԵՑ ՊՐՈԿՏՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻՎԱՆԴԱՆՈՅԸ ԿԳՈՐԾԻ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

Մայր Աթոս Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 6 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Երևանի Նագաբովի անվան պոեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ:

Մեկ տարի առաջ ինստիտուտը սեփականաշնորհվել էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը: Վերջերս Բարեգործական միությունը ինստիտուտը նվիրաբերեց Մայր Աթոս Ս. Էջմիածնի տնօրինությանը, որի շնորհիվ այն դարձավ առաջին հիվանդանոցը ՄԴՀ տարածքում, որ գործելու է Եկեղեցու բարեխնամ հովանու ներքո:

Ինստիտուտի գլխավոր տնօրեն Գագիկ Ստամբուլցյանը Վեհափառ Հայրապետին մանրամասնորեն ներկայացրեց հիվանդանոցի ներկայիս վիճակը և բուժսպասարկման ուղղությունները: Պրն Ստամբուլցյանի հաղորդմամբ, սեփականաշնորհումից հետո ինստիտուտը վերածել է բազմապրոֆիլ վիրաբուժական կլինիկայի: Նիվանդանոցի 11 բաժանմունքներում ստացիոնար բուժում կարող է ստանալ ավելի քան 130 հիվանդ: Բուժսպասարկումը իրականացվելու է ինչպես վճարովի, այնպես էլ պետապարկների հիմունքներով: Ներագայում նախատեսվում է նաև սպեղծել հարուկ ֆունդ անվճար բուժսպասարկումը ընդլայնելու նպատակով:

Նիվանդանոցի տնօրենի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը եղավ նաև հիվանդանոցի տարբեր բաժանմունքներում ու հիվանդասենյակներում, հայրապետական իր օրհնությունը փվեց հիվանդներին:

ԱՂԱՎՆԱԶՈՐՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ. 9 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց հաթադիկոսը մեկնեց Մյուլնյաց թեմ օծելու Աղավնաձոր գյուղի նորակառույց Ս. Աստվածածին մատուռը:

Գյուղի հին մատուռը ավերվել էր խորհրդային անաստվածության փորիններին, և 2000-ից ավելի բնակչություն ունեցող Աղավնաձորն արդեն փաստաթղթեր չարտադրելու չուներ իր աղոթատեղի: Հայրենի գյուղում նոր մատուռի կառուցումը նախաձեռնել էր այժմ մոսկվաբնակ Մուրադ Սարգսյանը՝ ի նշան համագյուղացիների խաղաղության և բարեկեցության: Ս. Աստվածածնի հիմնարկները 2000 թ. փետրվարին կատարվել էր ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Աբրահամ նալս. Մկրտչյանի:

Գյուղի բարձունքում վեր հասնած սպիտակաքար մատուռի գմբեթը նկատելի էր դեռ հեռվից: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել թեմի հոգևորականաց դասը՝ Տ. Աբրահամ նալս. Մկրտչյանի գլխավորությամբ, Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Սրբալույս մյուռնուկ նախ օծվեց մատուռի գմբեթին բարձրացված խաչը. որի համար վերամբարձ կռուսկի միջոցով դեպի գմբեթ բարձրացան թեմակալ առաջնորդը և Տ. Փառեն նալս. Ավերիքյանը: Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ աղոթքի և շարականների երգեցողությամբ կատարվեց նաև մատուռի խորանին փեղադրված խաչքարի օծումը:

«Այսօր Ս. Աստվածածնի կառուցմամբ ձեր առջև բացվեց առ Աստված փանդ ճանապարհը: Մնում է, որ բանուկ պահեք այդ ճանապարհը», - այս մաղթանքով իր օրհնությունը փակեց աղավնաձորցիներին Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով հավատարիմ լինել Տիրոջ պարգամներին, որի շնորհիվ միայն կարելի է ունենալ շեն ու բարձր կյանք:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայրենաց արև Սարգսյանին, ում շնորհիվ կառուցվում է նաև Մոսկվայի հայոց եկեղեցին: Վեհափառ Հայրապետի գնահատանքին արժանացան նաև մատուռի ճարտարապետ Սարգիս Գուրգադյանն ու բոլոր շինարարները:

Օծման արարողությունից հետո փեղի ունեցավ փոնախմբություն, որի ընթացքում ներկաներին շնորհավորանքի խոսքեր ասացին մատուռի բացման առիթով Աղավնաձոր ժամանած ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Մյուլնյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ նալս. Մկրտչյանը, Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, Առաստափանի հայերի միության անունից՝ Սեդա Վերմիշևան, և ուրիշներ:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄՆԵՐ ՆԱԶՆԱԿԵՑԻՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՃԱԿՈՒՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

ՃԱԿՈՒՏԵՏԸ ՏՎԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ 10 ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբաշխության համակարգ, 13 հուլիսի 2000 թ.:

Հուլիսի 12-ին Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետում տեղի ունեցավ ավարտական դիպլոմների հանձնման հանդիսությունը: 4-րդ կուրսի 38 շրջանավարտներ, որ ներկայացնում են ֆակուլտետի երրորդ սերունդը, արժանացան բակալավրի կոչման: Առաջին անգամ մագիստրոսի պատվավոր կոչման արժանացավ 10 շրջանավարտ: Դիպլոմներ ստացած երիտասարդներն իրենց գիտելիքները կենդանեց կրթական համակարգում:

Շրջանավարտներին շնորհավորեց և ավարտական վկայականներ հանձնեց ֆակուլտետի ղեկան Ս. Շահին արքեպիսկոպոսը՝ վստահությամբ, որ բարի սերմերը անպայման պտղաբերելու են՝ դառնալով եկեղեցանվեր գործեր:

Շահին Սրբազանի ղեկավարությամբ ֆակուլտետի ուսանողները ստանում են կրոնագիտական և աստվածաբանական խորը գիտելիքներ: Հաստատության վեցամյա գործունեության ընթացքում այսպիսի դասախոսել են նաև մասնագետներ՝ հրավիրված Սորբոնի, Քենթրեբրիի, Վենետիկի, Հռոմի և այլ հեղինակավոր համալսարաններից: Կրթական այդ հաստատությունների հետ ստեղծված բարեկամական կապերի շնորհիվ վերջին շրջանում հնարավոր է դարձել կազմակերպել նաև առավել խոստովնալից սաների ուսումնառությունը եվրոպական մի շարք երկրներում:

Ավարտական հանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, մտավորականներ, դասախոսներ, որոնք, բարձր գնահատելով ֆակուլտետի կրթական մակարդակը, նշեցին, որ հավասար է յուրաքանչյուր աշխարհային արդյունավորման երաշխիքը:

Օրը նշանավոր էր նաև նրանով, որ ֆակուլտետը նշում էր Ս. Շահին արքեպիսկոպոսի ծննդյան 75-ամյակը, որն առավել հանդիսավոր կնշվի սեպտեմբերին: Ուսանողներն իրենց ջերմ շնորհավորանքները հղեցին սիրելի հոգևորականին, որ հսկայական ներդրում ունի Աստվածաբանության ֆակուլտետի ստեղծման և կայացման գործում: Ընթերցվեցին նաև հարվածներ Սրբազան Հոր աշխատություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկարկության համակարգ, 16 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար հռչաթույլա Հասան Ռոհանու գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Ռուբեն Շուգարյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն ու իրանցի էյտորը անդրադարձան կրոնի կարևոր դերին և միջկրոնական հարաբերությունների անհրաժեշտությանը՝ իբրև անհեղքելի գործոն ժողովուրդների և պետությունների միջև խաղաղության, սիրո և փոխադարձ հարգանքի ձևավորման համար:

«Ուրախ ենք, որ այսօր իսպառ վերացել է անհանդուրժողականության ոգին և երկխոսություն է տիրում կրոնների միջև», - ասաց Նորին Սրբությունը: Հայոց Հայրապետն իր ուրախությունն արտահայտեց նաև հայ և իրանցի հարևան ժողովուրդների միջև հաստատված բարեկամության և ամուր կապերի համար՝ նշելով, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս ինքը ևս իր նպաստը կբերի այդ հարաբերությունների գորացմանը:

Հայ և իրանցի ժողովուրդների բարեկամության մասին փաստեց նաև հռչաթույլա Հասան Ռոհանին՝ վկայակոչելով այն կրոնական ու քաղաքական ազատությունները, որ ունեն Իրանում բնակվող հայերը: Հռչաթույլան միաժամանակ իր ուրախությունը հայտնեց Երևանում Կապույտ մզկիթի գործունեության առիթով:

ՎԵՏԱՓԱՌ-ՆԱՅԻՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՖԱՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբաժնի համակարգ, 16 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանգրվան գտավ արդեն վեց օր շարունակվող երիտասարդական մեծ ուխտագնացությունը՝ նվիրված Հայաստանում բրիտանոնությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Հուլիսի 10-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ազդարարելով երիտասարդական ուխտագնացության սկիզբը՝ շուրջ 2000 երիտասարդներ Հայաստանի և սփյուռքի թեմերից այս օրերի ընթացքում այցելեցին Հայաստանի փարբեր շրջաններ, եղան բազմաթիվ սրբավայրերում Աշտարակի Կոթմարավոր, Ս. Մարինե, Մուղ-նու Ս. Գևորգ, Հաղարծինի և այլ եկեղեցիներում, Գեղարդի վանքում:

Ուխտագնացության բարձրակետը հուլիսի 14-16-ը հոր Վիրապ - Ս. Էջմիածին-Երեսն «մեծ եռօրյան» է: Հուլիսի 14-ին հազարավոր երիտասարդներ հավաքվեցին հոր Վիրապում: Կեսգիշերին նվիրական այս սրբավայրից սկսված ուխտավորների գիշերային երթի առաջին կանգամը Էջմիածնի Ս. Հռիփսիմ վանքն էր: Այսպես, երթը երիտասարդ ուխտավորներն ուղղվեցին դեպի Մայր Տաճար, որի գլխավոր դարսլառի մոտից հոգևորականաց դասի ուղեկցությամբ և շարականների երգեցողությամբ ատաղնորդվեցին դեպի Տրդատյա կամար, որ հազարավոր ուխտավորներին ողջունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Դեռ աղջանուղջ էր, երբ ուխտագնացները լուսաբացը դիմավորեցին Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարված Արևազալի ժամերգությունը:

«Այսօր դուք եկել եք համբուրելու սուրբ հողը ազատ մեր Հայրենիքի, այն հողը, որ իջավ Աստված, եկել եք ձեր հոգում նորոգելու հայրենյաց ուխտը առ Աստված և նորոգվելու հայ ինքնությամբ», - ուխտագնացներին ողջունեց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը ուխտագնացները ներկա եղան Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին. նրանցից շատերը ստացան հաղորդություն: Պատարագիցն էր 1700-ամյակի գրասենյակի վարիչ-փնթրեն, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերպերյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի ներկաները ևս մեկ անգամ առիթ ունեցան ունկընդ-րելու Վեհափառ Հայրապետի պարագամը:

«Ուխտավորի հուսառար հոգով ձեր քայլերն ուղղեք դեպի մեր սրբաբեղիկները. հավերժ մեր նախնյաց աղոթքի ջերմությունը պառհած քարերին հինավուրց եկեղեցիների, վանքերի, խաչքարերի ու դամբարանների, զգացեք ձեր արմատները կենսունակ և փառաբանեք Աստծուն նույն սիրով ու հավատարմությամբ, Հայության հա-

վալրի նույն վստահությամբ, ինչպես դարեր շարունակ մեր հայրերը. պապերն ու նախապապերը».- պատգամեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց 1700-ամյակի գրասենյակի վա-րիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս, Տերությունն էլ 1700-ամյակի երիտասարդա-կան ուխտագնացության գրասենյակի պատասխանատուներին ու բոլոր նրանց, ում նախանձախնդիր աշխատանքի շնորհիվ կազմակերպվեց աննախադեպ այս ուխ-տագնացությունը: Այն կշարունակվի մինչև հուլիսի 19-ը, որի ընթացքում ուխ-տագնացները կլինեն նաև Կեչառիսում, Շիրակի սրբավայրերում և անկրկնելի Նո-րավանքում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՎ ԱԲԴ ԱԼ-ԿԱԴԵՐ ԿԱԴՐՈՒՐԱՅԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբովության համակարգ, 18 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Արա-բական Հանրապետության Ժողովրդական Ժողովի նախագահ Աբդ Ալ-Կադեր Կադդուրային և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեճափառ Հայրապետը, ողջունելով պատվարժան հյուրին, իր ուրախությունը հայտնեց երկու երկրների ժողովուրդների միջև առկա բարեկամական սերտ կապե-րի առնչությամբ՝ նշելով, որ դրանք առավել զորանում և զործնական բնույթ են ստա-նում շնորհիվ նմանադիպ փոխայցելությունների:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև այս փարի Հայոց Ցեղասպանության հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին Դեր Զոր կապարած իր ուխտագնացությանը: Այս առիթով Հայոց Հայրապետն իր երախտիքը հայտնեց Սիրիայի ժողովրդին ու իշ-խանությանը, որ դարասկզբին եղբայրական սիրով ապաստան տվեց հայ գաղթա-կանությանը և այսօր էլ նույն զգացումներն է տածում արդեն հզոր սիրիահայ հա-մայնքի նկատմամբ:

Սիրիայի խորհրդարանի նախագահը ևս, հավաստելով երկու ժողովուրդների բարեկամության մասին, նշեց, որ սիրիահայերը հավատարիմ գավակներն են իր երկրի, որոնք կարևոր դեր ունեն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Օգրվելով առիթից, Ամենայն Հայոց Հայրապետը միջնորդեց, որ Սիրիայի իշ-խանությունների արքունությամբ Դամասկոսի հայ համայնքը հնարավորություն ստանա ներհամայնքային ընդդրություններ կազմակերպել:

Նանդիպման ընթացքում մտահոգություն հայտնվեց նաև տարածաշրջանում առկա խնդիրների առկայությամբ:

«Նավարում ենք, որ նոր 1000-ամյակը աշխարհի ժողովուրդների համար դառնալու է խաղաղության դարաշրջան, որին կարելի է հասնել սիրո, հավատքի և արդարության ճանապարհով»,- համոզմունք հայտնեց Վեհափառ Նալբանդյանը:

ՆՈՒՆԻՍԻ 22-ԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ Է

**Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ՏԵՂԵ ԿՈՒՆԵՆԱ ՍՄԵԿԱՎԱԳԱԿԱՆ
ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբերության համակարգ, 20 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 22-ին Նալբանդյան Առաքելական Եկեղեցին տոնելու է Քրիստոսի Պայծառակերպության Վարդավառի տոնը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և հայոց մյուս եկեղեցիներում կմատուցվի Ս. Պատարագ:

Քրիստոսի Պայծառակերպությունը Նալ Առաքելական Եկեղեցու հինգ Տաղավար տոներից է և խորհրդանշում է Քրիստոսի լուսավոր կերպարանքով երևալը Պետրոս, Նովիանոս և Նակոբոս առաքյալներին, մի իրողություն, որն, ըստ ավանդության, տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա:

Քրիստոսի Պայծառակերպության մասին վկայում են Մաթթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիչները:

Նալ Եկեղեցում Քրիստոսի Պայծառակերպությունը տոնվում է Չափիկից 98 օր հետո, որ կարող է հանդիպել հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում: Նալբանդյան Եկեղեցում տոնը կոչվում է նաև Այլակերպության տոն կամ Վարդավառ: Վերջինս հին հայկական տոնի անունից է, որի հետ է կապվում նաև միմյանց վրա ջուր ցողելու սովորույթը:

Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթին մեծելոց է:

* * *

Պայծառակերպության տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում երեքացս Ս. պատարագի տեղի կունենա սարկավագական ծեռնադրություն: Չեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեսրոբ եպս. Չուլջանի Նալ Եկեղեցու նոր սպասավորներ կծեռնա-

ղըրվեն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի այս փարվա 8 շրջանավարտներ, որոնք արդեն հանձնել են սարկավագական քննությունները:

ՀԱՌՄԻ ՊԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԺԱՄԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 21 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի և հայաստանի հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով, սեպտեմբերի 25-ին հայաստանի կաթողիկոսի հոգևոր Սրբազան Զահանայապետ Հովհաննես Պողոս II-ը՝ քրիստոնեությունը հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված պոնակավարությունների կապակցությամբ:

Սրբազան Զահանայապետը կիջևանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, կայցելի Ծիծեռնակաբերդ, Երևանի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Խոր Վիրապ, Սուրբ Պատարագ կմապուցի Մայր Աթոռի Բաց Խորանին, հանդիպում կունենա ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ:

Սրբազան Զահանայապետը սեպտեմբերի 27-ին կվերադառնա հոգևոր Խոր Վիրապից իր հետ փանելով Ս. Գրիգոր Լուսավորչի Կանթեղի Լույսը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱԴՐԵՏ ԻԼՅԱ ԿԼԵԲԱՆՈՎԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 21 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ փոխվարչապետ Էլյա Կլեբանովին, որ հայաստան է ժամանել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցը նախապատրաստելու նպատակով:

«Մեծ գոհունակություն ենք ապրում, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո ջերմությամբ շարունակվում և զորանում են կապերը անկախ մեր պետությունների միջև», - ռեզյունելով պարվարժան հյուրին, ասաց Վեհափառ հայրապետը:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց Ռուսաստանի Նախագահի՝ հայաստան կատարելիք առաջիկա այցելության առիթով, 1700-ամյակի պոնակավար-

ություններին գրեթե զուգադիպող այդ այցը գնահատելով որպես իրական երաջխիք հայ-ռուսական դարավոր բարեկամության:

ՌԴ վտխվարչապետ Կլեբանովի գեահատմամբ, 1700 փարի առաջ բրիտպոնետությունը Հայաստանում պետական կրոն հռչակելի բացառիկ ներդրում էր համաշխարհային քաղաքակրթության զանձարանում:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաև, որ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև օրավոր զարգացող եղբայրական կապերը օգնում են համապեղ դիմակայել երկու Եկեղեցիների համար գրեթե նույնական փորձություններին:

ԶԱՐԵՆՑԱՎԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆՔԱՄ ՂԱՂԱՋԵՑԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԵՐ

ՕՍՎԵՑ ԶԱՐԵՆՑԱՎԱՐՈՒ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբովության համակարգ, 23 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ օծվեց Զարենցավանի Նորակառույց Ս. Փրկիչ եկեղեցին: Խորհրդային փարիներին հիմնված քաղաքում առաջին անգամ դղղանքեցին եկեղեցու զանգերը, Ս. Փրկիչ եկեղեցում մատուցվեց առաջին Պատարագը:

Նորակառույց բազիլիկ փիպի եկեղեցին, որի եիմնարկեքը փեղի էր ունեցել ընդամենը երկու փարի առաջ, կառուցվել է կանադաեայ բարերարներ փեր և փիկին Ժիրայր և Հիկ Դերիշյանների մեկենաաաությամբ: Երեք կամարակապ 13 մեփրանոց թօիչքներով մասնաափած եկեղեցու ընդարձակ սրաեոում եկեղեցական արարողությունների կարող է մասնակցել շուրջ 400 հավատաղայ: Ճարարաապետ Հակոբ Բաբախանյանի մրաեղաղմամբ, սրաեին համակցված է զանգակաաունը, որի աջ և ձախ կողմերում մոմավաաության սրաեներն են: Վերին հարկում պատշգամբն է նախարեափած երգչախմբի համար:

Զարենցավանի մատույցներում Վեհափաա Հայրապետին և նրան ուղեկից շքախմբին դիմավորեցին Կոփայեի թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Առաքել եպա. Քառամյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայաղուիչներն ու չարենցավանցիների հոծ բաղմությունը: Վեհափաա Հայրապետի զալստյան և եկեղեցու օծման մասին էին աղղարաարում փողոցներում կախված պասաաառները:

Եկեղեցու օծման արարողությունը սկսվել էր դեռ նախորդ օրը, ձեռամբ թեմակալ առաջնորդի և մասնակցությամբ Հոգեշնորհ Հայրերի օծվել էին եկեղեցու 16 սյունե-

րը, մկրտության Ս. Ավագանը: Օծվել և գմբեթին էր տեղադրվել զանգակատան խաչը:

Հուլիսի 21-ին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց եկեղեցու Սուրբ Սեդանի օծման կարգը. օծվեցին Սուրբ Սեդանի չորս մասերն ու խորանի Տիրամոր պարկերը: Վեհափառ Հայրապետի հետ Ս. Սեդանի օծմանը մասնակցում էին նաև բարձրատիճան հոգևորականներ՝ Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերեմբյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Փառեն եպո. Ավերիքյանը:

Հավարտ օծման արարողության Վեհափառ Հայրապետը օրհնության, շնորհավորանքի ու գնահատանքի խոսքեր ուղղեց եկեղեցու բարերարներին, թեմակալ առաջնորդին, ճարտարապետին ու շինարարներին և բոլոր չարենցավանցիներին:

«Մենք գիտենք, թե ողբում եք ճանապարհի անցնող այս փողոցների ընթացքին Չարենցավանի մեր հավատավոր զավակաց հոգիններից ներս: Մենք գիտենք, թե ողբում եք ճանապարհի անցնող այս փողոցներից ներս: Բայց այսօր, տեսնելով ուրքի կանգնած Չարենցավանը, փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված և մեր գնահատանքը բերում ձեզ, որ դուք, հակառակ այդ ամենի, պահել եք մեր հավատարմությունը մեր հայրենի՝ սրբազան հավատքին, պահել եք մեր հավատարմությունը մեր Փրկչին, մեր Տիրոջ՝ Դսոս Զրիստոսին», - շնորհավորելով չարենցավանցիներին երկար սպասված եկեղեցու կառուցման առիթով, ասաց Նորին Սրբությունը:

Տունը շարունակվեց եկեղեցու բակում, կիրակնօրյա դպրոցի սաների պարուստարած հանդիսությամբ:

Հանդիսության ընթացքում Չարենցավանի քաղաքապետը, ի նշան երախտագիտության, եկեղեցու բարերարներին նվիրեց հողատարածք Չարենցավան քաղաքում, իսկ թեմակալ առաջնորդին շնորհվեց չարենցավանի պարավաճող քաղաքացու կոչում:

Չարենցավանցիների տոնին իրենց մասնակցությունն էին բերել նաև 1700-ամյակի պետական ինքնակառավարման փոխնախագահ Խոսրով Հարությունյանը, ԱԺ պարզամավորներ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՆԴԻՍԱԳԵՏՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐՈԳՎԱԾ ՇԵՆՔԻ ԲԱՅՈՒՄԸ

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԶՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ
ՆԱՆԶՆԵՅ ԲԱՐԵՐԱՐԻՆ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 24 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ փնդի ունեցավ Երևանի Քանաքեռ թաղամասում Ս. Հակոբ եկեղեցու հարևանությամբ գտնվող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մանրանկարչության արվեստի դպրոցի նորոգված շենքի բացման հանդիսավոր արարողությունը:

Շենքի նորոգման աշխատանքների հովանավորությունը Կանաղայի հայոց թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպս. Տերտերյանի հորդորով մեկ տարի առաջ ստանձնել էր կանաղահայ բարերար Իշխան Բիսեճին, որին և, ի գնահատություն ազգանվեր ու եկեղեցանվեր գործի, Ամենայն Հայոց Հայրապետը շնորհեց Հայ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը:

19-րդ դարի միառարկ այս կառույցը՝ Ս. Հակոբ եկեղեցու նախկին դպրանոցը, վերադարձվել էր Եկեղեցուն Հայաստանի անկախացումից հետո միայն: Այսօրեղ 1992 թվականին Նորին Սրբության՝ այն ժամանակ Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի նախաձեռնությամբ և ջանքերով հիմնվեց մանրանկարչության արվեստի դպրոցը: Հայտույաց փնների համակարգում գործող դպրոցում արդեն 9 տարի հայ մանրանկարչական արվեստի նմություններին են ծանոթանում 5-17 տարեկան երեխաներ ու պատանիներ: Դպրոցի ավելի քան 70 սաները 5-ամյա ուսումնառության տարիների ընթացքում ուսանում են մանրանկարչություն, գունանկար, գծանկար, ծանոթանում արվեստի պատմությանը՝ ստանալով նաև կրթական գիտելիքներ:

Հանդիսավոր արարողության ընթացքում Նորին Սրբությունը շնորհավորանքի և գնահատանքի խոսքեր ուղղեց բարերարին և Հովնան Սրբազանին, դպրոցի ուսուցիչներին ու սաներին: Ներկաներին շնորհավորեցին նաև Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպս. Կռոյանը, Ս. Հովնան արքեպս. Տերտերյանը, Ս. Էջմիածնի Հայոց պատվազ փնների հոգևոր փնսուչ Ս. Թորգոմ արեղա Տոնիկյանը՝ վստահությամբ, որ իր փնսակի մեջ եզակի այս դպրոցի

սաները կլինեն շարունակողը հայ բազմադարյան մանրանկարչական արվեստի՝ մնայուն նոր արժեքներ թողնելով հոգևոր արվեստի գանձարանում:

ԿՎԵՐԱՆԱՅՎԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՐԵՎԵԼԱՏՈՐՆԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարության համակարգ, 25 հուլիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը արդի արևելահայերեն Աստվածաշնչի մատչելի և կարարյալ բնագիր ունենալու նպատակով Հայաստանի Աստվածաշնչյան ընկերությանը հանձնարարել է վերանայել 1994 թ. հրապարակված Ս. Գրքի արևելահայերեն վերջին թարգմանությունը:

Շուրջ քսան տարի առաջ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի օրհնությամբ այդ թարգմանությանը ձեռնամուխ էր եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Վերջին հարյուրամյակում լինելով միակ արևելահայերեն թարգմանությունը՝ այն չէր կարող անթերի և կատարյալ լինել:

Վերանայման աշխատանքները իրականացնելու են Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը և վերապատվելի Մանվել Զինբաշյանը (որպես խորհրդատու): Վերանայման խմբի աշխատանքը հանձնվելու է Ամենայն Հայոց Հայրապետին՝ առ ի փնտրիություն:

Նախաբեմվում է, որ վերանայված հրապարակության Նոր Կտակարանի մասը պատրաստ կլինի 2002 թվականին:

ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԵՅԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկավարական համակարգ, 27 հուլիսի 2001 թ.:

Այսօր, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատվով Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսի հայոց Պատրիարք, Ամենապատվով Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ Նորին Սրբության հետ ըննարկելու քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին և Հայ Եկեղեցու ընթացիկ կյանքին վերաբերող հարցեր:

Առավոտյան Վեհարանում Վեհափառ Հայրապետը եանդիպում ունեցավ Պատրիարքների հետ:

Կեսօրից հետո Նորին Սրբությունը և Պատրիարք Հայրերն այցելեցին Շրեանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղից և մեկնեցին Բյուրական՝ Ամենայն Հայոց Հայրապետի ամառանոց:

ԵՂԵԳԻՍ ԳԵՏԻ ԱՓԻՆ ՄԿՐՏՎԵՅԻՆ ՇՈՒՐՋ 1500 ՀԱՅՈՐՔԻՆԵՐ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 25 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 24-ին Սյունյաց թեմում, հերմոնավանքին մոտ, Եղեգիս գետի ափին, Կոնդի ունեցավ հավաքական մկրտություն: Ձեռամբ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների, Արմավիրի, Արագածոտնի, Սյունյաց և Վիրահայոց թեմերի քահանաների, մկրտվեցին շուրջ 1500 մանուկներ ու Կարեցներ՝ Վայոց Ձորից և նրա շրջակա բնակավայրերից: Մկրտվողների թվում էին նաև թեմապատկան «Սիրանույշ» ճամբարում իրենց ամառային հանգիստն անցկացնող ջավախքի բազմաթիվ մանուկներ: Զրիսպոնեությունը Հայաստանում պեղական կրոն հռչակելու 1700-ամյակի շրջանակներում իրականացվող սրբազան այս արարողությանն իր օրհնությունն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մեծ էր խանդավառությունը, և մկրտվածների թիվը հարյուրներով գերազանցեց նախադեսված թվին: Մկրտության ավագանը Եղեգիս գետն էր, որի ափերը զարդարված էին սրբապատկերներով, խաչվառներով ու հայոց պատմական թագավորությունների դրոշներով: Մկրտվողների կնքահայրերը դարձան հայոց բանակի զինվորները՝ վկայելով, ինչպես նկատեց Մեսրոպ Սրբազանը, որ իրենք ոչ միայն հայրենի հողի ու հարազատ ժողովրդի, այլ նաև իրենց դարավոր հավատի պաշտպաններն են:

Հավաքական մկրտությունները Սյունյաց թեմում կշարունակվեն հուլիսի 27-ին և 28-ին Գորիսի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տաթևի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիներում: Իր չափերով աննախադեպ հավաքական այս մկրտությունները նախաձեռնել են 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովը և Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Արարողությունների հովանավորն է ամերիկահայ Վարդգես Մարգարյանը:

ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբովության համակարգ, 30 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 27-ին և 28-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սյունյաց թեմում կրկին րեղի ունեցան հավաքական մկրտություններ: Օրեր առաջ, հուլիսի 24-ին, Հերմոնավանքին մոտ Էղեգիս գետի ափին Հայ Եկեղեցու անդամներ դարձան շուրջ 1500 հայերդիներ: Հաջորդ այս օրերին Գորիսի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տաթևի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիներում Ս. Մեսրոպ արքեպս. Աջնյանի և թեմի բարեխնամ առաջնորդ Ս. Աբրահամ եպս. Մկրտչյանի հանդիսապետությամբ մկրտվեցին շուրջ 700 մանուկներ՝ Գորիսի ու Տաթևի շրջակա բնակավայրերից: Երեխաների կնքանայության պատասխանաբովությունը կրկին ստանձնել էին հայոց բանակի զինվորները:

Սրբազան այս արարողություններին իրենց մասնակցությունը բերեցին բազմաթիվ հոգևորականներ: Ամենուրեք հավաքական մկրտություններն ուղեկցվում էին ժողովրդական մեծ տոնախմբություններով:

Հիշարժան էր Տաթևի վանքում մկրտության արարողությունից առաջ րեղի ունեցած խորհրդանշական արարողությունը: Այդ օրը Սրբազան Հայրերի օրհնությամբ «Արամազդ» լեռնագնացների ակումբի անդամները 1700 սմ երկարությամբ և 301 սմ լայնությամբ մի խաչ բարձրացրին ու զետեղեցին մտրակա սարի գագաթին:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շրջանակներում իրականացվող եռօրյա սրբազան արարողությունները նախաձեռնել էին 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովը և Ս. Մեսրոպ արքեպս. Աջնյանը: Արարողությունների հովանավորն էր ամերիկահայ Վարդգես Մարգարյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԶՆԵՐԻ ՀԵՏ ԱՅՑԵԼԵՑ ԳՅՈՒՄՐԻ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկաբովության համակարգ, 31 հուլիսի 2001 թ.:

Հուլիսի 30-ին Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց Պարրիարք, Ամենապատիվ Ս. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսի

հայոց Պապրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մուրաֆյանը այցելեցին Գյումրի:

Վեհափառ Հայրապետին և հայոց երկու պապրիարքությունների գահակալներին դիմավորեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Միքայել ձ. վրդ. Ա-ջապախյանը: Նորին Սրբությունն ու Պապրիարք Հայրերը եղան Գյումրիի առաջնորդարանում, որպեսզի նրանց ողջունեցին թեմի հովանու ներքո գործող փարբեր խմբակների սաները:

Վեհափառ Հայրապետը և Պապրիարքները, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանի ողբեկցությամբ, այցելեցին նաև քաղաքի նորակառույց Անի թաղամասում կառուցվող Ս. Հակոբ եկեղեցի, ծանոթացան շինարարական աշխատանքներին: Այս եկեղեցու հիմնարկները կապարվել է ուղիղ մեկ փարի առաջ՝ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն ու Պապրիարքները եղան Աջոցքում, այցելեցին Կաթողիկ Եկեղեցու հիմնաձ Տիրամայր Նարեկ հիվանդանոց:

Երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Պապրիարք Հայրերը վերադարձան Բյուրական՝ շարունակելու խորհրդակցությունները Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի պոնակապարտություններին և Հայ Եկեղեցու ընթացիկ կյանքին առնչվող հարցերի վերաբերյալ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՈՒ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԱՐՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկարվության համակարգ, 1 օգոստոսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրբաթ օրը, հուլիսի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց Երուսաղեմի հայոց Պապրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և Կ. Պոլսո հայոց Պապրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին:

Վեհափառ Հայրապետը և Սրբազան Պապրիարքները հուլիսի 28-30-ը Բյուրականի հայրապետական ամառանոցում անցկացրեցին խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին 1700-ամյակի պոնակական հանդիսությունների կազմակերպմանը, այդ առիթով Մայր Աթոռ հրավիրված քույր Եկեղեցիների պետերի ընդունե-

լությանը, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներքին կյանքին վերաբերող մի շարք հարցեր:

Կարևորվեց 1700-ամյա հոբելյանը մեր ժողովրդի հոգևոր կյանքի ու Հայ Եկեղեցու վերանորոգության և նրա առաքելության լիարժեք իրականացման առիթ դարձնելու անհրաժեշտությունը:

Առանձնական խորհրդակցություններից հետո, հուլիս 31-ի երեկոյան, Բյուրականի հայրապետական ամառանոցում, Նորին Սրբության բարձր նախագահությամբ, Սրբազան Պապրիարքները հանդիպեցին Գերագույն Հոգևոր հորհրդի անդամների, Մայր Աթոռի եպիսկոպոսների և թեմակալ վարդապետների հետ:

Խորհրդակցություններն անցան արդյունավետ և մեկ անգամ ևս հաստատեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռների միջև եղբայրության ու համագործակցության ռզին:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ ԴՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ԴՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՍ ԹԵՄՆ,
ՈՐ Ի ԴՈՒՄԻՆԻԱ**

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեծաւ ուրախութեամբ Հայրապետական Մեր օրհնութիւններն ու սրբաբոլի շնորհաւորանքներն ենք յղում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսեանին, հոգեւոր դասին, թեմական եւ համայնքային վարչութեանց պատուարժան անդամներին եւ բարեպաշտ ռումինահայութեանը՝ Ռումինիայի հայոց թեմի հիմնադրւման 600-ամեակի առիթով:

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ զօրացնում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ աշխարհասփիռ մեր զաւակներին առաջնորդելու Աստուածնաւորութեան ճշմարիտ արաւիկներով:

Առաասիկ, սիրելիք Մեր, Մայր Եկեղեցին աստուածչնորի իր առաքելութիւնը արդեն 600 փարիներ փառքով իրականացնում է նաեւ Ռումինիայի օրինակ հողում Լուսաւորեցեան անմար կանթեղի լոյսից ճառագող նորոգիչ եւ կենսապարգեւ զօրութեամբ ջերմացնելով հոգիները բարեպաշտ հայութեան՝ Աստուած սիրելու եւ առ Աստուած ընթացքն իրենց անսայթաք պահելու: Ռումինիայի երբեմնի հայաշատ կենտրոններում բազում զոհողութիւններ յանձն առան մեր նախնիք՝ ջանք ու նսանդ չխնայելով յանուն ռումինահայութեան ազգային-եկեղեցական կեանքի զօրացման:

Տիրոջ կամքով Մենք ստիճ ունեցել ենք լինելու Ռումինիայում եւ հոգու բերկրանք ու խնդութիւն ապրելու, որ հայաշունչ գաղութը, թեւ թուով քիցքրացած, շարունակում է բարեյաջող կազմակերպել համայնքային իր կեանքը եւ Գերաշնորհ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիրոսեանի բարեխնամ առաջնորդութեամբ վառ պահել հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան ոգին: Ուրախալի էր Մեզ համար տեսնել Ռումինիայի պետութեան բարձրաստիճան ղեկավարների եւ հաւատարմոր ժողովրդի հարգանքն ու վստահութիւնը՝ հանդէպ ռումինահայ գաղութը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ հայոց աստուածպարգեւ Հայրենիքի հանդէպ ռումինահայութեան անսակարկ ու բոլորակողմ սէրն էր իր հոգում կրում Երջանկալիշարակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ շուրջ բաժառուն փարիներ Բարձրեալի զօրակցութեամբ հովիտց հաւատարմ հայութեանը եւ իր կենդանի գործերով ու վառ տեսիլքներով անգնահատելի ներդրում բերեց Հայրենիքի, Մայր Եկեղեցու եւ սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեանը:

Սիրելիք Մեր, դարասկզբի եւ հազարամեակի առաջին այս փարում ազգովին փոխախմբում ենք Հայոց Մեծ Դարձի՝ քրիստոնէութիւնը Հայաստանում պեղական կրօն հռչակելու 1700-ամեայ յօբելանը: Տարին Ձեզ համար նշանաւորուած է նաեւ Տիրախնամ Ձեր թեմի եիմնադրման 600-ամեակով:

Հայոց Հայրապետիս պատգամն ու կոչն է Ձեզ, որ բազմապարկէք Ձեր ջանքերը՝ այս կրկնակ յօբելանները Տիրախնամ Ձեր թեմում դարձելու հոգեւոր նորոգութեան եւ ազգային միասնականութեան ամրապնդման առիթ: Ամուր մնացէք Ձեր հաւատքի մեջ, հաւատարուն՝ Հայրենիքի ու Մայր Եկեղեցու հանդէպ Ձեր սիրոյ մէջ:

Աղօթենք եւ գործենք հանուն մեր Եկեղեցու պայծառութեան, Հայրենիքի զօրացման եւ աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան, որպէսզի բացումը նոր հազարամեակը ազգային մեր կեանքում լեցուն լինի երկնապարգեւ շնորհներով ու օրհնութիւններով:

Մաղթում ենք ի սրբել, որ Աստուած խաղաղ երկնքի ներքոյ անշրջելի առաջընթաց ու բարգաւաճում պարգեւի Ռումինիայի պետութեանն ու ստեղծագործ ժողովրդին եւ անվրդով պառի Ռումինիայի ծայրոց Տիրախսամ թեմը՝ քաջատոգութիւն եւ գործոց յաջողութիւններ պարգեւելով թեմակալ բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանին, իոզեմոր դասին, թեմական ու համայնքային խորհուրդների պատուարժան անդամներին ու բարեպաշտ բոլոր հաւաքացեալներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալք ի Մենջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Յուլիսի

Յամի Տեան 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 58

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՆԱԿՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԸԼԸՆՃՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆ ԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱԲՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՅԱԿՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԸԼԸՆՃԵԱՆ,
ՈՐ Ի ՄՕՆԹԻՎԻԴԷՕ**

Գոհությւն եւ փառք Բարձրեալին, որ Ամենագոր Իր Աջի հովանու ներքոյ հաս-
տատարուն ու պայծառ է Նայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ հայոց
համազգային մկրտութեան 1700-ամեակի լուսելէն խորհրդով նորոգ ու յուսառատ օ-
րեր է ապրում 21-րդ դարամտօրին: Փառք Երկեաւորին, որ Իր Ամենառար ողորմու-
թեամբ աշխարհասփիւս մեր զաւակաց կեանքում չեն պակասում սակաւ ընկրեալ
քաջ հովիւները, ովքեր որպէս «ծառայ բարի ու հաւաքարիւմ», նախանձայոյզ ու փո-
թաջան առաջնորդում են իրենց վստահուած հօգը առ Աստուած հաւաքի անսայ-
թաք արահեպներով:

Սիրելի Արքազան. 2001 տօնական այս տարում լրանում է քանանայական Ձեր
ծառայութեան 25-ամեակը: Այսօր Մենք բերկրութեամբ ենք յիշում հանդիսատար այն
օրը, երբ Սուրբ Մեղանի առջեւ առաջնորդելով՝ երաշխատրեցինք Ձեզ որպէս ըստ
ամենայնի արժանաւորի:

Ձեր յոբելեանի ուրախ առիթով Մեր բարձր գնահատանքը եւ Նայրապեղական
օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարազատ ու հաւատա-
րիւմ զաւակիդ՝ առ հոգեւոր կոչումն ունեցած նուիրումի ու նախանձախնդրութեան եւ
ծառայութեան վաստակի համար:

Տիրոջ Մեղանի բարի ու քաջեռանդ սպասաւորիդ պարտաւստականութեանն ու
կարողութիւններին, հայրենապաշտ ոգուն ծանօթ ենք դեռեւս Նոգեւոր Ճեմարանում
ուսանելու, այնուհետեւ՝ Գերմանիայում Մեր հովտութեան շրջանից: Անելի քան փա-
սը տարիներ Ձեր անսակարկ սպասաւորութեան արգասիքներն օրհնութիւն են Ու-
րուգուայի հաւաքատար հայորդեաց համար, որոնց անկեղծ յարգանքին, վստահութե-
անն ու սիրուն էք արժանացել Ձեր առաջնորդութեան ընթացքում:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած բոլորանուէր Ձեր ծառայութեան բարձրը գնահատանքով եւ յորախորթին Ուրուգուայի հայոց թեմի ու բարեպաշտ ուրուգուահայոց, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒՄ:

Միտելի Սրբազան, վստահ ենք, որ նոր ներշնչումով Դուք շարունակելու էք Ձեր կորովաշատ ու նուիրեալ սպասաւորութիւնը բարեպաշտ մեր ժողովրդին ու Առաքելական Մայր Եկեղեցուն:

Թող Տէրը օրինի Ձեզ քաջատոգչութեամբ ու երկնառաք շնորհների առաւորութեամբ՝ նոր ու անշրջելի յաջողութիւններ պարգեւելով հոգեւոր բարձր պապաստանաւորութեան մէջ:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն ու ծաղկուն պաշտպանի Ուրուգուայի հայոց թեմը՝ ի փառս Իր Անուան եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տնամն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԾ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Յուլիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 57

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳՐՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՐ ԵՐԳԱՏԱՆ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ
«Ս. ՄԱՏԱԿ - Ս. ՄԵՍՈՊ» ՀԶԱՆԾԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՅՏԵԱՎ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՅԻՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՄԻՐԶՈՅԵԱՆ**

Փառք Բարձրեալին, որ հայոց համագգային մկրտութեան եւ հայաստանում քրիստոնէութիւնը պեղական կրօն հռչակման 1700-ամեակի փօնազարդ տարում համայն մեր ժողովուրդը բազում առիթներ ունեցաւ նշելու նաեւ արժանաւոր իր գաւաւկների յոբելեանները:

Մեծարգոյ Լպն Միրզոյեան. հոգո՛ւ բերկրանքով ողջունում եւ սիրով ու բարեմաղթանքներով շնորհատրում ենք Ձեզ Ձեր ծննդեան 80-ամեայ տարեդարձի առիթով:

Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր յոբելեանը Դուք դիմաւորում էք տարիների վաստակով ծանրաբեռն, երախտագէտ մեր ժողովրդից սիրուած ու մեծարուած, ազատ ու անկախ հայաստանի հայրենի պետութեան գնահատանքին արժանացած:

Տաղանդաշատ երգահանի Ձեր անունը լայնօրէն ծանօթ է երաժշտասէր հասարակայնութեանը ինչպէս Մայր հայրենիքում, այնպէս եւ նրա սուսմաններից հեռու: Ձեր տրեղծագործութիւնները հայկականութեան շնչով, բարձրարուեստ երաժշտութեան անդիմադրելի գործութեամբ թափանցում են մարդկային հոգո՛ւ խորքերը եւ ետաւորաբար այնպէս սիրոյ, բարոյ, յոյսի ու լաւարեստութեան ապրումներով: Տասնամեակներ շարունակ երաժշտի Ձեր կարողութիւնները, ճաշակն ու փորձառութիւնը Դուք անմնացդոյ ու անսակարկ նուիրումով փոխանցել էք երիտասարդներին՝ կրթելով ու զօրացնելով նրանց հոգիներում հաւատարմութիւնը արուեստին, սէրը հանդէպ եայրենի երգն ու երաժշտութիւնը եւ հաւատ սերմանելով կեանքի ու մարդու նկատմամբ, որը մեր ժողովրդի քրիստոնէական մտածողութեան արտայայտութիւնն է:

Ամենայն հայոց 1700-ամեայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելանի առիթով՝ առ ի գնահատութիւն Ձեր վաստակի, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս. ՍԱՏՅՈՒՆ - Ս. ՄԵՍՐՈՊ

պատուով բարձր շքանշանը:

Մեր հոգեբուխ աղօթքն է, որ Տէրը հանապազ Իր խնամքի ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգևելով նրջանկութեամբ լեցուն նրկար օրեր, սպեղծագործական անսպառ ոգի ու ներշնչանք, նոր յաջողութիւններ:

«Ողջ լըրուք ի Տէր, գօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւելլ օրինեալք ի Մենջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Յուլիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 56

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԳՆԱՎԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ
ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ՝ ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՖ ԳՆԱՎԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՄ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՖ ՎԱՍՏԱԿԵԱՄ ՍՊԱՍԱՌՐ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ,
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ,
ՈՐ Ի ՊՈՒՔՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ**

Առաքելական մեր Մայր Եկեղեցին յաւերժում է իր նուիրեալ ու ջանադիր սպասատրներով, որոնք փարիսների անխոնջ ծառայութեամբ մեր Սրբազան Եկեղեցու հաւաքոյ կանթեղը անմար են պահել եւ մեր ժողովրդի գաւակաց մարքերն ու հոգիները լուսատրել Աւերարանի սիրով:

Միքելի Սրբազան.

Նոգեկան մեծ բերկրանքով փողեկացանք, որ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեակի դարակազմիկ այս փարում բոլորում էք քահանայական ձեռնադրութեան երեսունեւորդ փարեղարձը, որի գեղեցիկ առիթով փարոյս օգոստոս 7-ին Տիրախնամ թմիրդ Եկեղեցական Վարչութիւնը հանդիսատրապէս նշելու է Ձեր յորելեանը:

Քսանվեց փարիներ առաջ Երջանկայիշափակ Մեր նախորդ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարձր ու իմաստուն փնօրիկութեամբ հոգեւոր հովիւ նշանակուեցիք Արգենտինայի հայոց թեմում հովուական Ձեր գործունեութեան ողջ ընթացքում «որպէս մշակ բարի եւ հաւաքարիւն» վայելելով սէրն ու յարգանքը արգենտինահայոց: Ուրախ ենք, որ Դուք հոգեւոր Ձեր առաքելութեան իրականացմանը զուգահեռ նպաստել էք նաեւ հայրենիքից բազմամղոն հեռաւորութեամբ ապրող հայորդիների ազգային, կրթական ու մշակութային կեանքի զարգացմանը:

Ահաւասիկ, փաստմեկ փարի է, ինչ Դուք նուիրեալ ուխտապահութեամբ վարում էք Արգենտինայի հայոց թեմի առաջնորդի պաշտօնը՝ անսակարկ Ձեր ծառայութեամբ բարեպաշտ մեր զաւակների հոգում վառ պահելով յոյսն առ Փրկչի Յարութիւնը, հաւաքն առ հայրենի սրբութիւնները եւ սէրն առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Առաքելական Մայր Եկեղեցուն բերած բոլորանուէր Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրա-

պետական Մեր օրհնությունը, սրտագին շնորհատորանքն ու ջերմ քաղցնադրանքները:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Տէրն Ամենակալ պարգևի Ձեզ «յամայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» ամաջնորդել մեր ժողովրդին իր քարի երացների լուսեղէն հանգրուանները:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւէր օրհնեալք ի - Մէնջ. ամեն»:

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍՏԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 17-ն Յուլիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 175

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2001 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

«Ս. Սաեակ - Ս. Մեսրոպ» շքանշանի են արժանացել Կանադայի հայոց թեմից.

Ալին Գուրթան
Նուրիան Արման
Բաֆֆի Արմենյան
Պեպրոս Շուժունյան
Արման Հովսեփյան

Օրինության գրի են արժանացել.

Նվեր Մխիթարյան (Ուկրաինա)
Բաղդատի Երիտասարդաց Միություն (Իրաք)՝ 72-ամյակի առթիվ
Վարդանանց Ասպետներ (ԱՄՆ Արևելյան թեմ)՝ 85-ամյակի առթիվ
Խոստատուրյան Դսյրաց Դաս (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Ռոզա Զոհրաբյան (Վրաստան)
Օշական վարդապետ Մինասյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Պերճ Թերզյան (Ավստրալիա)
Աբրահամ Հարությունյան (Ավստրալիա)
Վահե Ստեփանյան (Ավստրալիա)
Ա. Մարիամ Աստվածածին եկեղեցի (ԱՄՆ Արևելյան թեմ)՝ 75-ամյակի առթիվ:

1700-ԱՄՅԱԿ



1700 - ԱՄՅԱԿԻ ՕՐ ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ

Իրաւիայի Ռավեննա քաղաքում Դանթեագիտության կենտրոնի կազմակերպած դասական երաժշտության ամենամյա փառատոնի այս տարվա վերջին օրը՝ հուլիսի 22-ը, նվիրված էր Հայաստանում Զրիստոնեությունը պեղական կրոն հրժեշակելու 1700-ամյակին:

Այդ առթիվ Ռավեննա էր հրավիրվել 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Նա Ռավեննա էր ժամանել 1700-ամյակի փոնակապարտությունների պեղական հանձնախմբի պատվիրակության հետ, որը գլխավորում էր փոխնախագահ Նոսրուլ Հարությունյանը:

Սրբազան Հայրը, իբրև Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ներկայացուցիչ, Վեհափառ Հայրապետի պատվամը փոխանցեց Ռավեննայի արքեպիսկոպոս Զուգեպպե Վերուջին, փառատոնի կազմակերպիչներին և հայ համայնքին:

Այնուհետև Ս. Ֆրանչեսկո Մայր Տաճարում մատուցեց Մուրբ Պատարագ՝ Վեհեփիկ Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության վարդապետներից մեկը, հայկական ծիսակարգով: Հայաստանի պատվիրակությունն ապա մասնակցեց Դանթեի շիրմի պսակադրության արարողությանը և «Դանթեն Հայաստանում» ու «Հայերի ցեղասպանությունը» թեմաներով ցուցահանդեսների բացմանը:

Օրվա երկրորդ կեսին Ռավեննայի Տ. Apollinare և Classe եկեղեցում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք՝ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի նախագահությամբ:

Երեկոյան Հայաստանի պատվիրակության հետ Հայաստան ժամանեցին «Լա Սկալա» օպերային հանրապար թատրոնի երգչախումբն ու նվագախումբը:

1700-ամյակին նվիրված օրը եզրափակվեց Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային կենտրոնում «Լա Սկալա» օպերային թատրոնի համերգով՝ հռչակավոր դիրիժոր Ռիկարդո Մուրիի ղեկավարությամբ:

1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

1700-ամյակի ուխտագնացությունների հայտագրում բացառիկ էր համարվել Համառայական երիտասարդական ուխտագնացությունը ոչ միայն սերունդներին ուխտի սրբազան խորհրդին հաղորդակից դարձնելու, այլ նաև աշխարհասփյուռ հայ երիտասարդությանը համախմբելու և նրանց այցը հայրենի երկիր կազմակերպելու առումով: Ուխտագնացության նախապարաստական աշխատանքները փարիներ առաջ էին սկսվել: Հայաստանի և սփյուռքի թեմերում ստեղծվել էին միջթեմական համաձայնագրեր, որոնք հաճախ էին միացյալ ժողովներ երաժիշտում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նախագահությամբ 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի:

Սրբազան Հոր կոչով համախմբվում էին սփյուռքահայ երիտասարդները, միաժամանակ կազմակերպվում էին բարեգործական միջոցառումներ՝ նյութապես սատարելու ուխտագնացությանը մասնակցել ցանկացող կարիքավորներին: Մի քանի ամիս առաջ արդեն պարտաստ էին մասնակիցների ցուցակները, ապահովված էին բնակության վայրը, տրանսպորտի միջոցները, կազմված էին փոքր ուխտագնացությունների երթուղիները դեպի Հայաստանի տարբեր թեմեր: Ուխտագնացության օրերը հուլիսի 10-20-ն էր հայտարարված, հայաստանցի ուխտավորների ծախսերը հոգալու էր 1700-ամյակի գրասենյակը: Եվ ահա եկավ բաղձալի օրը. սկսվեց սփյուռքահայ երիտասարդության հոսքը Հայաստան: Ուխտագնացները տեղավորվեցին Մեանի հանգստության տներում:

Ուխտագնացության բարձրակետը հուլիսի 14-16-ն էր: Երթուղին էր Խոր Վիրապ - Էջմիածին - Երևան: Հուլիսի 14-ի երեկոյան ուխտավորների խմբերը շարժվեցին դեպի Խոր Վիրապ: Շաբաթի համար դա առաջինն այցն էր մեր հավաքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց վայր: Այսպես շուրջ 2000 երիտասարդ ուխտավորներ մասնակցեցին մոմավառության, ապա՝ հավաքական աղոթքի արարողություններին: Նրանց ողջունեցին Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը և Խոր Վիրապի վանահայր Տ. Զարեն վրդ. Կաբադյանը:

Սրբազան Հայրն իր խոսքում մասնավորապես ասաց. «Խոր Վիրապի այս սրբազան հողին վրայ մեր հառաքը կը խորհրդանշէ կեանքի փօնակա տարառությունը: Եկած ենք հաղորդելու մեր հաապրքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի աղօթքով հրաշագործուած լոյսին խորհրդովը, որպէսզի գՔրիստոս դարձնենք մեր կեանքը: Քանզի Քրիստոնէութիւնը կեանքը ապրելու ոլորտակի եղանակ մըն է, որը կ'առաջնորդէ զմեզ դէպի Աստուած, դէպի կատարելութիւն»:

Այնուհետև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Տ. Բագրատի արեղա Գալստյանն իր խոսքում անդրադարձավ աղոթքի կարևորությանը քրիստոնյայի կյանքում: Ուշ գիշերին Լուսավորչի կանթեղից վառված մոմերով երիտասարդները շարժվեցին դեպի Էջմիածին: Հոփսիմն փառաբանում աղոթքից հետո ուխտագնացության երթը ձգվեց դեպի Մայր Աթոռ: Տրդատի կամարների ներքո երիտասարդներին իր հայրական հորդորն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը. «Ուխտավորի հուսառատ հոգով Ձեր բայերն ուղղեք դեպի մեր սրբապետները, հպվեք մեր նախնյաց աղոթքի ջերմությունը պահած քարերին հինավուրց եկեղեցիների, վանքերի, խաչքարերի և դամբարանների, զգացեք ձեր արմատները կենսունակ և փառաբանեք Աստծուն նույն սիրով և հավատարմությամբ, Հարության հավաքի նույն վստահությամբ, ինչպես դարեր շարունակ մեր հայրերը, պապերն ու նախապապերը: Ծառն արմատով է ամուր և շինությունը՝ իր հիմքով, իսկ մարդու արժեքը՝ առ Աստված իր հավատով է: Ձորացեք հավատով, և թող ամենայն ձեր գործերը հավատով լինեն ու ծառայեն բարուն, հույսին ու սիրո արգասավորմանը աշխարհում, մեր անկախ ու ազատ հայրենիքում, աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում», - ասաց Վեհափառ Հայրապետը (տես էջ 11):

Այս փեղի ունեցավ Արևազալի ժամերգություն, ուխտավորները մասնակցեցին նաև Սուրբ Պատարագին, իսկ երեկոյան վերադարձան Սևան: Հաջորդ առավոտյան ուխտավորների խմբերը Ծիծեռնակաբերդում էին՝ հարգանքի փութը մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ուխտագնացության կազմակերպիչները հոգացել էին նաև, որ երիտասարդները ծանոթանային իրենց հայրենիքին, լինեին վաճառում և սրբավայրերում, մասնակցեին մշակութային միջոցառումներին: Ուխտագնացության ընթացքում նրանք եղան նաև Հայաստանի թեմերում, ուր թեմակալ առաջնորդները ներկայացրեցին իրենց թեմի փառաբանում գտնվող հոգևոր և պատմամշակութային արժեքների պատմությանը, թեմի գործունեությանն ու ծրագրերին:

Ուխտագնաց երիտասարդները Երևանում ներկա եղան «Գրիգոր Լուսավորիչ» աննախադեպ ժող-օպերայի պրեմիերային, Սևանի ափին կազմակերպված «Իմ սեր, իմ հավատ, իմ Հայաստան» թատերականացված համերգին և մշակութային մի շարք այլ միջոցառումների: ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Եգիպտոսից, Իրանից, Ռուսաստանից ժամանած երիտասարդներին Հայաստանում միացել էին փեղացի ուխտագնացներն ու Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան Դպրանոցի սաները: Ուխտագնացության ողջ ընթացքում նրանց հետ էին Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Կենդրոնական Եվրոպայի ուխտագնացության իսկանախմբի պատասխանատու Տ. Զարին վրդ. Ավետիքյանը (Ֆրանսիա), Տ. Արարատ վրդ. Գալթակճյանը (Մոնրեալ), Տ. Շնորհք քն. Դեմիրճյանը (Լոս Անջելես), Տ. Վարդան քն. Զուլֆայանը (Ֆլորիդա), որոնք ջանում էին առավել հոգևոր մթնոլորտ ստեղծել երիտասարդների համար:


Ուխտագնացության ընթացքում երիտասարդները նաև ականապեսն ու մասնակիցը եղան մի շարք հետաքրքիր միջոցառումների և արարողությունների: Դրանց

մեջ բացառիկ էր պատկառության արարողությունը Հաղարծնի վանքում, որտեղ իրենց միավորման ուխտը կնքեցին կանադահայ երիտասարդ ուխտավոր մի զույգ: Հովնան Սրբազանը, օրհնելով նրանց պսակը, մեծ իմաստ ու խորհուրդ տեսավ այդ միության մեջ, այն առավել ամուր ու անքակտելի համարեց, որովհետև ծնվել էր սրբազան ուխտի օրերին:

Ուխտագնացության վերջակերպը հուլիսի 20-ն էր: Հրաժեշտի ընթրիքը համախմբել էր նրանց մի հարկի տակ: Նրանք, իհարկե, դեռ ժամանակ կունենան վերլուծելու ուխտագնացության ընթացքում իրենց ապրածն ու զգացածը, իրենց ձեռքբերումները: Հրաժեշտի պահին նրանք բոլորը միասին էին ուզում լինել առավել համախումբ: Ուխտավորների խանդավառ ու ոգևորված դեմքերը կարծես հուշում էին, որ անպայման կիրականանա Հովնան Սրբազանի նվիրական երազանքը՝ համահայկական երիտասարդական նոր կառույց ստեղծելու երազանքը, որին կանգամազորվեն մեր Եկեղեցուն և հավատին նվիրյալ երիտասարդներ:

Երիտասարդ ուխտավորների հրաժեշտի աղոթքը ևս հուզիչ էր: Այն կարծես ուխտի երդում էր, հավատի նորոգման կոչ ամբողջ հայությանը՝ մեր Մեծ դարձի սրբազան տարեդարձին:

ՅԼՈՐԱ ԿԱՐԱՂՅԱՆ



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 25-ին Գևորգյան Հոգևոր ճեմարանի Կոմիտասյան դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Հոգեշնորհ Ս. Անուշավան արքեպիսկոպոսի վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը, որի թեման էր՝ «Կոմիտաս վարդապետի կյանքը և նրա դերը Հայ Եկեղեցում»: Թեզի պաշտպանությանը ներկա էին Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սարկավագներ, ճեմարանականներ, դասախոսներ և հյուրեր:

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Ս. Նավասարդ եպս. Կճոյանը: Այնուհետև քննիչ հանձնախումբը (նախագահ՝ Գերաշնորհ Ս. Եզնիկ եպս. Պետրոսյան, անդամներ՝ Գերաշնորհ Ս. Նավասարդ եպս. Կճոյան, Հոգեշնորհ Ս. Վազգեն վրդ. Միրզախանյան) ներկայացրեց իր կարծիքը թեզի վերաբերյալ և փըլեց իր համաձայնությունը բանավոր պաշտպանության: Անուշավան արքեպիսկոպոսը կերպով ներկայացրեց իր աշխատանքը, որը քննիչ հանձնաժողովի կողմից արտակարծությունների տեղիք փըլեց: Հայր Սուրբի հիմնավոր պարճատաբանություններից հետո թեզի պաշտպանությունը միակարծիք դրական ընդունվեց և արքտնվեց Հայր Սուրբին ստանալու մատնավոր վարդապետական չորս ասքիճաններ:

Հուլիսի 28-ին, արդեն ավանդություն դարձած, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Ս. Նավասարդ եպս. Կճոյանի, Հայր Անուշավանին շնորհվեց մատնավոր վարդապետական չորս ասքիճաններ և զավագան՝ վարդապետելու և բարբաթելու ասքվածային ճմարությունները: Սրբագան Հայրն իր խոսքի մեջ հայրաբանական վկայություններով բացաքրեց վարդապետական ասքիճանների ու զավագանի խորհուրդը և իր շնորհաբաշխ աջով Ասքոծ օրենությունն ու շնորհները բաշխեց Հայր Սուրբին և ներկա հավաքացյալներին:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԴՊԻՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ



Տ. ԱՆՈՒՇԱՎԱՐՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 12-ին Էջմիածին քաղաքում, ավագանի անունը՝ Անդրանիկ:

1978-88 թթ. սովորել և ավարտել է տեղի Վառնա Ոչպունու անվան № 11 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1993 թ. Ս. Գայանե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրուղյանի:

1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ Մովսես Զուղայեցու «Ժողովածու ի պէս քանասիրաց» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ նախ Արիստակեսյանի:

1996 թ. Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից ուղարկվել է Գերմանիա՝ ուսանելու Հալլեի կոնսերվատորիայում, որն ավարտելուց հետո ուսումնասիրում է եկեղեցական իրավունք և միաժամանակ հոգևոր հովվի պարտականություն կատարում Գերմանիայի հայոց թեմում:

ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 29-ին, կիրակի օրը, Միածնաէջ Տաճարի լուսեղեն կամարների ներքո, երնթացս Սուրբ Պատարագի Կեղի ունեցավ քահանայական ձեռնադրության և օծման արարողություն՝ ձեռամբ 1700-ամյակի գրասենյակի վարիչ-բարերուդար, կանադահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտրյանի:

Պատարագին ներկա էին Ն.Ս.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորոգոմ արքեպիսկոպոս Մանուկանը, Թուրքիո հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծառայասեր միաբանությունը, ճեմարանի սաները և Հայ Եկեղեցու հայրենաբնակ ու սփյուռքաբնակ հավատավոր ժողովուրդ:

Համաձայն ձեռնադրության «Մաշտոցի», նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց ընծայման հանդիսավոր արարողությունը: Բարեշնորհ Սարգիս, Խորեն, Հարություն, Միքայել, Մամիկոն, Խաչատուր և Վահե սարկավագները կոչվեցին սրբազան քահանայական ընծայմանը: Ողջ ձեռնադրության արարողակարգի մեջ, որը, ի դեպ, մեր եկեղեցու ամենագեղեցիկ ծիսակարարություններից մեկն է, ընծայման կարգն ամենակարևոր մասն է կազմում. այդ արարողության ընթացքում է, որ հոգևոր ծառայության կոչված անձը Լուսեղեն Ս. Խորանի առջև ընթերցում է մեր Եկեղեցու դավանանքը՝ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած դավանանքը:

«Նայեաց ի մեզ» շարականի հնչյունների ներքո ընծայացուները Տաճարի Ավագ դռան մոտից, Տ. Արքակ վարդապետ Տիգրանյանի և Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանի առաջնորդությամբ, ծնրադիր շարժվեցին դեպի Իջման Ս. Մեղան: Արարողակարգի համաձայն հարցեր ուղղվեցին ընծայացուներին՝ դավանանքի և մտավոր հատկության վերաբերյալ:

Ընծայման արարողակարգն ավարտվեց «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով:

Հաջորդ օրը, Պատարագի ընթացքում, «Զի ողորմած եւ մարդասեր ես, Աստուած...» աղոթքից հետո, սկսվեց բուն ձեռնադրության արարողությունը:



Հրաժարման պահ

Ջահանայացուները, փոխնիփոխ հնչած շարականների ու սաղմոսների եերթականությամբ, խարտավիլակ հայր Սուրբի՝ Ս. Անուշավան վարդապետ Ժամկոցյանի առաջնորդությամբ ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Սեղան՝ առ ուրա ձեռնադրող եպիսկոպոսի, ուր խարտավիլակ հայր Սուրբը վկայեց Ջահանայացուների անձնագոհ պարտաստականության մասին՝ հեղինակելով հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց։ Այս ամենից հետո խարտավիլակ հայր Սուրբի «ընկալցի զքեզ Տէր» ազդակից հետո ընծայակները, ձեռքները վեր բարձրացրած, շրջվեցին դեպի ժողովուրդը և կնքեցին իրենց նորահաստատ ուխտը՝ ի հրաժարումն երկրային կյանքից և նրա բարիքներից։ Դրանից հետո Սրբազան հայրը, ձեռնադրելով յուրաքանչյուրին, «Մաշտոց»-ից ընթերցեց հետևյալ սուրբգրային տողերը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա...զի արժանի լիցի սա գաստիճան քահանայութեան»։

Ընծայացուներին, ի նշան քահանայական աստիճանի, շնորհվեց փիլոն, շուրջառն սաղավարտ։ Փակվեց Ավագ Ս. Սեղանի վարագույրը, և նրանք զգեստավորվեցին։ Զգեստավորվելուց հետո, Մասիս սրկ. Իսայանի կախարմամբ բաղցրալուր շարականի հնչյունների ուղեկցությամբ, երկնային գործությունների՝ լուսազգեստ հրեշտակների օրհներգություններով և դալրաց դասի շքեղ թափոթով իսնդիսավոր Սուրբ Սեղան բերվեց Կենարար Մյուռտնով յի Սրբալույս Աղավնին, որով Սրբազան հայրը օրհնեց և օծեց նվիրյալների ճակարդ, աջ և ձախ ձեռքները՝ վերանվանելով Մարգիս սրկ. Գասպարյանին՝ Ս. Ռուբեն քահանա, Խորեն սրկ. Սրեպիանյանին՝ Ս. Խոսրով քահանա, հայրություն սրկ. հայրությունյանին՝ Ս. Գարեգին քահանա, Միքայել սրկ. Մելիքյանին՝ Ս. Վահրամ քահանա, Մամիկոն սրկ. Ավետիսյանին՝ Ս. Պարոյր քահանա, Խաչատուր սրկ. Տաշչյանին՝ Ս. Մամբրե քահանա, և Վահե սրկ. Վահոնուն՝ Ս. Գեղարդ քահանա։ Նորած քահանաների անդրանիկ օրհնությամբ՝ «Խաղաղություն ամենեցուն», ավարտվեց ձեռնադրության արարողակարգը։

Երբ մութեցավ «Ողջոյն»-ի պահը, Պապրիարք Սրբազան հայրերը՝ Վեհափառ հայրապետի գլխավորությամբ, հոգևորականաց դասի հետ բարձրացան Ս. Սեղան և շնորհավորեցին նորապսակ քահանաներին։

Հավարտ Սուրբ Պատարագի Սրբազան հայրը, մեծ խանդավառությամբ շնորհավորելով նորած քահանաներին, իր սրտի խոսքն ուղղեց ներկաներին։ Սրբազան հայրն իր խոսքում հարկապես կարևորեց այն փաստը, որ այդ հիշարժան արարողությանը բերկրանոց սրտի մասնակից են նաև Երուսաղեմի և Պոլսո հայոց Պապրիարքները։

Նույն օրը, երեկոյան, կախարովեց արևդայական օրհնության կարգը, և Սրբազան հոր իսնդիսապետությամբ, ի նշան կուսակրոնության, վեղարներ շնորհվեցին նորած Ս. Գարեգին, Ս. Մամբրե և Ս. Գեղարդ կուսակրոն քահանաներին։

Մտղթենը, որ Աստուծո Ամենագոր Աջը միշտ հովանի լինի նորապսակ քահանաներին, որպեսզի աշխարհի աղը լինելով՝ ամաջնորդեն մեր 1700-ամյա քրիստոնեական համամարդկային արժեքներով օժտված հայ ժողովրդին դեպի աստվածային ճշմարիտ ու հավիտենական Լույս, և Երանաշնորհ Գարեգին Ա Հայրապետի խոսքի համաձայն՝ «չի բաւեր ըլլաւ. պետք է ճառագայթել»։ Թող երբեք չդադարեն ճառագայթելուց։

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ
 Գեորգյան Հոգևոր Ճեմարանի
 Գլխավորի սան



Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԵՂՎ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1975 թ. Երևան քաղաքում:

1982-1990 թթ. սովորել է տեղի № 164 միջնակարգ դպրոցում:

1990-1997 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1997-1998 թթ. ծառայել է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում իբրև քարտուղար:

1998 թ. հուլիսի 30-ին պաշտպանել է «Հանս Զյունգի Էկումենիկ աստվածաբանության տեսությունը» թեմայով ավարտաճառ՝ արժանանալով «լավ» գնահատականի:

1998-1999 թթ. երջանկափառական Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ուսումը շարունակել է Բոսսեի Էկումենիկ համալսարանում (Շվեյցարիա):

1998 թ. Բոսսեի համալսարանում պաշտպանել է թեզ «Աստվածաշնչի էկումենիկ մեկնաբանությունը» թեմայով՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1999 թ. վերադարձել է Մայր Աթոռ և ծառայել Կաթողիկոսարանում իբրեւ քարտուղար: Այնուհետըն Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գարեգին արքեպս. Բեկչյանի եղավերով բարձրագույն ուսման է մեկնել Այխշթեթի աստվածաբանական համալսարան (Գերմանիա):

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Ս. Ղովման արքեպս. Տերտեքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանայ:



Տ. ԳԵՂԱՐԴ ԱՐԵՂԱ ՎԱՀՈՒՆԻ

(ավագանի անունը՝ Վահե)

Ծնվել է 1976 թ. ապրիլի 5-ին Երևան քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է Կեդի հաշվադրուր Աթոլյանի անվան միջնակարգ դպրոցում:

1993-1998 թթ. սովորել է Մևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998-1999 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին, ձեռամբ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հոկտեմբերի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պետրոս արքեպս. Բերդումեան-Աղամալեան Նախիջևանցու «Կշիռ արդարության»» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի: 2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերպերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



Տ. ՄԱՄԱՐԵ ԱՐԵՂԱՍ ՏԱՇՉՅԱՆ

(ավագանի անունը՝ հրաչիկ)

Ծնվել է 1976 թ. Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է տեղի № 1 միջնակարգ դպրոցում:

1993-1999 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին, ձեռամբ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. պաշտպանել է դիպլոմային աշխատանք՝ «Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը» թեմայով:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտեռյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



Տ. ԽԱՍՐՈՎ ՔԱՎԱՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Խորեն)

Ծնվել է 1973 թ. նոյեմբերի 22-ին Էջմիածին քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է տեղի Մ. Գորկու անվան № 5 ռուսական միջնակարգ դպրոցում:

1983-1988 թթ. միաժամանակ սովորել է տեղի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցում:

1988-1990 թթ. ծառայել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

1990-1996 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ և Ռուս Եկեղեցիների հարաբերությունները ԺԸ դարում» թեմայով՝ արժանանալով «Դավարար» գնահատականի:

1996-1998 թթ. աշխատել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում իբրև վերակաջու:

1998-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերի երկրորդ բանակային կորպուսում որպես հոգևոր խորհրդական:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա:



Տ. ՊԱՐՈՒՅՐ ԶԵՎԵՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Մամիկոն)

Ծնվել է 1975 թ. Էջմիածին քաղաքում:

1981-1982 թթ. սովորել է տեղի Ն. Աբովյանի անվան № 4 միջնակարգ դպրոցում:

1983-1990 թթ. հաճախել է նաև երաժշտական դպրոց:

1992-1997 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997-1998 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

Ճեմարանն ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի է ունցել Արարատյան Հայրապետական թեմում որպես Միջեկեղեցական բաժնի գործավար:

1998 թ. սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1999 թ. առ այսօր ծառայում է Կաթողիկոսարանում՝ նախ որպես Մայր Աթոռ-Ձեմնի բաժնի, ապա Դիվանապան գործավար քարտուղար:

2000 թ. դեկտեմբերի 27-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Էջեր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Պատմությունից» թեմայով:

Սանկտ Պետերբուրգում և Ռուսիայում մասնակցել է նաև Էկումենիկ ժողովների և հանդիպումների:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա:



Տ. ԱՌԻԲԵՆ ԲԵՆՈՍ ԳԵՄՊԱՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Սարգիս)

Ծնվել է 1961 թ. հոկտեմբերի 17-ին Նրագդան քաղաքում:

1968-1978 թթ. սովորել է Երևանի № 135 միջնակարգ դպրոցում:

1979-1983 թթ. սովորել է Երևանի պետական ֆիզկուլտուրայի ինստիտուտում:

1983-1992 թթ. սովորել է Հսրոնիայի Տարբու քաղաքի Դորպատի անվան պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում՝ այդ ընթացքում ծառայելով նաև Սովետական Միության զինված ուժերում:

1992-1995 թթ. սովորել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության Ընծայարանում:

1993 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արթուր արքեպս. Մանուկյանի:

1995 թ. հուլիսին Երուսաղեմում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհաննես առաքյալի քարոզչությունը և առաքելությունը» թեմայով:

1995-1999 թթ. ծառայել է Ս. Հարության Տաճարում որպես լուսարար սարկավագ:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա:



Տ. ՎԱՐԴԱՆ ԲԱՏՄԱՆԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

(ավագանի անունը՝ Միքայել)

Ծնվել է 1976 թ. մայիսի 22-ին Երևան քաղաքում:

1982-1993 թթ. սովորել է Կոմիտասի անվան № 58 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է արժաթե մեդալով:

1991 թ. երգել է Արարապյան Հայրապետական թեմի «Մանկունք» մանկական երգչախմբում:

1993-1998 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997 թ. հունվար-ապրիլ ամիսներին մեկնել է Կանադա՝ «School of Geoffrey R Conway School of Television Broadcasting» մասնակցելու եռամսյա դասընթացների TV Broadcasting բնագավառում, որը ավարտել է լավագույն գնահատականներով:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. աշխատել է Կաթողիկոսարանում իբրև գործավար քարտուղար, ինչպես նաև մասնակցել է Ֆինլանդիայում կայացած «Մինդեսմոսի» հերթական XVII համագումարին իբրև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ և դիտորդ: Նույն թվականի օգոստոսին նշանակվել է Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման և Կաթողիկոսա-

կան ընդդրությունների կազմակերպման գրասենյակում իբրև գործավար բարություն:

2000 թ. Վեհափառ Հայրապետի փնտրիչությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փոփոխարկական համակարգի փնտրիչի օգնական: Միաժամանակ ներգրավվել է ԵՀԽ-ի Հայաստանյան գրասենյակի՝ Կլոր Սեղանի աշխատանքների մեջ. փեղական դեկավարման խորհրդում (Local Board) իբրև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

2000 թ. հոկտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հուսփիհիանոս կայսեր կրոնական քաղաքականությունը և Կ. Պոլսի Ե Տիեզերական ժողովը» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերփերյանի, ձեռնադրվել է քահանա:

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

«Գալուսնը երիտասարդության է: Հայաստաննայց Եկեղեցույ մէջ նոր շունչ, նոր թարմութիւն կը մտնէ երիտասարդներու գործօն ներկայութեամբ»:

ԳԱՐԵԳԻՆ Ա

Հուլիսի 22-ին՝ Այլակերպության Կոմիտեի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կոմիտեի ունեցավ սրբազան խորհրդակցարարություն՝ բարձր փնտրիչությամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի:

Գեորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ ութ սաների, որոնք հաջողությամբ էին հանձնել սարկավագական բնությունները, շնորհվեց սարկավագական աստիճան:

Հանդիսագիր Սրբազանը Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չոդջյանն էր: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևորականաց ղապը, ճեմարանի սաները, նորընծաների ծնողները և, իհարկե, Հայ Առաքելական Եկեղեցու անբաժան մասը կազմող հավաքավոր ու բարեպաշտ ժողովուրդը:

Առանձնակի բերկրանքով էին վարակված ներկաների սրտերը, քանզի հիասքանչ խորհրդակցարարությունը համընկնում էր Հայաստանայց Եկեղեցու Տաղավարաց րոմերից մեկի՝ Աստվածորդու՝ Դիտու Քրիստոսի Պայծառակերպության հեպ: *«Լեռան վրա լայակերպվելով՝ ցույց տվեցիր Քո աստվածային գործությունը: Քեզ փրտավորում ենք, ո՛վ իմանալի լույս»* (Շարակնոց):

Արարողությունը կարարվեց հավուր պարշաճի, ըստ առաքելականը կանոնների և Հայ Եկեղեցու ձեռնադրության «Մաշտոցի»: Դեռևս հուլիսի 21-ին, երկնյան ժամերգությունից առաջ, նրանց շնորհվել էր կիսասարկավագության աստիճան: Սարկավագությունը, որի հիմքում ընկած է ծառայասիրությունը, և վերջինս քրիստոնեական կրոնում զբաղեցնում է կարևորագույն առանցքներից մեկը, դեռևս գալիս է Քրիստոսի ժամանակներից և ձեռնադրության միջոցով փոխանցվել է մինչև մեր օրերը:

Պարարագի աուրբգրային ընթերցումների և շարականների հոգեպարար հնչյունների ներքո նորընծա սարկավագները, Վարդգես և Վահե սարկավագների խարպավիլապությամբ, ծնրադիր առաջնորդվեցին Ավագ Խորան, ուր ներկաների առաջ վկայվեց նորընծաների հոգևոր ու մարավոր գիտելիքների մասին, ինչպես նաև նրանց

անձնագրի պարունակամտության մասին՝ ուխտելու և հնարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոններին:

Այս ամենին հաջորդեց արարողության ամենախորհրդավոր պահը. ընծայացունելով ծնկաչոք. «ձեռս ի վեր առեալ». դարձան դեպի արևմուտք, այնտեղն էր «Աստուածային եւ երկնատը շնորհ...» շարականի հնչյունների ներքո կնքեցին ու վերանորոգեցին իրենց անասան ուխտը՝ հրաժարվելով «աշխարհիկ հաճույքներից»:

Նորոգեցանքը դարձյալ ծնրադիր մտքեցան ձեռնադրող եպիսկոպոսին: Սրբազան Հայրը, համաձայն ձեռնադրության կանոնների, ձեռքը դնելով յուրաքանչյուրի գլխին, ի յուր ամենքի ասաց հետևյալ սուրբգրային փողերը. «*Ես դեհմ գձեռս ի վերսայ սորս, եւ դուք ամեններեւսն յաղօթս աւրարէք, զի արժանի լիցի սա զսարկինսն սարկաւագութեանս*», եւ ընծայացուները կոչվեցին «*ի դպրութենէ ի սարկաւագութիւն*»: Նրանք խնկարկեցին հավաքված հավաքավոր ժողովրդին՝ բարձրաձայն սաղմոսելով. «*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղայեացուք...*»:

Ուր նվիրյալ երիտասարդ սարկավագները համալրեցին Զրիստոսի Եկեղեցու սպասավորների շարքերը, որոնք վստահաբար գիրակցում են. որ իրենց անձերը նվիրելով ի բարօրություն և ի սպաս Հայաստանյայց Առաքելահիմն Եկեղեցուն և նրա հավաքավոր զավակաց, մինևույն ժամանակ ստանձնում են Երկնային Վարդապետի ծանր, դժվարին. բայց քաղցր լուծը:

Ձեռնադրության ավարտին պատարագիչ Տ. Մեպուհ եպիսկոպոս Չուլջանն իր հիացմունքի և ոգեղնչման խոսքն ուղղեց ներկաներին ու նվիրյալներին՝ իբրեւ Սուրբ Մարեփանոսի հետևորդներին:

Պատարագից հետո սարկավագներն առաջնորդվեցին Վեհարան՝ արժանանալով Հայրապետի օրհնությանը:

Արամ սարկավազ Ղևոնդյան

Ծնվել է 1976 թ. Երևան քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է Կոնդի թի 164, այնուհետև թի 135 միջնակարգ դպրոցներում:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանի Զ լսարանում:

Վահագն սարկավազ Սարգսյան

Ծնվել է 1977 թ. Էջմիածին քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է Կոնդի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թի 3 միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանի Զ լսարանում:

Գոռ սարկավազ Գևորգյան

Ծնվել է 1978 թ. Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղում:

1985-1995 թթ. սովորել է Կոնդի միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանի Զ լսարանում:

Սարգիս սարկավազ Կնյազյան

Ծնվել է 1979 թ. Էջմիածնի շրջանի Առաքաշեն գյուղում:

1984-1994 թթ. սովորել է Կոնդի միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանում:

Արկադի սարկավազ Թանդիլյան

Ծնվել է 1975 թ. Լոռու մարզի Ալավերդի քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է Կոնդի թի 2 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Երևանի Ինդուստրիալ մանկավարժական տեխնիկումում:

1995-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանում:

Արմեն սարկավագ Աշուրյան

Ծնվել է 1977 թ. Էջմիածին քաղաքում:

1982-1990 թթ. սովորել է Կոնի Ռ. Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Շիրակի Հոգևոր Ընծայարանում:

1995-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հովհաննես սարկավագ Բադալյան

Ծնվել է 1978 թ. Էջմիածնի շրջանի Մուսալեռ գյուղում (այժմ՝ Արմավիրի մարզ, Պոլոտնո գյուղ):

1984-1994 թթ. սովորել է Կոնի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ժամանել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

Արմեն սարկավագ Պետրոսյան

Ծնվել է 1972 թ. Երևան քաղաքում:

1978-1984 թթ. սովորել է Կոնի № 139 անգլիական թեքումով, այնուհետև՝ № 135 միջնակարգ դպրոցներում:

1989-1992 թթ. սովորել է Երևանի Ալ. Թամանյանի անվան շինարարական բուհում:

Ուսման ընթացքում գորակոչվել է բանակ:

Մինչև 1995 թ. զբաղվել է քանդակագործությամբ:

1995-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի

Գ լսարանի սան

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄՔՎԵՐՋԻ ՆԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՆԱՐԱՆՈՒՄ

Գևորգյան Նոգևոր ճնմարանի 2000-2001 ուսումնական տարվա ավարտը՝ բարձր հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Նայրապետի, տեղի ունեցավ 2001 թվականի հունիսի 22-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում, որին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունն ու պաշտոնեությունը, ճնմարանի դասախոսները, սաների ծնողները և Եկեղեցու հավաքավոր ժողովուրդը:

Այս տարի նա Նայ Առաքելական Եկեղեցու և հայ ժաղովրդի հոգևոր դարբնոցը հանդիսացող Գևորգյան Նոգևոր ճնմարանը ավելի թվով 25 շրջանավարտներ: 25 հոգևոր սպասավորներ լրացրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների շարքերը: Երջանկահիշատակ Գարեգին Ա Նայրապետի խոսքի համաձայն՝ *«Զրիստոնեայ կոչուի և թրիստոնեաբար յապրի՝ հակասական ապրումներու զոյսվիճակ մըն է, վատառողջ և ժխտագործ»:* Այս սպասավորները չեն կարող Աստծո սպասավորներ կոչվել և սպասավորություն չանել: Ինչպես հենց իրենք՝ շրջանավարտները վկայեցին, «խոսքը կլինի իրենց գործը»: Իհարկե նրանք այժմ, ձեռք բերելով Էջմիածնի միաբանի բարձր կոչումը, անխոնջ կերպով կփորձեն մարտիրոսական արյամբ օծված հայոց հողի վրա տարածել մեր հավաքքի հոր՝ Լուսավորչի սրբազան կանթեղի լույսը, որի ներկայությամբ խավարը կորչում է, հուսահատությունը փոխարինվում հույսի, արելությունը՝ սիրո:

Ահա այս մրավաժամներով, ուրախալի ու միաժամանակ խիստ պարտավորվածության զգացումներով էին համակված ճնմարանավարտ սաների սրտերը:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքի, Նայաստանի պետական հիմնի և ճնմարանի քայերգի հնչյունների ներքո, որոնց հաջորդեց Գևորգյան Նոգևոր ճնմարանի փոխտեսուչ, Արժանապատիվ Տ. Վաչե քին. Նայրապետյանի՝ ավերարանական ընթերցումը:

Երգչախմբի կատարմամբ «Աշակերտք Զրիստոսի» շարականը դահլիճը ողողեց քաղցրալուր հնչյուններով, և Գևորգյան Նոգևոր ճնմարանի տեսուչ, Արժանապատիվ Տ. Նոյիշե ավ. քին. Սարգսյանը, Վեհափառ Նայրապետին և բոլոր ներկաներին իրեն հանձնած «հաշիվը տալով տնտեսության», ներկայացրեց ուսումնական տարվա տնտեսական հաշվետվությունը:

«Գևորգյան Նոգևոր ճնմարանը 2000-2001 թթ. ուսումնական տարեշրջանը սկսեց մեր Եկեղեցու և ժողովրդի համար հույժ կարևոր՝ Նայ Եկեղեցին պետականորեն ճանաչելու 1700-ամյակի հոբելյանի տոնակատարություններին նախապատրաստվելու գործընթացի պայմաններում: 2000 թ. սեպտեմբերի 23-ին ճնմարանի

նվիրական այս հարկից ներս սկսեցինք այս ուսումնական տարվա դասերը: Ազգիս Սրբազնագույն Հայրապետը իր գահակալության հենց առաջին ամիսներին աշխատանքային իր ծրագրերում խիստ կարևորեց Հոգևոր մեր կրթարարների դերը վերագաղթոնք ապրող մեր հազարամյա Եկեղեցու կյանքում: Դեռ հազիվ վերջացել էր 1999-2000 ուստարեքջանը, Նորին Սրբությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանում հիմնովին վերակառուցեց ուսումնա-դաստիարակական աշխատանքների ծրագրերը: Ճեմարան երավիրվեցին մի շարք բարձրակարգ դասախոսներ, որոնք որակապես նոր լիցք հաղորդեցին ճեմարանական ուսումնական կյանքին: Փոխվեց նաև տեսչական կազմը, որի առջև դրվեց նոր խնդիրներ: Դեռևս 2000 թ. տրոթ ամսանը Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական ղեկավարությամբ դասախոսներից կազմվեց աշխատանքային խումբ, որը Հոգևոր մեր հաստատությունների համար կազմեց բառացիորեն նոր ուսումնական ծրագրեր և աշխատանքային պլաններ, որոնք, հաստատվելով Վեհափառ Հայրապետի կողմից, գործադրության դրվեցին Հոգևոր մեր երեք ուսումնական հաստատություններում: Կյանքի կոչված ուսումնական ծրագրերը որակապես փոխեցին մեր աշխատանքները: Բարձրացավ դասախոսների պատրաստանափութությունը, որը բնականաբար նպաստեց նաև ուսման որակի բարձրացմանը:

Այս ուսումնական տարեքջանին, առաջին անգամ լինելով, Հոգևոր հաստատություն ընդունվել ցանկացողների թիվը անցավ 100-ից, որն էլ հնարավորություն տվեց ընդունելության ընտրությունները կազմակերպել և անցկացնել որակապես նոր մոտեցումներով: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերջին 50-ամյա պատմության ընթացքում առաջին անգամ, անցնող ուսումնական տարվա ընդունելության ընտրություններից հետո, ունեցանք երկու զուգահեռ առաջին լսարաններ, որոնք ոչ միայն ջանակապես, այլև որակապես տարբերվում են նախորդ տարիների ընդունվածներից:

Ուսանողների թվի ավելացումը, որը առաջիկա տարիներին նույնպես պիտի շարունակվի, կատարվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և տնօրինությամբ:

Վեհափառ Տեր. այսօր, երբ մենք եսսել ենք իննամյա ուսումնառության մեր անցած ճանապարհի վերջին ակօրդին, պիտի խոստովանեմ, որ անցնող ուսումնական տարվա ընթացքում տեսչական կազմի համար եղան դժվարին, իսկ երբեմն էլ անելանելի վիճակներ՝ կապված հաղկապես կարգապահական հարցերի հետ: Այս առթիվ թույլ տվեք իմ շնորհակալությունը հայտնել Ձերդ Սրբությանը, որ դժվար պահերին, փառք Աստուծո, Ձերդ Վեհափառության միջամտությամբ, երբեմն էլ ոչ միօրինակ մոտեցումներով, կարողացանք խոստովիլ սուր իրավիճակներից, անհավակն և հավաքական մանկավարժական աշխատանք տանելով հնարավոր եղավ հիմնովին վերականգնել Գևորգյան Ճեմարանի հարկից ներս աշխատանքային ռիթմը և կարգապահությունը: Թույլ տվեք զեկուցել, որ այսօր արդեն մեր ուսանողները լավ են հասկանում ! Դժուր եղած խստությունների արժեքը, որի արդյունքում ճեմա-

քանում կան համեմատաբար ավելի բարձր կարգապահություն և շատ ավելի ազնիվ ու մաքուր մթնոլորտ, քան նույնիսկ մի բանի ամիս առաջ: Ուսումնական տարվա ընթացքում գործադրած կարգապահական հարցերը դժվարությամբ ենք ճանապարհի հարթում, բայց, փառք Աստուծո, արդեն նրեում է հեղուկական այդ աշխարհների արդյունքը: Ավելորդ չեմ համարում նշելու, որ անցնող ուսումնական տարվա ընթացքում մեր սաների կենցաղային և անձնական հիգիենիայի հարցերը բավականին բարելավվեցին: Ուսանողությունն ունեցավ իր ննջարանային նոր համալիրը, որտեղ առայժմ չի գործում միայն խոհանոցը:

2000-2001 թթ. տարեշրջանի տեսչական կազմը ներկայացնում է.

Տեսուչ՝ Արմ. Տ. Եղիշե ավգ. քին. Մարգարյան
Փոխտեսուչ՝ Արմ. Տ. Վաչե քին. Հայրապետյան
Վերակացուներ՝
Բարեշնորհ Մուշեղ սրկ. Հովհաննիսյան
Բարեշնորհ Արմեն սրկ. Եզեկյան
Բարեշնորհ Վարդգես սրկ. Մայիլյան
Պրն Լևոն Մարգարյան
Քարտուղար՝ պրն. Անդրանիկ Հակոբյան

Այսօր հաշվետվության պահն է, և մենք, տեսչական և դասախոսական կազմով, ներկայացել ենք Ձերո Սրբությանը ասելու. Վեհափառ Տեր, Ձեր առաջնորդությամբ ինն ամիս առաջ ավերարանական սերմնացանի օրինակով ցանեցինք և հեղուկեցինք առաջի բերքի ակնկալիքով: Համարավորության այս օրը կարող ենք ասել, որ տարվա հունձը որակական իմաստով ավելի քան բավարար է, բայց ոչ գոհացուցիչ:

Անցյալ ուսումնական տարում 26 ուսանողներ պաշտպանեցին ավարտաճառերը և ստացան իրենց ավարտական վկայականները: Այս տարվա ավարտական լսարանի 26 սաներից 22-ը հաջողությամբ հանձնեցին սարկավագական քննությունները և պատրաստվում են գրելու իրենց ավարտաճառերը:

Մեր ուսանողության առօրյան ավելի ենտաքրքիր դարձնելու համար անցյալ ուսումնական տարվա ընթացքում ճեմարանի այս սրահում ունեցանք մի քանի համերգներ: 1700-ամյա հոբելյանի ծիրից ներս ուսանողությունն առիթ ունեցավ ունկնդրելու դասական մի շարք համերգներ: Ուսանողները եղել են նաև Մարտենադարանում, պարկեթասրահում, Ս. Գեղարդ, Հավուց Թառ, Ս. Մարտինոս վաղերքում և Գառնիի տաճարում:

Մեր ուսանողներից շատերը թղթակցում են «Քրիստոնյա Հայաստան» թերթին, ինչպես նաև «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանին: Հանդես են գալիս հանրապետական, հասարակական ռադիոյի կրոնական ծրագրերում: Ուսանողների մի խումբ էլ հաճախակի հանդիպում և օգնում է կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին: Մայիսի 24-26-ը Օշականի դպրատանը հրավիրված «Ավարայրի խորհուրդը» գիտական նստաշրջանին, որը նվիրված էր Հայաստանյայց Եկեղեցին պետականորեն ճանաչման 1700-ամյակին, մեր ավարտական լսարանից երկու սաներ հաջողու-

թյամբ հանդես եկան գիտական զեկուցումով, որոնց թեման էր «Հայ գորավարները և նահապտակները հայաստանյայց Եկեղեցու պոնագույցում»:

Ուսանողները անցնող ուսումնական տարվա ընթացքում հանդիպումներ ունեցան մի քանի առաջնորդ Սրբազանների հետ, որոնք հյուրաբար գտնվում էին Մայր Աթոռում: Ծննդարանի ուսանողությունը, բացի Մայր Տաճարից, մասնակցում է Ս. Պատրարագներին Էջմիածին քաղաքի մյուս վանքերում ևս:

Գևորգյան Հոգևոր Ծննդարանում պաշտոնավարում են 42 դասախոսներ, որոնցից 14-ը եռզեկուրակյաններ են:

Հանդիսավոր այս պառնին ես իմ շնորհակալության խոսքն եմ ուղղում մեր տեսչական կազմի երիտասարդ իմ գործընկերներին, որոնք անտրտունք և նվիրված աշխատանքով նպաստեցին կարգապահության և ուսման որակի բարձրացմանը: Տեսչական կազմն անցած ամբողջ ուսումնական տարում որոշումներ կայացնելիս միշտ եղել է միակամ և միախորհուրդ: Խորին շնորհակալություն նաև մեր սիրելի դասախոսներին, որոնք անցնող ուսումնական տարում իրենց նվիրված աշխատանքով օգնեցին մեր սաներին բարձրացնելու իրենց իմացության մակարդակը:

Այսօր ծննդարանն ունի 115 ուսանող, որոնցից 26-ը հաջողությամբ հանձնեցին ավարտական փորձըջանի ըննությունները: Մնացած 89 ուսանողները բաժանված են հետևյալ լսարանների վրա.

Ա լսարան 18 ուսանող

Ա լսարան 13 ուսանող

Բ լսարան 8 ուսանող

Գ լսարան 19 ուսանող

Դ լսարան 12 ուսանող

Ե լսարան 19 ուսանող

Անցնող տարաբարում ծննդարանից, հիմնականում առաջին լսարանից, հեռացել կամ հեռացվել են հինգ ուսանողներ:

Ծննդարանի կարգապահության խախտման և ուսման մեջ ցածր որակի համար հեռացվել են ութ ուսանողներ: Առաջ մտավորապես համառոտ շարադրանքը մեկ ուսումնական տարվա հաշվառության:

Վերջացնելուց առաջ մի անգամ ևս թույլ տվեք խոնարհ աջահամբույրով մեր հավատարմության և անմնացորդ նվիրումը և ծառայության ուխտը վերանորոգել՝ ասելով. Ձերդ Սրբություն, Գևորգյան Հոգևոր Ծննդարանի տեսչությունը և դասախոսական կազմը մաղթում են Սրբությանդ քաջառողջություն ի շինություն հազարամյա մեր Ս. Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Պատրաստ ենք Սրբությանդ օրհնությամբ և առաջնորդությամբ անմնացորդ նվիրված ծառայությամբ էլ ավելի բարձրացնել ուսումնական այս հաստատության հեղինակությունը, մի հաստատություն, որի շրջանավարտները պատրաստ պիտի լինեն 21-րդ դարում հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տանելու իրենց ուսերին»:

Այնտեղից, Կոմիտասի «Առավոտ լուսաբեր» ոգեշնչող ստեղծագործությունից հետո, Ե լսարանի սան Դավիթ Մարգարյանը հուզումով արտաստանեց Պ. Սևակի «Որդուս» բանաստեղծությունը: «Հայր առաքող» հոգեպարար շարականը վարպետությամբ կատարեց Ճեմարանի երգչախումբը (ղեկ՝ Ռ. Շարբաթյան), ապա ուսանողության խոսքը Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղեց Զ լսարանի սան Արմեն ուրարակիր Պետրոսյանը:

«Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ Սուրբ Հայրեր, Արժանապատիվ քահանա Հայրեր, ճեմարանակից եղբայրներ, հարգելի դասախոսներ և ելուրեր:

Բավականին դժվարին, բայց միևնույն ժամանակ հաճելի պարտականություն ունեմ այս պահին՝ իմ եղբայր ուսանողների, մանավանդ մեր՝ ավարտական լսարանի սաների հույզերի ու ապրումների թարգմանը լինելու ավանդույթ դարձած և փոնական շուրջ ստացած Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ամավերջի հանդիսությունը:

Տարին ավարտվել է: Ժամանակն անցյալի հաշվին գրանցեց ևս մեկ պայմանական շրջան, որը մենք որակում ենք իբրև ուսումնական փարի: Ժամանակը հավերժի ծնունդ է, որն իր մեջ հաղթածայնություն չունի. մենք՝ մարդիկս ենք ժամանակը փրոհում միավորների՝ դրանք անվանելով փարի, ամիս, շաբաթ, օր, ժամ, րոպե ու վայրկյան: Իմաստասիրության մեջ այսպիսի բաժանումը կոչվում է «առարկայական»: Բայց որքան էլ առարկայական լինի, մարդկային զգացողության համար ժամանակը երբեմն անցնում է հարաբերականության սահմանը. լինում են ժամեր, որ փարիներ են թվում, և փարիներ, որ թռչում են րոպեների պես:

Կարծում եմ, շարերին խորթ չի լինի այն զգացումը, որ կարծես թե երեկ էր ենչում Հոգևոր Ճեմարան մեր մուտքի առաջին գանգը: Իրապես այս վեց փարիները թռան օրերի կամ, գուցե, րոպեների ու վայրկյանների պես: Ժամանակի մեջ ապրելը մեր մարդկային բնության մի փեսակ «պարտադրանքն» է: Երջանկափիշափակ Գարեգին Ա Կաթողիկոսը, խոսելով ժամանակի մասին, ասում է. «Ժամանակը ստեղծվում է ջրի պես: Եթե կարողանաս մի կաթիլ բռնել, փրկած կլինես և՛ քեզ, և՛ կաթիլը՝ հողի ու ծովի մեջ անհայտանալու ճակատագրից»: Այս փողերը կարդալիս ինքնաբերաբար մի հարց է ծառանում մեր առջև, թե քանի՞ կաթիլ բռնեցի այս վեց փարիների ընթացքում, որոնք իմ և ուրիշների հոգու ծարավը պիտի հագեցնեն: Անկեղծ ասած՝ պարասխանի մեջ դժվարանում եմ: Դա առավել մեզ գնահատողների խոսքը պիտի լինի:

Ինչպես մարդկային կյանքն ընդհանրապես, այնպես էլ մեր ճեմարանական փարիները ընթացան միալար ու միագիծ, եղան և՛ ուրախություններ, և՛ փսխություններ, սակայն այս ամենի մեջ կարմիր թելի նման հստակ ընդգծվում է մի բան, որ մենք մշտապես գտնվել ենք հոգածու ձեռքերի խնամքի տակ, և սա բառիս ամենալայն իմաստով: Թե՛ Մայր Աթոռի միաբան հոգևորականները՝ գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, և թե՛ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդած և դասավանդող դասախոսները մեզ հետ կիսել և մեզ են փոխանցել իրենց գանձերը՝

հոգևոր և աշխարհիկ գիտությունը, ցարհանդուկ ձեռք բերած կենսափորձն ու իմաստությունը: Իսկ այս ամենից մեզանից յուրաքանչյուրը քաղել, վերցրել է իր չափով, որպեսզի հեքազայտում ինքը պարտի փա՛մնեկի փոխարեն երեսուն, վաթսուն և հարյուր:

Այս ամենը և ներկա պահը միայն մեկ բան են թելադրում՝ երախտիքի և շնորհակալական խոսքեր, որոնք ինքնակենսական սրտից են բխում: Մենք՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավարտական լսարանի սաներս, հրաժեշտ փափով դպրության այս դարբնոցին, մեր կյանքում մի նոր փուլ ենք ուղք դնում, որպեսզի պիտի բաշխենք այն ամենը, ինչ ստացել ենք այսօրել: Մեր առջև հոգևոր ծառայության, նվիրումի՝ ծառայության ասպարեզն է, և այս շնմին կանգնած, Վեհափառ Տեր, թույլ քվեք ձեռնպահ մնալ երախտագիտության և խոստումների արտահայտություններից: Թող որ գործը լինի մեր խոսքը, որովհետև խոսքն այն ժամանակ է լեցուն իր իմաստով, երբ կյանք է ստանում դատելով վավերական, ճշմարիտ ու համոզիչ:

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեր ընթացքը, և թող մեր կյանքը լինի մեր խոսքը»:

Ա լսարանի սան Արսեն Հարությունյանի արտասանած Պ. Մեսկի «Հայրենիք» բանաստեղծությանը և երգչախմբի կատարմամբ Մ. Եկմալյանի «Անա ծագեց կարմիր արև» սերեղծագործությանը հեքսեց արդեն ավանդույթ դարձած գումարային և իրային մրցանակաբաշխությունը, և 2000-2001 ուսումնական տարում ուսման մեջ, ինչպես նաև այլ ոլորտներում առաջադիմած սաները պարգևատրվեցին տեսչության և «Կայծակյան» հիմնադրամի կողմից հատկացված նվերներով:

Հավարտ հանդիսության, ներկաներին իր օրհնության և գնահատանքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Խաթողիկոսը՝ մաղթելով շրջանավարտ սաներին անսասանություն իրենց սրբազան առաքելության մեջ և անվերապահ նվիրումով ծառայություն՝ այսօր հայ հոգևորականի կարիքն զգացող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա հավատալովոր զավակաց համար:

Հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ով և Հայրապետական մաղթանքով:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ Վեհապառ Հայրապետի փնտրիմությամբ, ինչպես նաև տեսչությունն ու ծառայատեր ուսանողությունն այս հորեկանական տարում փորձեցին լավագույն նվերը մատուցել Առաքելաբնիմ Նվերեցու հավատացյալ ժողովրդին՝ նրանց համար պատրաստելով գիտելիքներ ամբարած և աստվածային լույսով ճառագաված Աստծո նվիրյալ սպասավորներ:

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
Գ լսարանի սան


ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Մեքլենբուրգ-հոբոլոմբո նահանգի միջնկենդեական խորհրդի և այդ խորհրդի նախագահ փիկին Գյոբելի հրավերով եունիսի 15-ին Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը այցելել է տեղի հայ ապաստանյալներին՝ րնկերակցությամբ Գերմանիայի թեմի առաջնորդարանի դպրապետ Վարուժան Մարգարյանի, Գրաֆսվալտ քաղաքում մաքուցել Ս. Պարարագ, դասախոսություն է կարդացել՝ «1700-ամյա Հայ Եկեղեցին» թեմայով:

Հաջորդ օրը պրն Արման Մնացականյանի քանքերով կազմակերպվել է համերգ «Հայ աշխարհիկ-ժողովրդական և հոգևոր նրաժշտությունը»՝ մասնակցությամբ Հայկ Դեիյանի, Սաթենիկ Մկրտումյանի և Վարուժան Մարգարյանի: Համերգին հաջորդել է Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի դասախոսությունը «Հայ Եկեղեցին, նրա անցյալը և ներկան» թեմայով:

Երկօրյա հանդիպմանը իրենց խոսքն են ասել Տ. Գարեգին եպս. Բեքչյանը, Տ. Արմաշ աբեղան, դոկտ. Կարլ Պենկերան, պրոֆ. Թեոլեն, Հանս Զլաուբեն:

«Հայաստանը և հայ մշակույթը» բաժնում ցուցադրվել է մի փեսաժապավեն, որտեղ գերմաներեն ներկայացվել է Հայաստանն իր անցյալով ու ներկայով: 2001 թ. նախապեսվում է հաջորդ հանդիպումը նոր նյութերով եարստացած:



ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՍՏՎԱԾ ԱՆՈՒՆԸ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

Վաղ միջնադարյան աստվածաբանության մեջ կարևորագույն խնդիրներից էր Աստծո անվան բնութագրումը: Խնդիրը լուսաբանվել է Աստծո եկեղեցով Սուրբ Երրորդության հոգիքնկալման քրիստոսաբանական սկզբունքով, որի հիմքումն է Հիսուս Քրիստոսի պատվիրանը իր աշակերտներին. «Գնացե՛ք այսուհետև, աշակերտեցե՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցե՛ք զմոսա յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»¹: Ինչպես Պողոս և Հովհան ատաքյալներն են մեկնել՝ «... եկեղեցի Աստուծոյ կենդանոյ, սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան: Եւ յայտնի իսկ մեծ է խորհողոյն աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի եւ վերացաւ փառօք»²... Տէր Հոգին է. ուր Հոգի Տեառն է, ամբ ազատութիւն է»³: «Եւ գիտեմք, եթէ Որդին Աստուծոյ եկն, եւ ետ մեզ միտս զի ծանիցուք զճշմարիտն. եւ եմք ի ճշմարտին Որդոյն մորա Յիսուսի Քրիստոսի, զի մա է ճշմարիտ Աստուած եւ կեանք յափտեմանակա»⁴:

Սուրբ Երրորդության էության մասին Հավատամքում տրված հոգևոր ընկալումը՝ «... Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ...»⁵, Ս. Գրիգոր Լուսավորիչը (239-326) «Թաճախապատում»-ի⁶ մեջ մեկ-

¹ Մատթ. ԻԸ 19-20:

² Ա Տիմ. Գ 15-16:

³ Բ Կորն. Գ 17:

⁴ Ա Յով. Ե 20:

⁵ Քրիստոմեական, «Գաղթապար», Երևան, 1994, էջ 13:

⁶ Ս. Գրիգորի «Թաճախապատում»-ի հեղինակ համարողների (Պատմություն ժողովուրդ Հայաստանի)

նել է. «Իսկին ամօճի զԷն ամսկիզբն ծնեալ, մշտնջենաւորութեամբ անսահմանի՝ զճշմարտութիւնն ամփոփոխ ծնեալ, կենացն կենարարաց զկեանս կենսատու ծնեալ, լուսոյն կենդանոյ՝ զկենդանի լոյսն կուսածին ծնեալ, Արարչին զԱրարիչն ծնեալ»⁷:

Ելից գրքի Գ 14 տամ՝ «Ես եմ Աստուած Որ Էն» հայերեն թարգմանությունում ճշված *Աստված* բառը չկա Սուրբ Գրքի եբրայերեն, հունարեն և ասորերեն լեզուներով տեքստերում: Ուստի մեր Սուրբ Թարգմանիչներն այն գրել են՝ զգալով այսպիսի մեկնողական քացատրության անհրաժեշտությունը: Այստեղից հետևում է, որ Արարիչ Աստծո անունը հայ պատմագիտական և հայրախոսական երկերում ընկալվել է որպես *Աստուած*:

Ելից գրքի Գ 14-ի հայերեն թարգմանության ոգով է Ս. Գրիգոր Լուսավորիչը գրել «Յաճախապատում»-ի մեջ աստվածային էության մասին. «Մովսէս մտերիմ ծառայ Աստուծոյ զԼուծիւնն քարոզեաց մեզ եւ զկատարեալ գիտութիւն իսկ յԱստուծոյ: «Ես եմ, ասէ, Աստուած Որ Էն»: Եւ այսպէս սփռեաց յարարածս զլոյս աստուածային էութեանն»⁸:

Աստվածաշնչի գրաբար՝ հայերեն թարգմանության ժամանակներին մոտ կանգնած Եղիշեն (V դ.) այդ ոգով տվել է հետևյալ մեկնաբանությունը. «... զԷն Աստուած, որ ի մարդ կերպարանեցաւ...»⁹: Այստեղ մա ելել է Ելից գրքի հայերեն

տաճնայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբ, աշխ. Ա. արք. Մխիթարեանցի, Վաղարշապատ, 1874, էջ 23, Մ. արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 114) փաստարկն է՝ Որա գրած կանոններից մեկի վրայի ծանոթությունը. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի ճահատակէն տեսնուէ Գրիգորէ թարգմանեցաւ ի ձեռն Եզմկայ, հրամանաւ երանելոյն ուխտի եւ որոշման վանաց» (Պատմութիւն ժողովոց, էջ 25, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 625), իսկ Ս. Մեսրոպ Մաշտոցին հեղինակ եամարտնեբի («Հայկական աշխատասիրութիւնը հայագետ Պ. Ֆետտերի», թարգմ. Յ. Տաշեան, Վիեննա, 1895, Մ. Արքեղյան, Հայոց հիմ գրականության պատմություն, հ. Ա, Երևան, 1944, էջ 119-120, Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, Երևան, 1984, էջ 444)՝ Կորյունի մի հաղորդումը. «Ապա լետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել եւ քարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շմորհագորոս, քազմադիսս ի լուսատրութենէ եւ ի հիօթոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել, ի ամենայն ճաշակոց աւետարանական հաստոյն ճշմարտութեան» (Կորյուն, Վարդ Մաշտոցի: Բնագիրը, թարգմանությամբ, առաջարկումով և ծան. ի ձեռն Մ. Արքեղյանի, Երևան, 1941, էջ 78): Ըստ Մ. Օրմանյանի, Ս. Գրիգորը «Յաճախապատումը» գրել է հունարեն: Ուրեմն, կարելի է ասել, որ դրա թարգմանությունը կատարել և խմբագրել է Մեսրոպ Մաշտոցը Տիեզերական եկեղեցու առաջին երեք ժողովների ոգով:

⁷ Սրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում ճառը լուսաւորը, Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի, 1894, էջ 1: Հմտ. Mxiar Sazneci's Theological Discourses, Translated by S. P. Cowe. - Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 542-543, Scriptores Armeniaci, t. 21-22, Lovanii, 1993, I, 3:

⁸ «Յաճախապատում», էջ 23: «Յաճախապատում»-ի թարգմանությունը ընթացել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ զուգահեռ, ինչի վկայությունն է «Ես եմ Աստուած Որ Էն» արտահայտության առկայությունը Ել. Գ 14-ի և «Յաճախապատում»-ի հայերեն տեքստերում:

⁹ Եղիշեի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ քաղդաստութեամբ ձեռագրաց

թարգմանության առանձնահատկությունն է (ինչը արտացոլվել է նաև Եսայի մարգարեի գրքից կատարված թարգմանությունում. «Ես Տէր Աստուած, այս է անուն իմ. գիտաւ իմ այլում ոչ տաց. եւ ոչ զքաջութիւնս իմ դռօջօրոց». «Ես եմ առաջին. եւ Ես եմ յաւիտեան... Ես եմ Տէր Աստուած...»¹⁰) և դրա հիման վրա կատարված քրիստոնաբանական մեկնությունն է: Եղիշեն ունի նաև «Ես եմ, ես եմ...» արտահայտություն: Եղիշեն հայ աստվածաբանական մտքին բնորոշ ոգով տվել է Աստծո անվանը: Եղիշեն հայ աստվածաբանական մտքին բնորոշ ոգով տվել է Աստծո անվանը: «Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ բնութագիրը՝ «Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջենատր, ոչ ի տեղտը ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. ոչ ի մասնական իմիք, այլ ժամանակը ի մասնէ գոյացան... Եւ անուն ճորա Արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան զերկին և զերկիր. որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է»¹¹:

Դիոնիսիոս Արիսպագացուն (V դար) վերագրվող տեքստի՝ Ստեփանոս Սյունեցու (VIII դարի 20-ական թթ.) թարգմանության Հ-ի հետ կապված արտահայտությունները անգլերեն լեզվով հրատարակությունում միանշանակ չեն թարգմանվել. և դրանով իսկ բնագրի մտքի ընկալումը երկակի բնույթ է ստացել: «Ես եմ, որ էմ» արտահայտությունը մի դեպքում թարգմանված է, «I am the one who is», իսկ մեկ այլ՝ «I am he who is»¹²: Այնինչ, իմաստով այն համապատասխանում է Ա. Գրքի եբրայերենից անգլերեն թարգմանությանը՝ «I AM THAT I AM»¹³, կամ հունարեն Յոթանասնիցի անգլերեն թարգմանությանը՝ «I am THE BEING...»¹⁴: Ստեփանոս Սյունեցու թարգմանության՝ «Ես եմ, որ էմ» տողին հետևում է «Կեանք, յոյս, Աստուած» արտահայտությունը, այսինքն այստեղ աստվածային անվան այն բանաձևն է, որի հիմքում ընկած է Ա. Գրքի հայերեն թարգմանության «Ես եմ Աստուած, Որ էմ» արտահայտությունը, որը արտացոլվել է Սուրբ Պատարագում. «Բրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էմն Աստուած աստ բազմեցաւ...»:

Մովսես Խորենացու (V դար) «Պատմութիւն Հայոց» երկը սկսվում է Հայոց Մեծերի Ծննդաբանությամբ, որը արտացոլում է Հայոց ազգաբանության և տոհմաբանության հնագույն պատմության հենքը՝ խորհրդապաշտորեն ներկայացված Աստվածաշնչում բերված մարդկության ծննդաբանության տոհմածառին զուգահեռ, ինչը Պատմահոր շարադրանքում Ադամից հասնում էր մինչև Նոյ և նրա որդի-

աշխատությանը Ե. Տէր-Միմասեան, Երևան, 1957, էջ 112:

¹⁰ Ես., ԽԲ 8, 10, 12, 17:

¹¹ Եղիշեն, էջ 29-30, 109:

¹² The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite, translated by R.W. Thomson. - Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Armeniaci, tomus 18, Lovanii, 1987, էջ 94, 96.

¹³ Ex. III 14 (The Hebrew-English Old Testament, London, 1971).

¹⁴ Exod. III, 14 (The Septuagint Version of the Old Testament, with an English translation, Michigan, 1970, , p. 73).

մերը՝ Սեմ, Բամ, Հաբեթ, և վերջինիս սերունդներից մինչև Հայկ մահապետը և մրա հետնորդները¹⁵:

Մովսես խորեմացին Ադամից հետո անդրադարձել է մրա կրտսեր որդուց՝ Սեթից սերող տոհմաճյուղին, քանի որ, համաձայն Ս. Գրքի, մարդկային ցեղը շարունակվել էր, հատկապես վերջինիս որդու՝ Ենոքի սերունդներով¹⁶: Ս. Գրքում Ադամից հետո պատմվում է Կայնի և Աբելի, այնուհետև մրանց կրտսեր եղբոր՝ Սեթի և մրա որդու՝ Ենոքի մասին, որի մասին ասված է. «Նա յուսացաւ կոչել զամուճ Տեառն Աստուծոյ»¹⁷:

Ադամից անմիջապես հետո խորեմացին գրել է ոչ թե եղբայրասպան Կայնի և Աբելի, այլ Սեթի և Ենոքի մասին. «Ադամ մախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիոր եւ երեսում՝ ծնամի զԱԷթ. ՍԷթ կեցեալ ամս երկերիոր եւ հինգ՝ ծնամի զԵնոկս... Ենոկս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած»: Այստեղ, հեցվելով Աստվածաշնչի վրա, Պատմահայրը հետևյալ իմաստավորումն է առաջարկել. «Եւ ընդէ՞ր արդեօք այս եւ կամ վասն որո՞ց պատճառանաց մախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուած, եւ կամ որպէ՞ս կոչելն իմանի»: Հիշատակելով Ադամին և Աբելին՝ խորեմացին գրել է. «Արդ՝ սոցա այսպէս լընդունելութիւն եւ ի ծանօթութիւն Աստուծոյ լեալ՝ ընդէ՞ր առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս՝ յուսով»:

Պատմահայրն այս առիթով չի բերել «ամուճ» բառը իր շարադրանքում, և մրա երկի քննական բնագրի ձեռագրական հիմքը առիթ չի տալիս կասկածելու այդ մատնագրության առիթով: Այնինչ, «Պատմութիւն Հայոց»-ի թարգմանիչները տարբեր մոտեցումներ են ցուցաբերել այս և մույնամամ արտահայտությունների նկատմամբ:

Մովսես խորեմացու երկի ոտներեն լեզվով առաջին հրատարակությունում խնդրո առարկա մախադասության մեջ ավելացված է «ամուճ» բառը. «Енос первый возимел упование призвать имя Бога», իսկ շարունակությունում պահպանվել է հարազատությունը բնագրի («մախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուած», «առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս՝ յուսով», «կոչէ զԱստուած»¹⁸) հետ («первый призвал Бога, он первый призвал Бога и то с упованием», «призывает Господа»¹⁹): «Պատմութիւն Հայոց»-ի ոտներեն լեզվով մոր թարգմանությունում առաջին և հաջորդ հատվածներում ավելացված է «ամուճ» բառը. «Енос был первым,

¹⁵ Մովսես խորեմացի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 14-19:

¹⁶ Մովսես Կաղամկատվացի, ինչպես և Մովսես խորեմացի, Ադամից անմիջապես հետո գրել է Սեթի և մրա որդու՝ Ենոքի մասին (Մովսես Կաղամկատացի. Պատմութիւն Ադուամից աշխարհի, քննական քննադիր և մերաժութիւնը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ. էջ 3):

¹⁷ Ենոք., Դ 26, Ե 1-5:

¹⁸ Մովսես խորեմացի, էջ 14, 15:

¹⁹ История Армении Моисея Хоренского, новый перевод Н. О. Эминя, М., 1893, с. 6.

кто с упованием призывал имя Бога... Он первый уповал на призвание имени Бога", "...призывает имя Бога"²⁰;

Նման ավելացումները չեն նպաստում խորենացու շարադրանքի մեկնողական բնույթ ունեցող մի ամբողջ պարբերության ճշգրիտ թարգմանությանը, քանզի Աստվածաշնչի վրա հիմնված այդ տողը խորենացին հետևյալ կերպ է իմաստավորել. «Եւ ընդէ՞ր արդեօք այս եւ կամ վասն որո՞ց պատճառաւնաց նախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուած, և կամ որպէ՞ս կոչելն իմանի»: Հիշատակելով Ադամին և Աբելին՝ խորենացին գրել է. «Արդ՝ սոցա այսպէս յընդունելութիւն եւ ի ծանօթութիւն Աստուծոյ լեալ՝ ընդէ՞ր առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս՝ յուսով»²¹:

Մովսէս խորենացին այն կարծիքին էր, որ Ադամը «ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ, չարին աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ». իսկ Աբելի մասին գրել է. «Զկնի եւ ընտանեզոյն Աստուծոյ յորդոցն Ադամայ՝ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբօրէ»: Նկատի ունենալով Աբելի սպանությանը հաջորդած խառը ժամանակները, երբ տեղի ունեցավ Կայնին սերունդներից Ղամբեի ոճրագործությունը²², խորենացին, առանց անուանք հիշատակելու, գրել է. «Եւտ որոյ ոչ բանի ինչ աստուածայնոյ եւ ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս եւ լանյուսութիւն ազգ մարդկան հատեալ լինի, այլ եւ յինքնահաճոյ արդարեւ գործս»: Սեթի որդի Ենոփսն էր «քաջայոյս եղեալ ուղղութեամբ հանդերձ կոչէ զԱստուած»:

Մովսէս խորենացին հենվել է Աստվածաշնչի վերոհիշյալ տողի վրա, քանզի իր մեկնության մեջ օգտագործել է հենց «անուանել» բառը. «Իսկ կոչելը կրկնակի իմանի, կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ յօգնականութիւն կարդալ: Արդ՝ անուանելն որպէս զմոռացեալ՝ ոչ է ի դէպ, զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ անցեալ, որ ի մոռացումն սոցա զԱստուածը ածէր զանուն եւ կամ զնոյն ինքն՝ որոյ անունն, եւ ոչ դարձեալ մահու եւ թաղման դեռ եւս յԱստուծոյ ստեղծեալն հասեալ էր»²³:

Այս միտքը մուսնապես թերի է ներկայացված ոռուսերեն թարգմանություններում. «... Не так же много прошло времени, чтобы люди могли забыть имя Бога, или его самого»,²⁴ «... Не так уж много прошло времени, чтобы было позабыто имя Бога или сам носитель этого имени»²⁵: Այնինչ հայերեն գրաբար բնագրի խնդրո առարկա արտահայտությունը անհրաժեշտ է թարգմանել «... имя Бог»:

Խորենացու բնագրի վերոհիշյալ մախադասություններին հիմնականում հաշտագատ են աշխարհաբար [-Ենոփսը առաջինն եղավ, որ հուսաց Աստծուն

²⁰ Моисей Хореняцки, История Армении, перев. Г. Саркисяна, Ереван, 1990, с. 9-10.

²¹ Մովսէս խորենացի. էջ 14-15:

²² Եւսմ. Գ. 23:

²³ Մովսէս խորենացի. էջ 14-15:

²⁴ История Армении Моисея Хоренского, новый перевод Н. Эмина, р. 6.

²⁵ Моисей Хореняцки, перев. Г. Саркисяна, с. 10.

կոչել», «... սա առաջինը հուսաց Աստծուն կոչել», «... առաջինը զա Աստված անվանեց (քնազրի ավելի ճիշտ թարգմանությունն է՝ «կոչեց Աստված» - է. Դ.) և այն էլ՝ հուսով», «Արդ՝ անվանել հասկանալը, ինչպես մոռացվածի, հարմար չէ, որովհետև այնքան շատ տարիներ չէին անցել, որ *Աստված անունը* նրանց մոռացնել տալին կամ հենց նրան, որ այս անունով կոչվում էր»²⁶ և անգլերեն («Enos was the first who had hope to call on God», «... was he the first to have hope to call upon God...», «... the first to call upon God, and that with hope», «Now the naming as of something forgotten is inappropriate here, for there had not passed a great number of years that would have led them to forget the name God or Him whose name it is»²⁷) թարգմանությունները: Ֆրանսերեն թարգմանությունում ևս խնդրո առարկա արտահայտության կապակցությամբ, բացի վերջին դրվագից [որ թարգմանված է. «... le nom de Dieu ou l'être même designe par se nom»²⁸ (այնիմյ պետք է լինի «... le nom Dieu...»)], պահպանվել է հարազատությունը բնագրի հետ:

Մովսես խորենացուն պետք է հայտնի լիներ հունարեն Յոթանասնից և հայերեն զոաբար թարգմանությունների ոճական տարբերությունը եբրայերեն տեքստից: Ըստ Աստվածաշնչի 1895 թ. հրատարակության մի տողատակում եբրայերենից հայերեն կատարված թարգմանության, «Ենցձամ սկիզբն եղև կոչելոյ յանուն Տեառն»²⁹, այնինչ հիմնական տեքստի հայերեն թարգմանությունը՝ «Նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ»³⁰ բառացիորեն համապատասխանում է հունարեն տեքստի բովանդակությանը³¹: «Սկիզբն եղև» և «հուսացաւ» արտահայտությունների տարբերությունը խնդրո առարկա հարցի առումով առավել ընգծվում է նրանով, որ խորենացին իր մեկնությունում հենվել է երկրորդի վրա:

²⁶ Մովսես խորենացի. աշխ. թարգմ. և. Մախասյանի, էջ 12-13:

²⁷ Moses Khorenatsi, p. 71-72.

²⁸ Moïse de Khorene. Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes, Gillimard, 1993, p. 108-109.

²⁹ Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանության ճախմեաց մերոց համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց, Կոստանդնուպոլիս, 1895, էջ: Հմմտ. «Тогда начали призывать имя Господа [Бога]», полЕ Библия. Книже Священного Писания Ветхого и Нового Завета, М., 1976, Бук. 4. 26. «Then began men to call the name of the Lord», Gen., 4. 26 (The Holy Bible, Authorized King James Version, London and New York, 1957): Անգլերեն թարգմանության մի ընթերցվածի համաձայն. «Then began men to call themselves by the name of Lord» (The Hebrew-English Old Testament, London, 1971).

³⁰ Եմմդ., Դ. 26:

³¹ The Septuagint Version of the Old Testament, with an English translation, Michigan, 1970, Gen. IV 26.

Մովսես խորեմացին քրիստոնեական աստվածաբանության ոգով է մեկնել այս արտահայտությունը, հակառակ՝ հատկապես օտար գրականության մեջ տարբեր մեկնությունների, որոնք հաճախ բռնազբոսիկ բնույթ ունեն³²:

Մովսես խորեմացին գրել է. «Ապա ուրեմն յօգնականութիւն կոչէ սա (Ենովս - Է. Դ.) զԱստուած»³³: Այսինքն, Սեթից սերած մարդկության պերուհը հույս ուներ ապաշխարելու: Միևիթար Սասնեցի (XIII դ. 60-ական - 1337 թթ.) նույնպես ոչ թե անվանակոչելու, այլ հուսալու իմաստով է մեկնել Աստծո անվան կոչելը³⁴: Ինչպես Ս. Գրիգոր Տաթևացին է մեկնել՝ «Յոյսն է ակն հաւատոյն»³⁵:

Սեթի և Երա որդու՝ Ենովսի մասին իր «Արարածոց մեկնութեան» մեջ Եղիշեն գրել է. «Եւ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն ըստ թոտոյ հրեշտակաց Աստուծոյ, զի որպէս առ Սեթաւ եւ Ենովսաւ կոչեցան որդիք Աստուծոյ եւ աստ հրեշտակք Աստուծոյ, մարդիկ պատգամաւորք Աստուծոյ իմաստութեանն եւ լոյովապատիկ իմաստութեանն սահման...»³⁶:

Հին և Նոր Կտակարաններում *Աստծո որդիների* վերաբերող մոտեցումները տարբեր են, և Եղիշեի մեկնությունը նոր լույս է սփռում այդ հասկացության հոգևոր ընկալման վրա: Ըստ Հին Կտակարանի, մախաբիեղեղյան ժամանակներում «սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի, եւ դատերք ծնան նոցա: Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդատերս մարդկան, զի գեղեցիկ էին, առին իւրեանց կամայս յամենեցումն, զոր ընտրեցին...: Եւ իբրեւ եռես Տէր Աստուած, եթէ բազմեցան չարիք մարդկան ի վերայ երկրի, եւ ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աւուրս: Եւ ստորջացաւ Աստուած, զի արար զմարդն ի վերայ երկրի, եւ մտախոհ եղել ի սրտի իւրում: Եւ ասէ Տէր Աստուած. «Ջնջեցիք զամենայն մարմին, զոր արարի, յերեսաց երկրէ, ի մարդոյ մինչեւ յանասուն...»³⁷:

Աստծո որդիների մասին այստեղ խոսվում է Սեթից և Ենովսից մի քանի սերունդ հետո՝ Նոյի և Երա որդիների հիշատակման ժամանակաշրջանում: Ուրեմն ի՞նչն է Եղիշեին ոգեշնչել Աստծո որդիների հիշատակման սկզբնավորումը կապված համարել Սեթի և Ենովսի ժամանակների հետ:

Ըստ Նոր Կտակարանի, Կայիափա քահանայապետը մարգարեացավ «եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին, եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Աստուծոյ զգրուեալսն ժողովեսցէ ի մի»³⁸:

³² R. De Vaux. The Early History of Israel, London, 1978, p. 268, 338; Cook S., An Introduction to the Bible, New York, 1945, p. 136.

³³ Մովսես խորեմացի, էջ 15:

³⁴ Միևիթար Սասնեցի, Ա. 16:

³⁵ Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն սաղմոսաց, աշխատասիրութեամբ Ա. Գլոշկերեանի, Երևան, 1993, էջ 69:

³⁶ Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, էջ 250:

³⁷ Եմմդ. Զ 1-7:

³⁸ Յովհ. ԺԱ 52:

Այս հոգիընկալմամբ բանալին Քրիստոսի խոսքն է. «Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն եւ արանց լինին, իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել եւ յարութեանն որ ի մեռելոց՝ ոչ կանայս առնեն, եւ ո՛չ արանց լինին: Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են, եւ որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են»³⁹: Ուրեմն, Եղիշեն Նոր Ովստի ոգով է մեկնել Աստծո որդիների մասին հոգիընկալումը Սեթի ու Ենոքիսի առումով:

Եղիշեի «Այրարածոց մեկնութեան» և «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկերը ցերծված են *Աստծո որդիների* մասին քրիստոսաբանական ընկալումով. «Մանկունք, մի ոք զձեզ խաբեսցէ, որ առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս եւ մայն արդար է: Եւ որ առնէ զմեղս, ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի: Ամենայն, որ յԱստուծոյ է ծնեալ, մեղս ոչ առնէ, զի սերմն մորա ի մեա մնայ, եւ ոչ կարէ մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ: Այսորիկ յայտնի են ի միմեանց որդիք Աստուծոյ եւ որդիք սատանայի»⁴⁰, քանզի խավարի ուժերը մարմնավորող թշնամու դեմ (որպիսին այն ժամանակ մազդեզականության պարտադրումն էր հայերին սասանյան արքունիքի կողմից) մղվող կռիվը ոչ միայն նյութական, այլև հոգևոր ուրուցներն էր ընդգրկում:

Հովսեփ Ա. Հոդոցմեցի Կաթողիկոսի (437-452 թթ.) առաջնորդությամբ Այրարատյան զավառում՝ Արտաշատում ժողովված Տարոնի Սահակ, Մանազկերտի Մեղեռ, Բագրևանդի Եզնիկ, Բզնունյաց Սուրմակ, Տայոց Տաճատ, Բասենի Թաթիկ, Տուրութերանի Քասուր, Մարդաստանի Երեմիա, Մարդադվո Եվդադ, Սյունյաց Անանիա, Արծրունյաց Մուշե, Ռշտունյաց Սահակ, Մոկաց Բասիլ, Վանանդի Գադ, Ամատունյաց Եղիշա, Անձնացյաց Եղբայր, Ապահունյաց Երեմիա եպիսկոպոսները իրենց պատասխան մատակում խիզախորեն մերժեցին սասանյան արքա Հագկերտի պահանջը՝ ուրանալ և ընդունել մազդեզականությունը⁴¹: Այնքան խորն էր Հայ Առաքելակյան Եկեղեցու հայրերի մեջ լուսավոր հավատքը, որ մրանք առանց վարանելու ուղղակի հոգևոր մարտահրավեր նետեցին մազդեզականությունը ջատագովող արքային. «Այլ դու յետ այսր ամենայնի այլ զմեզ մի հարցաներ, զի ոչ եթէ ընդ մարդոյ է ովստ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրեւ զտղայս, այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել եւ ի բաց եղանել, ոչ այժմ եւ ոչ յապա, եւ ոչ յաւիտեանս, եւ ոչ յաւիտենից յաւիտեանս»⁴²:

Վաղ միջնադարյան հայ պատմիչների շարքում Սուրբ Երրորդության մասին իր աստվածաբանական խորհրդագրություններով նշանակալից տեղ ունի Մովսես Կաղանկատվացի (VII դար), որը, մեկնողական ոճով հեմվելով Նոր Կտակարանի

³⁹ Ղուկ. Ի 34-36:

⁴⁰ Ա. Յով. Գ. 7-10:

⁴¹ Եղիշե, էջ 37:

⁴² Նոյն տեղում, էջ 41:

վրա⁴³, գրել է. «... զանազանի Երրորդությանը զմի արարչական գործություն... Արդ՝ բան առ բան բազմատրական եւ Ռատու պատասխանեօք զլոյսն առ խաւար ծաներուք խորագոյնս քննելով. եւ դո՛ւ՝ բարեաց ցանկացողդ, վերացո՛ւ ընդ իս սրագոյն զճայեցուածս ի սահմանս սրբոյ Երրորդությանն, զոր Պօղոս վարդապետն առ հռոմայեցիսն. «Աղաչեմ զձեզ, ասէ, ի ձեռն տեառն Յիսուս Քրիստոսի եւ սիրով հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած, եթէ Աստուած է Տէր Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Հոգին»⁴⁴: Այնուհետեւ շարունակությունում կարդում ենք. «Այսպէս ուսուցեալ զանուն Սուրբ Երրորդությանն եւ գրէ իսկ, թէ ամենայն առաքելական կտակարանքն լի են այսու բարքառով. յոր անուն մեք Ռաման անաք մկրտել եւ փառս վայելել միով երկրպագութեամբ»⁴⁵:

Այսպիսով, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցու՝ Տիեզերական առաջին երեք ժողովների (Նիկիա՝ 325 թ., Կոստանդնուպոլիս՝ 381 թ., Եփեսոս՝ 431 թ.) ընդունած քրիստոնեական վարդապետության վրա հիմնված հայ քրիստոսաբանության ընկալմամբ Աստծու անունն է Աստված՝ Սուրբ Երրորդության Միաբան Հոյքյամբ և որևէ շեղում ճշմարիտ հավատի աստվածապաշտությունից և դրա վրա հիմնված քրիստոսաբանությունից լի է հոգևոր բնագավառում կորստի և ապագգայնացման վտանգով:



⁴³ Հռոմ. ԺԵ 30-31:

⁴⁴ Մովսես Կաղանկատվացի, էջ 38, 278:

⁴⁵ Նովմը, էջ 278:

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՏ. ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ստ. Նազարյանցը հայագիտության մեջ բավականին հանգամանալից ուսումնասիրված հեղինակներից է: Հրապարակի վրա կան արժեքավոր մի շարք մեծագործություններ, որոնք որոշակիորեն ամբողջացնում են 19-րդ դարի հայ նշանավոր գործչի հասարակական-քաղաքական և լուսավորչական գործունեությունը¹: Սիրելիներ, սակայն, կարծել, թե Ստ. Նազարյանցի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունն ըստ ամենայնի ավարտված է, մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է նրա պատմագիտական գործերի քննությանը:

Ստ. Նազարյանցի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման գործում կարևոր դեր խաղաց Ներսիսյան նշանավոր դպրոցում նրա ուսումնասիրությունը, այստեղ սկսված մտերմությունը Ն. Արշվյանի հետ: ...1849 թ. Նազարյանցը փոխադրվեց Մոսկվա: Հազարյան ճեմարանում նրան պատվավոր ընդունվելություն ցույց տվեցին: Ծառ չանցած, Նաչատուր Հազարյանի օժանդակությամբ 1851 թ. լույս տեսավ Նազարյանցի «Յադագս փորձնական հոգեբանության ճառ» վերնագրով գիրքը: Սա հայերեն լեզվով նրա առաջին աշխատությունն էր և թեև գրող պատմագիտական երկ չէր, սակայն հեռու չէր պատմական հարցերի քննարկումից: Ավելի ճիշտ՝ այն պատմա-բանասիրական բնույթի հրապարակախոսություն էր: Առավել հաջողված մասը գրքի առաջաքանն է, ուր հեղինակը խորհրդածույն է. թե «ինչպես ընթացավ Եվրոպան և հասավ այն գերագույն բարգավաճման, որով «բարձր ի զուխ պարծենում են ավելի քան բոլոր ազգերը»¹: Նորոգողանալով այս հարցերի շուրջ, Նազարյանցը դիպուկ բնութագրում է յուրաքանչյուր հայի կոչումը՝ «ճանաչել ու սիրել հայրենիքը, իսկ դա նշանակում է խուզողական մտքով քննել յուր ազգի պիտույքները և աշխատել նրան դարձան մատուցանել»²:

Աշխատանքում հնչում է ապագա լուսավորչի պատվիրանը. «հանի դեռ հայերը կարողություն չունեն իրենց բուն լեզվով մտածելու, խոսել ու գրել՝ չկա նաև ո՛չ հասկանալու ու լուսավորություն, և ո՛չ իսկ հայություն: Եվ հայություն առանց հայաբար մտածելու և խոսելու՝ բարբարոսություն է մեր աչքում, որովհետև ազգ և լի-

¹ Տե՛ս Սմ. Եսահայիզ. Հրապարակախոս ծայր, Մոսկվա, 1881. Հեռ. Ստեփանոս Նազարյան, Թիֆլիս, 1902, Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, Ռ. Կարապետյան, Ստ. Նազարյանց: Փիլիսոփայական հայացքները, Երևան, 1976, Ռ.Նաճումյան, Ստ.Նազարյանց, Երևան, 1978 և ուրիշներ:

² Ստ. Նազարյանցի երկերը, Թիֆլիս, 1913, էջ 14:

քը, և թե նորա ամոթը, հետևանք է նրա պատմության, ասել է այն գործերի ու անցքերի, որ եղած են ազգի կյանքի մեջ և այսպես ով որ կամի ծանոթանալ յուր ազգի որպիսությունը, պարտական է ուսանել դորա պատմությունը, դորա անցյալը, որի մեջ դրած է և յուր հատուկ ներկայի քանալից, այսինքն, հասկանալով անցած գնացածը, կարող է հասկանալ նա և ներկայի խորհուրդը»⁹,- գրում է Նազարյանցը «Հայաստան» հոդվածում:

1844 թ. Կազանի համալսարանի «Տեղեկագրի» առաջին համարում տպագրվում է Նազարյանցի «Թոռուցիկ հայացք հայ մատենագրության մինչև 13-րդ դարը» ուշագրավ հոդվածը: Հեղինակն ամենուր ընդգծում է հայերի՝ մատենագրության հանդեպ ունեցած սերը. «Հայ մատենագիրների անընդհատ շարքն անառարակելիորեն ապացուցում են,- գրում է Նազարյանցը,- որ չորրորդ դարից սկսած մինչև մեր օրերը, չափազանց սուղ միջոցներով, պետականությունից զրկված պայմաններում... հայերն անդիմադրելի մի ուժով ամենուր հիմնել են իրենց գրադարանները: Ուր էլ որ հաստատվել են նրանք, հրատարակել են իրենց գրավոր հուշարձանները և ակնհայտորեն ապացուցել իրենց ջերմ սերը գիտությունների վերածնության հանդեպ»¹⁰: Նազարյանցն այստեղ առանձնակի շեշտում է հայ պատմիչների գործերի համաշխարհային նշանակությունը. «Հայ մատենագիրների շարքում,- գրում է նա,- հատկապես կարևոր են այն պատմիչները, որոնք մեր հայրենիքի պատմությունը ծանոթացնելուց զատ, հաճախ լրացրել են մեր տեղեկությունները ասիական ժողովուրդների ճակատագրի մասին»¹¹: Ավելից, Նազարյանցը գրում է, որ հայ պատմիչների գործերը «իրադարձությունների նկարագրության իրենց ճշմարտացիությամբ ու խոսքի մշակվածությամբ՝ նույնիսկ գերազանցում են արաբական, պարսկական և բյուզանդական կենսագիրներին»¹²:

Հայ պատմագիտության զարգացումը Նազարյանցն, ամտաբաղկույս, կապում էր նախ՝ քրիստոնեության ընդունման, ապա և հայ գրերի գյուտի հետ. «Հայերն այս իրադարձությունը, որպես քրիստոնեական ժողովուրդ, բոլոր փոթորիկներով հանդերձ, որոնք չորրորդ դարից սկսած ալեկոծում էին Փոքր Ասիան և հատկապես Հայաստանը, պարտական են իրենց ինքնատիպության պահպանման համար»¹³: Նազարյանցն այնուհետև առանձին-առանձին ներկայացնում է հայ պատմիչներին, բնութագրում նրանց գործերը, կարևորում նրանց նշանակությունը ինչպես հայոց պատմության, այնպես էլ հարևան երկրների պատմության ուսումնասիրության համար: Ընդ որում, հայ պատմագիտության ոսկե դարը Նազարյանցը համարում է ոչ միայն հինգերորդ դարը, ինչպես ընդունված է մեզանում, այլ բերում և հասցնում է մինչև 13-րդ դար, երբ «խավարն ու տգիտությունը խլացրեցին հայ ժողովրդի երբեմ-

⁹ Նույն տեղում, էջ 40:

¹⁰ Տե՛ս Ստ. Նազարյանց, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 10:

¹¹ Նույն տեղում, էջ 10:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 15:

նի առույգ ոգին»¹⁴։ և Մխիթարյանների հիմնադրումով միայն Նազարյանցի կարծիքով։ «հայերի մեջ կրկին արթնացավ հոգևոր և կրոնական կյանքը»¹⁴։

Նազարյանցի ունեւերեն լեզվով գրած մյուս հրապարակումը ևս պատմագիտական շունչ ունի՝ «Հայկյան գրերի պատմության տեսությունը նորագույն ժամանակներում»։ Այն նախորդի տրամաբանական շարունակությունն է։ Ներկայացված և քննության է ենթարկված 14-18-րդ դարերի հայ պատմագիտությունը։ Հեղինակը հատկապես առանձնացնում է 18-րդ դարը և նրա հետ է կապում հայագիտության նոր վերելքը։ Այստեղ էլ Նազարյանցը քարծր է գնահատում Մխիթարյանների կատարած դերը հայագիտության զարգացման գործում։

«Թուրքիկ հայացք հայոց հին պատմությանն ընդհանրապես» հոդվածում Նազարյանցը գրում է. «Վերջին ժամանակներում հայոց հին պատմությունը կորցրել է այն մեծագույն քննադատը, որը նա պահպանել է երկար դարեր»¹⁵։ Հեղինակը սակայն գտնում է, որ կապված լինելով հին աշխարհի թուր կարևորագույն իրադարձությունների հետ, «Հայաստան, անկասկած, գալիք սերունդներին թողել է իր գոյության փայլուն մի քննադատ»¹⁶։ Նազարյանցն այնուհետև համառոտ ներկայացնում է հայոց պատմությունը։ Սակայն պնդել, թե այն լուրջ քննարկման է ենթարկված հեղինակի կողմից, սխալված կլինեմք։ Նազարյանցը հաճախ շփոթում է հայոց գահակալներին և նրանց թագավորության տարիները, իսկ կիլիկյան Հայաստանի պատմությունը, որով և ավարտվում է ակնարկը, համարել է Հին Հայաստանի պատմություն։

Պատմագիտական տեսակետից հատկապես արժեքավոր է հոդվածի վերջին հատվածը։ Նազարյանցը գրում է. «Պատմական դեպքերը ցույց են տալիս, որ ազգերի մոտ, որոնք երկար ժամանակ տառապել են օտարի լծի տակ, ազգային զգացումներն ու հայրենիքի նկատմամբ սերը թուլանում է և ի վերջո անհետանում» տիրապետող տարրի ազդեցության տակ։ Այս օրենքի համաձայն, հայերը, ինչպես երևում է. պետք է ընդմիջտ կորցնեին իրենց հայրենիքի նկատմամբ հավատարմության զգացումը և ազգային կերպարը...»¹⁷։ Այստեղից էլ հեղինակի գլխավոր հետևությունը. «Այս ամենով հանդերձ, շարունակում է Նազարյանցը, Հայաստանը մինչև օրս պահպանել է իր մեծության շատ զծեր... ուր էլ որ գտնվել են հայերը, ուզական թե քաղաքացիական ծառայության մեջ, նրանք պահպանել են իրենց ազգային հետքերն ու հայրենիքի փառքի մասին եղած հիշողությունը»¹⁸։

Հրապարակման մեջ Նազարյանցը հանգամանորեն ներկայացնում և գնահատում է եվրոպացի գիտնականների նպաստը հայագիտության զարգացման

¹⁴ Կույմ տեղում, էջ 30։

¹⁵ Կույմ տեղում, էջ 151։

¹⁶ Կույմ տեղում։

¹⁷ Կույմ տեղում, էջ 159։

¹⁸ Կույմ տեղում։

խնդրում: Ընդ որում, հեղինակը միայն գովեստի խոսքեր չի շռայլում նրանց հաս-
ցեին: Նա հաճախ բանավիճում է նրանց հետ, արտահայտում հարցի մասին սե-
փական տեսակետը. «Որքան էլ որ որոտալից լինի Սեն-Մարտենի փառքը գիտա-
կան աշխարհում և որքան էլ որ մեծ լինի նրան պատկանող պատիվը,- գրում է Նա-
զարյանցը,- այս ամենը տակայն չպետք է զինաթափի մեզ՝ իրավացի և անշա-
հախնդիր քննադատության համար: Եվ չնայած տեղին չէ այստեղ ներկար ու բա-
րակ խոսել այն սխալների մասին, որոնք ակնհայտ են Հայաստանի մասին նրա
նկարագրություններում, մինևույն ժամանակ, անհրաժեշտ ենք զտնում եվրոպացի
գիտնականի ուշադրությունը հրավիրել այն դիտողությունների վրա, որը կատարել
է հայկական հեղությունների լիիրավ դատավորներից մեկը՝ Ղ. Իմֆիճյանը»¹⁹: Նա-
զարյանցն այնուհետև ընթերցողին է ներկայացնում այդ դատողությունները և, ինչ-
պես երևում է շարադրանքից, համակրանքը հայ պատմագետի կողմն է:

Գրեթե բոլոր և հատկապես հրապարակախոսական բնույթի աշխատություննե-
րում, հստակորեն ուրվագծվում է Նազարյանցի պատմական մտածողությունը:
Դրա խոսույն վկայությունն է «Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածը, որով բաց-
վում է 1913 թ. Թիֆլիսում հրատարակված նրա երկերի ժողովածուն: Թվում է, թե
հիմնական մյուսը պետք է վերաբերեր հայոց լեզվին, սակայն այն շեշտված հրա-
պարակախոսական-պատմագիտական ուղղվածություն ունի: Հեղինակն իր մտա-
հոգությունն է հայտնում հայ ժողովրդի ապագայի հանդեպ և առիթը բաց չի թող-
նում կոչ անելու իր «եղբայրակիցներին»՝ ապրելու ազգի հոգսերով և ամեն կերպ
սատար կանգնելու նրա ճակատագրին. «Թե մենք որպես ազգի անդամներ,- գրում է
նա,- որպես ազգի տղամարդիկ, որպես հատարակաց ազգի պաշտոնյաներ, որպես
բանական և բարոյական էակներ, ի՞նչպես ենք լցուցանել մեր պարտականություն-
քը, ի՞նչ ազգասիրական գործ ենք կատարել, ի՞նչ ճշմարտություն ենք առաջ տարել,
և ի՞նչ մոլորություն ենք անհետացրել ազգի մեջ, ի՞նչ կատարելություն ենք ստացել
մենք և ո՞ր պակասություններից ենք հրաժարվել, և արդյոք ազգի իմացական և բա-
րոյական դրությունը փոքր ի շատե բարվոքացե՞լ է մեր հատուկ խնամատարությ-
յամբը»²⁰: Կամ արդյո՞ք արդիական չի հնչում Նազարյանցի հետևյալ միտքը. «Հայ-
րենիքը լեզու առած հարցնում է այսօր ժողովրդի բոլոր անդամներից, թե՛ հասարա-
կականից, թե՛ ունևորից, և թե՛ չունևորից, թե՛ հոգևորից, և թե՛ աշխարհականից, ո-
րով հետև ամենքն ազգի որդիք են և ունեն իրենց առանձին պարտականությունները
դեպի նա. ինչ քարի գործերով կամ խոսքերով առաջադն ենք կացուցել ձեր ազգը,
ձեր եկեղեցին...»²¹: Նա կշտամբանքով նկատում է, որ եթե «նյութական գործի մեջ
այդպես խելոք է հայը, բայց հոգևորի մեջ կամի անգործ մնալ և բոլոր հոգաբար-
ձությունը Աստծոյ հրաշքին թողուլ»²²:

¹⁹ Նույն տեղում, էջ 93:

²⁰ Նույն տեղում, էջ 2:

²¹ Նույն տեղում, էջ 3:

²² Նույն տեղում, էջ 5:

Ուստի պատահական չէ, որ լուսավորական գաղափարների տարածման խնդրում Նազարյանցը կարևոր տեղ է հատկացնում պատմությանը: Այսպես, Նազարյանցի ծրագրի համաձայն «Հյուսիսսփայլի» երկրորդ բաժինն ամբողջովին պետք է նվիրեր պատմության հարցերին. «Առաջ մեք կպարունակվին համաշխարհային պատմության վերա ճառեր, ուշադիր լինելով ուսաց ազգի պատմությանը: Այստեղ լինելու են հիշատակի արժանավոր անցքերը համաշխարհային պատմության մեջ, վարքագրական պատկերացույցք երևելի մարդերի թե՛ Եվրոպայի, թե՛ Ասիայի, և թե՛ Ռուսաստանի մեջ հատկապես: Հայրենական ազգի պատմությունը, ինչքան որ Հայք կարողացել են գործ կատարել աշխարհի հրապարակումը, քաղաքական համդեսի մեջ, պիտո է այստեղ ավանդվի ազգին, ցույց տա հայերին լուսյանց նախահարց արդյունարարությունը և վնասարարությունը ազգին, մոցա պարծաճը և ամոթը, որպես ուսումն ու խրատ հետագա հայերին»¹: Համաձայնվենք, որ Նազարյանցը ճիշտ է հասկացել ու ըմբռնել պատմության դերն ընդհանրապես, իսկ հայոց պատմության խնդիրները՝ առավելապես:

Սեփական ժողովրդի պատմության իմացությունը Նազարյանցը դիտում է ոչ թե սոսկ որպես գիտելիքների իմացություն և պատմական անցքերի մասին տեղյակություն, այլ նրանում տեսնում է մերկայի և ապագայի խորհուրդը, գործունեության ուղեցույց. «Ով որ կամի ծանոթանալ յուր ազգի որպիսությանը, գրում է մա մույն «Հայաստան» հոդվածում. «մա կուսանի այդպես ճանաչել յուր ազգը և յուր անձը, որ ինչպես անբաժանելի անդամ ազգի, կցորդ ու մասնակից է դորա փառքին և դորա անարդյունքին... Այս է ահա մի ազգի պատմության խորհուրդը ամենայն մտածող մարդու համար, և այս է մասնավորապես Հայկազյան ժողովրդի պատմության խորհուրդը ամենայն բանական հայի համար մեր լուսավոր դարի մեջ»²⁴: Իհարկե, Նազարյանցի այս հրապարակման ոչ բոլոր մտքերն են ընդունելի. որոշ տեղերում պատմագիտական նյութը ուղղակի խեղդվում է հրապարակախոսական հոսանքի մեջ: Օրինակ, մա անտեղի քննադատության է արժանացնում նախորդ դարերի հայ մշակույթը միայն այն բանի համար, որ «Հայոց հնախոս (գրաբար՝ Հ.Հ.) հեղինակների պատմագրությունը անհասկանալի էին մեր ազգին, այլև զանազան պատճառներով դժվարավ ձեռք բերելի մոցա համար»²⁵:

Նազարյանցը հավակնություններ է մերկայացնում մաև ժամանակի հայագետների և թերություն է համարում, որ «Հայոց ուսումնականքը Ռուսաստանումը, փոխանակ այդպիսի անհասկանալի հնախոս մատենագիտությունը հայոց պատմության վերա, թարգմանելու աշխարհաբառ և տալու ազգի մարդերին, թարգմանում են դորանք ուսերեն»²⁶, գրում է մա: Այդպիսով, Նազարյանցն անհարկի թերարժե-

²³ Նույն տեղում, էջ 39:

²⁴ Նույն տեղում, էջ 40-41:

²⁵ Նույն տեղում, էջ 41:

քաղորում է այն կարևոր իմաստը, որով զբաղված էին 19-րդ դարում մեր անվանի շատ հայագետներ: Բայց չէ՞ որ այդ թարգմանությունների հիման վրա իրենց ձեռքը վերցրին հուսական մշակույթի նշանավոր շատ գործիչներ՝ հայոց պատմությունը ներկայացնելով ռուս և համաշխարհային ընթերցողին: Իհարկե, վերջին մտքի հետ համամիտ է նաև Նազարյանցը, սակայն գտնում էր, որ աշխարհաբար թարգմանելու գործը ևս կարևոր է:

Միաժամանակ հարկ է նշել, որ Նազարյանցը 19-րդ դարի հայագետներից առաջինը բարձրացրեց այդ հարցը և իրավացիորեն նկատում էր. «Հայոց պատմությունը ֆրանսիական և ռուս լեզվով տալ հայոց ազգին և հայոց մանուկին, երևում է մեզ մի անթնական, կարգից ու օրենքից դուրս, մի այլանդակ բան: Ոչ մի ազգի մեջ տեսնված չէ... որ իտալացին, ֆրանսիացին և անգլիացին իր պատմությունը և անցած անցքերը օտար լեզվով ավանդել իր ազգին»²⁷:

Նազարյանցը հայագիտության մեջ առաջիններից մեկը զգուշացրեց հայեցի ուսուցմանը սպասվող վտանգի մասին: Իհարկե, դա չէր նշանակում, թե մա ընդհանրապես դեմ էր Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացմանը: Ընդհակառակը, հեղինակը Ռուսաստանի հետ դաշինքի և սերտ հարաբերությունների կողմնակիցն էր, սակայն իրավացիորեն գտնում էր նաև, որ ռուսականացումը տանում է դեպի ապագայնացում: Ե. Ֆրանգյանի գրքում մի այսպիսի փաստ կա. «1870 թ. 4. Եզյանին գրած նամակում Նազարյանցը գրում է, թե «իմ շրջահայաց քննությամբ, Ռուսաստանի ազդեցությունը հայերի վրա այնքան խորին է եղած մինչև օրս, որ հայոց բերանում հայերեն խոսք մնացած չէ»²⁸: Ապագայնացման վտանգի առաջն առնելու միակ և գորավոր միջոցը Նազարյանցը տեսնում էր հայերի մեջ ազգային լուսավորություն տարածելու մեջ. «Ազգային լուսավորությունը միայն կարող է հոգի և գործություն տալ ազգին՝ դիմանալու օտարի կլանողական թնությանը»²⁹, - գրում է նա: Այդ պատճառով էլ նա պահանջ է դնում, որ հայ մանուկն իր կրթությունը ստանա «ազգային օրինավոր դպրոցում»³⁰ և հետո միայն զմա ռուսական կամ եվրոպական բարձրագույն դպրոց ուսանելու: Նկատելով այդ վտանգը, Նազարյանցը հորդորում է գիտակցական կոիվ մղել ապագայնացման դեմ և այդ կոիվը, նրա կարծիքով, պետք է տանել ազգովին:

Պատմագիտական առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նրա «Հայերի կոչումը մարդկության մեջ» արժեքավոր հոդվածը: Վերջինս վկայում է այն բանի, որ Նազարյանցին լրջորեն անհանգստացնում էին հայերի նկարագրում արմատացած բացասական որոշ հատկությունները: Միանգամից ասենք, որ հարցը քննարկելիս, հեղինակն անձնական մղումներ չի ունեցել, այլ առաջնորդվել է

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 41-42:

²⁸ Ցե'ս Ե, Ֆրանգյան, Հայ հասարակական միտքը, Կաթիռ, 1928, էջ 71:

²⁹ Ցե'ս Նազարյանց, Երկեր, էջ 127:

³⁰ Նույն տեղում, էջ 94:

բացառապես ընդհանուրի՝ ազգային մշակույթի զարգացման, հայ ժողովրդի հասարակականության զորեղացման և ազգաշինության շահերով: Ինչպես այլ, այնպես էլ այս հիմնահարցը վերլուծելիս Նազարյանը հանդես է բերում պատմաքննական մոտեցում: Դիտարկելով և քննելով իրեն մտահոգող մշված երևույթները պատմական տեսանկյունից, նա ցույց է տալիս դրանք ծնող պատճառները: Նա ցավով է նշում, որ ամփառանությունը ու ամհամերաշխությունը հայերի ազգային բացասական մկարագրի ամեմատարածված զծերից մեկն է, որն իր կործանիչ դերն է ունեցել մեր պատմական անցյալում և դժբախտաբար նաև հետագայում և եթե կուզեք, նաև ներկայումս: «Հայոց ազգը այն հմության դարերումը, երբ նա ուներ փոքր ի շատև քաղաքական կյանք, թագավորություն և քաղաքական տնտեսություն, ունեցել է արտաքին քաջ տղամարդեր, անձնադիր հայրենասեր անձինք, բայց միաբանություն, համաձայն և համաշունչ գործակատարություն շատ փոքր, կամ երբեք ոչ: ազգի մարտարարական տները... անխորհրդաբար աշխատել են միշտ և միշտ սահմանափակել ու նեղացնել թագավորի իշխանությունը, և այդպես թուլացնել թուր թագավորության զորությունը: շատերը իրենց անձնական օգուտը բաժանելով ազգի օգուտից, մատնիչ ու դարանագործ են եղել միմյանց և այդպես վնասել են իրենց և հայրենիքին»³¹:

Նազարյանը, իհարկե, յուրովի է բացատրում երևույթի պատճառները: Նա հանդգնում է հայտնում, որ պատմական և հասարակական միջավայրն իր դրոշմը ստեղծելու համար թողել է ոչ միայն անհատների, այլև ժողովուրդների ու ազգերի հույսերանության վրա: Հայությունը բազում դարեր ապրելով օտարի անարգ ու բռնակալ լծի տակ, ամխոսափելիորեն ձեռք է բերել զանազան բացասական հատկություններ «կորուսել է խոսելու սովորությունը, մտածելու կարողությունը» և իր գոյությունը պահպանելու համար «ուսել է միայն խորամանկություն և խարդախություն՝ իրեն միակ պաշտպանողական զենք մի ստրուկ ազգի ընդդեմ յուր տանջող և անիրավ բռնակալի»³²: Ուստի, Նազարյանը այն կարծիքն է հայտնում, թե «Հայոց ներքին դրությունը չէ մի պատահական բան, մի անիրավ ընթացք բախտի կողմից դեպի Հայկի որդիքը, այլ մի հարկավոր հետևանք մոցա թույլ և անմշակ պատմական կամքի»³³:

Իհարկե այս ամենը հեղինակը նշում է առաջին հերթին դասեր քաղելու, շտկելու, վերակառուցելու նպատակով. «...այսօր մեր ազնիվ եղբայրքը,- գրում է նա,- յուրաքանչեք անձնական ախտերը վեհաճանությամբ գոհ բերելով հայրենիքի սեղանի վերադառնալ մի կամք, մի հոգի, մի սիրտ հայկական ավերակ տունը շինելու համար»³⁴:

³¹ Նույն տեղում, էջ 88:

³² Նույն տեղում, էջ 136:

³³ Նույն տեղում, էջ 147:

³⁴ Նույն տեղում, էջ 41:

Դրանումն է նազարյանցի մեծության չափանիշը: Նա ուշագրավ մեկնություն է տալիս մասնավորի և ընդհանուրի, անհատ գործչի և համագայի հասկացության փոխհարաբերությունների հարցին: «Ուրացող Մերոմաններ և Վասակներ, քաջ ու հոյակապ հայրենասեր Վարդաններ և Սմբատներ կանգնած են այստեղ միմյանց համդեպ»³⁵. «ոչ ոք կարող չէ ուրանալ հայերի քաջությունը և արիական գործերը պատերազմի մեջ, - գրում է նա, - քայց ցավելի է ասել, որ այդ առաքինական հատկությունները ավելի օգնել են օտարներին, քան թե իրենց: Ահա այս է պատճառը, որ հայոց ազգը արդարև եղած է մի քաջ ազգ, քայց համարյա թե նույնպես միշտ թույլ և հնազանդ ազգ... Ով չի կարող լինել իր առաջնորդը, նա կարուտ է օտարի առաջնությամբ»³⁶:

Նազարյանցը հպարտությամբ ընդգծում է, որ հայոց ազգը կորած չէ, «եթե ինքը իր անստությանը չկամի կորուսանել իր անձը: Հայոց ազգը կորած չէ. նա ունի աշխարհի հրապարակի մեջ կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ խորհուրդ»³⁷: Սկզբում նույնիսկ թվում է, թե Նազարյանցը սրտնեղած է, գայրույթով է լցված, անգամ ողբում է իր ազգի դրությունը, ուզում է «խաչ դնել» այդ «ստմարդի ժողովրդի վերա», սակայն վերջում հայ ժողովրդին առաջընթացի կոչ է անում: Ուրեմն ո՞րն է, Նազարյանցի կարծիքով, հայերի կոչումը մարդկության մեջ: Հեղինակը միանշանակ պատասխանում է. «Հայոց ազգը ունի մի մեծ ու հոյակապ կոչում... հայոց դրությունը իր *եկեղեցական կենտրոնով* շատ մոտ հաղորդակից լինելով միմյանց հետ ազգաբար, ցուցանում է անչափ շատ հարմարություններ և *երաշխավոր է հայերի առաջադիմության համար*»¹: Իր խոսքերով ասած, Հայաստանն այն «խմորն է, որ դրած է Ասիայի եռացող նյութերի մեջ, որ հոգեղեն կյանքի համարյա թե մեռած ծիլերը զարթոցեցնե և կենսագործե»³⁹:

Նազարյանցը, խոստովանելով ազգի բարենասնությունները, առանց կշտամբանքի չի թողնում և նրանց, ովքեր իրենց մի կտոր անձնական օգուտի համար հեքքում են ամեն նոր կարգ ու առաջադիմություն, որոնց համար չկա ո՛չ հայրենիք, ո՛չ ճշմարտության գաղափար: Հոգվածի գլխավոր գաղափարն այն է, որ հայերը պիտի կատարեն իրենց գլխավոր խորհուրդը՝ ընդունելով եվրոպական լուսավորություն, այն տարածեն Ասիայի մեջ: Նազարյանցը հարցնում է՝ կա՞, արդյոք, մեր ազգի մեջ մի համապատասխան կշիռ և ուժ, որը կարողանա իրագործել այդ գաղափարները: Նրա կարծիքով, այդ քարոշական ուժը կարելի է մասամբ համարել «*էջմիածնի հայրապետական Աթոռը... Եկեղեցին պիտի լինի իմացական և քարոշական կրթության պարագլուխ առաջնորդը... Հարազատ քրիստոնեական եկեղեցին*

35 Նույն տեղում, էջ 88:

36 Նույն տեղում:

37 Նույն տեղում, էջ 91:

38 Նույն տեղում, էջ 93-94:

39 Նույն տեղում:

պիտի հարկավորապես ուրախանա ամենայն իմացական հառաջադիմության վերա և չվախենա լուսավորությունից»⁴⁰:

Նազարյանցի պատմագիտական հիմնական գործերից է նաև «Պատմություն հայոց ազգի» հոդվածը: Այն տպագրվել է 1860 թ., «Հյուսիսափայլի» առաջին համարում: Ըիշտ է. հեղինակի հայոց պատմությունը գրելու մտադրությունն այդպես էլ չիրականացավ, սակայն ներածականը, համեմայն դեպս. մա հասցրեց շարադրել: Ինչպես երևում է «Հյուսիսափայլի» հետագա համարներում տպագրված հոդվածներից, Նազարյանցը հայոց պատմության մի քանի հանգուցային հարցերի վերաբերյալ արտահայտել է իր կարծիքը, և ինչպես նշում է Լեոն, «...կարելի է ասել, թե շատ հետաքրքրական կլինեք այդ հայոց պատմությունը և մեծ չէր լինի գոյություն ունեցող պատմությունների: Նազարյանցը կգնար ընդհանուր հոսանքի. ընդհանուր հասկացությունների դեմ և շատ ինքնուրույն, լուրջ հայացքներ կտար մեզ»⁴¹: Սակայն մա այդպես էլ բավականացավ միայն առաջաբանով և չշարունակեց այն:

Մենք համամիտ չենք մահ Լեոնի այն կարծիքին, թե «Նախաբանը ոչինչ արժանավորություն չունի»: Անընդունելի է մահ Լեոնի տեսակետը, թե հեղինակը վերցրել ու թարգմանել է ոռա անմշան հեղինակի գրվածքը:⁴² Նազարյանցը առաջիններից մեկն էր, որ մտածում էր հեռանալ այն ոճից, որը քնորոշ էր ժամանակի հայոց պատմագրությանը. «Հայոց պատմիչքը, գրում է մա,» դեռևս գտած չեն բռն պատմական ոճը, թեև արդարև դա մի հեշտ բան չէ և ստացվում է միայն մեծ կրթությանը և ուշադիր ուսումնասիրությանը հին և նոր ժամանակների ընտիր զաղափարների»⁴³: Հետագոտելով հայոց նոր պատմագիտությունը, մա հանգում է այն մտքին, որ վերջինս «խրված է տղայական կոշիկների մեջ, որովհետև դորա հեղինակները մինչև այսօր եղած են արեղա մարդիկ»⁴⁴:

Նազարյանցը «Պատմության» առաջաբանում կարևորում էր հայոց պատմության ուսումնասիրության նշանակությունը, քանի որ «մարդուս մտածող հոգին կարող լինելով մի անընդհատ սննդառության, ստիպված է որոնել իր համար կենսապահպան նյութեր և պիտո է տարածել իր հայացքը մոտավոր ներկայից դեպի անցյալը»⁴⁵: Միանգամից նշեմք, որ Նազարյանցը քննադատական վերաբերմունք ունի անցյալի մեր պատմական դեպքերի նկատմամբ և դառնացած նշում է, որ ներկա «դրությունը չէ մի պատահական բան, մի անիրավ ընթացք թախտի կողմից դեպի Հայկի որդիքը, այլ մի հարկավոր հետևանք նոցա թույլ և անմշան պատմական

⁴⁰ Նույն տեղում, էջ 117, 118:

⁴¹ Լեո. Ստ. Նազարյանց, Երևան, 1987, հտ. 6, էջ 96:

⁴² Նույն տեղում, էջ 97:

⁴³ Տես Ստ. Նազարյանց, Երկեր, էջ 166-167:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, էջ 147:

կյանքի մոցա անքաղաքագետ կառավարության հայոց անխնայության բարք ու վարքի, մոցա կործանիչ անմիաբանության և ընդհանուրի օգտին միշտ վնասակար, անմիտ մասնավոր անձնասիրության... երբ հայրենիքը պահպանելու համար պիտո է լսելի և պապանձելի առանձնական ախտերը...»⁴⁶։ Ցավով նշելով այս ամենը, Նազարյանը միաժամանակ միաբանության կոչ է անում և այստեղ է տեսնում ազգի բարվոք ապագան. «Հայոց թշվառ մերկայի ծնող մայր է մուսուլման ազգի անցյալը և այդ թշվառ մերկան - եթե հայոց ազգը միաբան հոգատարությամբ և ամենաջան աշխատասիրությամբ չբարվոքե դորան, կծնանի մի ևս առավել թշվառ և անմխիթար ապագա»⁴⁷։

«Հյուսիսափայլի» վերջին համարներից մեկում հրապարակվեց Նազարյանի «Ազգային թշվառություն» վերնագիրը կրող հոդվածը։ Հեղինակն այստեղ ըննարկում է արևմտահայերի ազգային Սահմանադրությունը և փորձում է տալ նրա գնահատականը։ «Հյուսիսափայլի» խմբագիրը, ողջունելով ազգային Սահմանադրությունը, խորհմ դրվատանքով է խոսում նրա հեղինակների մասին։ «Զննելով սահմանադրության շուրջ ծագած հասարակական-քաղաքական պայքարը՝ Նազարյանը հղացնում է մի նշանավոր միտք, որն, անշուշտ, արժանի է ուշադրության. «Մենք միշտ դատապարտել ենք,- գրում է նա,- երբ մի մարդ որոնում է օտարի պաշտպանությունը, բայց մուսուլման դատապարտել ենք և դեռևս պիտի դատապարտենք ազգային անպիտան գործակարգը, որ յուրյանց լուծը օտարի լծից առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը օտարի լծի վերա մայել, որպես մի երանացուցիչ քաղցր բեռի վերա։ Մեր ազգի բոլոր թշվառության աղբյուրը այս բանի մեջ է առա»⁴⁸։

Այսպիսով, ըննելով Նազարյանի պատմագիտական հրապարակումները, կարելի է առանձնացնել չորս կարևոր մոտեցումներ, որոնք կարմիր թելի պես անցնում են նրա հոդվածների միջով.

Առաջին՝ «...Հայերը միշտ ունեցել են իրենց համար և ունին այժմ ևս մի անդրծելի սեր դեպի հայրենիքը, դեպի լեզուն, իրենց սովորությունները, դեպի քրիստոնեությունը... Եկեղեցին պիտո է լինի իմացական և բարոյական կրթության պարագլուխ առաջնորդը... այդ գաղափարը կպարզվի և կայանառանա և կպտղաբերի արժանի քրիստոնեական գործեր, կազմվացնե հայոց հոգին և սիրտը և նորափետուր կզարդարե մոցա կյանքը, և ընդունելով յուր մեջ հարազատ քրիստոնեության և ճշմարիտ լուսավորության սերմերը, կտանե նրանց ասիական աշխարհում, մահու սովերների մեջ մատած ազգերին»⁴⁹։

Երկրորդ՝ «...Հայոց ազգը արդարև եղած է մի քաջ ազգ, բայց համարյա թե մուսուլման միշտ թույլ, օտար իշխանության ստրուկ և հնազանդ ազգ, և աշխարհի

⁴⁶ Նույն տեղում, էջ 147-148։

⁴⁷ Նույն տեղում։

⁴⁸ Նույն տեղում, էջ 359։

⁴⁹ Նույն տեղում, էջ 93, 117-119։

կարգը միշտ այնպես է, որ մի մարդ կամ ժողովուրդ չկարողանալով յուր բանակա-
նությանը կառավարել ինքը յուր անձը, պիտո է հարկավորապես հնազանդ օտա-
րին: Ով չի կարող լինել առաջնորդը, նա կարոտ է օտարի առաջնորդությամբ»⁵⁰:

Երրորդ՝ «Ժամանակը թևավորված թռչում է, և մեր կյանքի օրերը նորա հետ
միասին, ամենայն ժամ մի քայլավիթյա մտնեցնելով մեր գեղեզմանի դռանը: Եկեք ա-
պա, մի քանի րոպե ոտք հաստատեմք այստեղ և իբրև բանական էակներ, իբրև
մտածող քրիստոնեայք, իբրև անդամք մի ազգային հասարակության, առաջար-
կեմք մեզ այս հարուցածը. ուստի՞» է մեր գալուստը և ո՞ր է մեր երթը»⁵¹:

Չորրորդ՝ «Ուրացող Մերութաններ ու վասակներ, քաջ և հոյակապ հայրենասեր
վարդաններ և Սմբատներ կանգնած են այստեղ միմյանց հանդեպ: Ոչ ոք կարող չէ
ունենալ հայերի քաջությունը և արիական գործերը պատերազմի մեջ, բայց ցավալի
է ասել, որ այդ առաքինական հատկությունը ավելի օգնել են օտարներին, քան թե
իրենց...»⁵²:

«Հայոց ազգը կորած չէ. նա ունի աշխարհի հրապարակի մեջ կատարելու մի օր
մի մեծ և գեղեցիկ խորհուրդ: Հայոց ազգը վերաբերությամբ դեպի ի Ասիա, ունի մի
մեծ և հոյակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խմորը, որ դրված է Ասիայի
եռացող նյութերի մեջ, որ հոգեղեն կյանքի համարյա թե մեռած ծիլերը զարթոցեն
և կենսագործեն...»⁵³:

Այսպիսին են Նազարյանցի պատմագիտական մտածողության գլխավոր արդ-
յունքները: Մեծարել ազգային պատմության լուսավոր դրվագները՝ չի նշանակում
քողարկել նրա անցյալի կամ ներկայի մոայլ էջերը: Զգոնացնելով հայերի ինքնա-
գիտակցությունը և այն ուղղելով ամեն տեսակ հնի դեմ, Նազարյանցը եռանդով
վեր էր հանում ազգային պատմության ստվերային էջերը, զգաստացնում նրան:

Իհարկե, Նազարյանցի հայացքները ժամանակին ճուշակեալ չընդունվեցին:
Այդ մասին բավականին հանգամանորեն պատմում է Սմբատ Օսեանցի «Հրա-
պարակախոս ծայր» գրքում, որը հատուկ գրվեց նրան ժամանակի «գնահատումնե-
րից» պաշտպանելու համար: Օսեանցի «Նազարյանցի գործունեությունը մասնեց-
նում է Սահակ Պարթևի հետ, երբ «հինգերորդ դարի կաշառաքել և ախտամոլ մախ-
միքը կեղտ անում դնելով մեծ Սահակի վրա, ցլորելով աթոռից, որքան և աշխա-
տեին իրենց գործը սուրբ համարել, բայց զալոց ազգը դատապարտեց այդ գործը...
Այսպես՝ Աբովյան և Նազարյանց, Նազարյանց և Աբովյան՝ մեր այժմոս համասեռ
բաներ են, երկուսի ևս նպատակը միևնույնն է. երկուսը ևս այլևայլ ճանապարհնե-
րով ծառայել են միևնույն հավիտենական ճշմարտության՝ նորը պիտո է ծաղկի, հի-
մը մեղմանա և տեղ տա: Գալոց ազգը, մի օր ուսումնասիրելով յուր հոգևոր զար-

⁵⁰ Նույն տեղում, էջ 88:

⁵¹ Նույն տեղում, էջ 93:

⁵² Նույն տեղում, էջ 88:

⁵³ Նույն տեղում, էջ 93:

զացման պատմությունը պիտի ասե. «Ե՛վ Արուսյանը, և՛ Նազարյանը ժամանակի իսկ որդիք էին»⁵⁴: Եվ ժամանակը Քաստատեց Շառագիզի խոսքերի ճշմարտացիությունը:



⁵⁴ Տե՛ս Սմ. Շառագիզ, Հրապարակախոս ծանց, Մոսկվա, 1881, էջ 3:

ՀՈՒՔԼՅԱՆՆԵՐ

ՍՐՏԻ ԽՈՍՔ

«Երանելի է այն մարդը, որ չհետևեց անբարիշտների խոսքին»

(Սաղմոս Ա 1)

Շատերն են սիրում Հիսուսին, շատերն են տարված Նրա երկնային արքայության քարոզչությամբ, բայց քչերն են կամենում կրել ճրա փառապանծ խաչը:

Շատերն են բաղձում վայելել Նրա ներկայությունն ու մխիթարության շնորհը, բայց քչերն են մասնակից Նրա չարչարանքների հավերժական ներկայությամբ:

Շատերն են փորձում Նրան սեղանակից լինել, բայց քչերն են կամենում մասնակցել Նրա զրկանքներին ու տառապանքներին:

Երանի ճրան, ով հասկանում է այդ ամենը:

Այդ երանելիներից է Ներսես Սրբազանը՝ Հիսուսի հավատարիմ չարչարակիցն ու ճանփորդակիցը:

Որպես Հիսուսի հետևորդ ու բարի հովիվ՝ 40 տարիներ հլու և հնազանդ կրում է խաչի զորությունն ու տառապանքը, որովհետև խղճով է վկայում:

Երանի ճրան ով հասկանում է, թե ինչ է նշանակում սիրել Հիսուսին և Նրանով ապրել:


Երանի ճրան, ով ի սեր Հիսուսի կարողանում է աշխարհայինը մերժել և աշխարհի մեջ ապրել հանուն Հիսուսի:

Երանի ճրան, ով արհամարհում է ատելությունը և տրվում սիրուն:

Երանի ճրան, ով Հիսուսի քաղցրությունը չի փոխում անցողիկ հեշտասեր դառնության հետ:

Երանի ճրան, ով հմտություն ունի զանազանելու բարին չարից, լույսը՝ խավարից, սերն՝ ատելությունից, երկինքը՝ երկրից, անսխալը՝ սխալից, հույսը՝ անհուսությունից, հոգեսփոփությունը՝ անհոգեսփոփությունից, համբերությունը՝ անհամբերությունից, սուրբ՝ անսուրբությունից, օրենք՝ անօրհնությունից:

Երանի ճրան, ով հանդգնում է աղաղակել. «Տերմ է իմ հովիվը»:



Երանի Երան, ով Հիսուսին սիրում է Հիսուսի համար և ոչ թե իր անձի:

Երանի Երան, ով սիրում և համբերությամբ մոտենում է սրբագործված Զոհին:

Երանի Երան, ով զոհաբերում է իրեն հացում Զոհի:

Այդպիսին է Ներսես սրբազանը՝ պաշտամունքով ու երկրպագությամբ, բարեբարությամբ ու մխիթարությամբ, եղբայրասիրությամբ և օժանդակությամբ:

Երբեք չտրվելով հուսահատությանը՝ նա, որպես քաջ հովիվ, շարունակում է սպասավորին հատուկ նախաձեռնողությամբ տարածել Աստծո լույսն ու ճշմարտությունը՝ առանց տրտմության, միտքը հարատև սևեռած երկնային իրողություններից, հոգին դարձնելով ջերմեռանդ հանդիսարան, ձեռքին՝ բաժակը կեմդանարար հաղորդության:

Հեռու անձնահաճությունից՝ խոհեմության շավղով շարունակում է իր ընթացքը:

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍԾԱՆ



«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ* (1984-2000 թթ.)

Թ

493. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցը ՀՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության մասնաճյուղի տնօրենի Ռուսկոյանին: 3

494. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի զանապառույցի 31 և 4. Պոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք, Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի 25-ամյակի տոնակատարությունները Մայր Աթոռում: 4-11

495. Եպիսկոպոսական ձեռնադրություն: 12-23

Եպիսկոպոս են ձեռնադրվել Մեսրոպ Ժ. Վ. Գրիգորյանը և Մեսրոպ Ժ. Վ. Մուրադյանը

496. Հոգևոր Ժամարանի վերաբացման հանդիսություն: 24-26

497. ԳԵՎՈՐԳ սարկավազ ՄԿՐՏՏՅԱՆ, Մեծագործ բարերարի անյուրմատուփը Մայր Հայրենիքում (Սարգիս Բյուրջյանի մասին): 27-30

498. ԹՂԹԱԿԻՑ, Սփյուռքահայ ուսուցիչների այցելությունը Մայր Աթոռ: 31

499. ՄԱՅՐ ԱԹՈՐ: Եկեղեցական թեմ. լուրեր: 33-34

500. ԹՂԹԱԿԻՑ, խաղաղության ժողով Արարատյան թեմում: 35-37

501. ԹՂԹԱԿԻՑ, Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: 40-42

Քահանա է ձեռնադրվել Սամվել սարկավազ Դարբինյանը (Ավետիս քահանա)

502. ԹՂԹԱԿԻՑ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կանադայի թեմի երրորդ պատգամավորական ժողովը: 43-44

503. Եվրոպական եկեղեցիների 9-րդ մատաչքյանը Ստեղծում: 45

504. Քրիստոնեական խաղաղության համաժողովի միջազգային քարտուղարության միտքը Միմսկում: 47

505. ԹՂԹԱԿԻՑ, Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լուսերական

* Սկզբը տե՛ս 2001 թ., № Դ, էջ 104-118, Ե, էջ 112-126

Եկեղեցու նոր պետի զահակայությունը հանդիսությունը Ռիգայում: 48

506. ԹՂԹԱԿԻՑ, «Խորենյան Պատարագի» համերգային կատարում Հայեպում: 49

507. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարողալ Ավետարանը: 50-61

Այ. տես № 387, 417, 446, 461, 490

Ժ

508. Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նամակը Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսին: 3-4

509. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Ի սեր մեր Եկեղեցու միության: 5-8

510. «Հայ Եկեղեցվո վարչակազմակերպչական կանոնադրության» առթիվ փոխանակված նամակներ Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի միջև: 9-30

12 նամակ

511. ՊԱՐԳԵՎ ԸԱՀԱԱԶԾԱՆ, Արձանագրություն Հայ Եկեղեցու վարչակազմական կանոնադրության առթիվ Անթիլիասի պատվիրականության հետ հանդիպման մասին: 31-36

512. Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղյալ Անթիլիասի պատվիրակներին: 37-43

513. ԳԱՐԵԳԻՆ Բ, Շնորհակալական հեռագիր Անթիլիասին: 44

514. Մայր Աթոռի դիվանի հայտարարությունը Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն թվականի սեպտեմբերի

24-ի ընդլայնված նիստի մասին: 45-46

515. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի պատասխանները ԱՊՆ-ին: 47-49

516. ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարողալ Ավետարանը: 50-60

Այ. տես № 387, 417, 446, 461, 490, 507

ԺԱ - ԺԲ

517. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Խաղաղության տարին անցավ խաղաղությամբ: 3-4

518. Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր Տաճարում (23 նոյեմբերի 1986 թ.): 5-7

519. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի (Վազգեն Ա) Օրհնության Կոնդակը Գերշ. Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանին՝ քահանայական գործունեության երեսնամյակի առթիվ: 8

520. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Գերշ. Տ. Ներսես եպիսկոպոս Պոզապայանին՝ արքայության պատիվ շնորհելու մասին: 9-10

521. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Օրհնության Կոնդակը ՀԲԸՄ ութսունամյակի առթիվ: 11-12

522. Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու քահանայապետ Ն. Ա. Հովհաննես-Պողոս Բ Պապին՝ «Խաղաղության արթընի օր»-ի առթիվ: 13-1

523. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության հետագիրը Փարիզի հայոց առաջնորդ, Տ. Գյուտեպիսկոպոս Նազգաշյանի՝ Բրյուսելի հայոց եկեղեցու Ռիմնարկեքի առթիվ: 15

524. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը Լիբանանի հայությանը: 16-17

525. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՆ: Գերագույն Հոգևոր Խորհրդի մոր կազմը: 18-19

526. Ձեռնադրություններ Էջմիածնի Ա. Շողակաթ եկեղեցում: 20-21

Քահանաներ են ձեռնադրվել Մովսես Տերտերյանը և Պողոս Տերտերյանը՝ վերանվանվելով Մովսես քահանա և Պողոս քահանա

527. ՆՈՐԱՅՐ քահանա ԲԱՂ-ԴԱՍԱՐՑԱՆ: Քահանա հայրերի երեսնամյա գործունեության հանդիսավոր նշումը Արարատյան հայրապետական թեմում: 22-24

Ատոմ քհն. Բոյաշյանի, Ռուբեն քհն. Մարտիրոսյանի, Հովհաննես քհն. Մարությանի և Կարապետ քհն. Հովնաթյանի քահանայադրության 30-ամյակները

528. ԹՂԹԱԿԻՑ, Երեսնամյա վաստակի արժանավայել գնահատում: 25-26

529. Ավարտաճառերի պաշտպանությունը Հոգևոր Ընտարանում:

Ավարտաճառեր են պաշտպանել Ռազմիկ Խախանյանը, Գևորգ Գյուլգյուլյանը, Գևորգ Մկրտչյանը, Մանվել Մաթևոսյանը, Ղազար Կարապետյանը, Ալեքսանդր Սարգսյանը, Տիգրան Զուլֆայանը:

530. ԹՂԹԱԿԻՑ, Հայ միջնադարյան գրականության միջազգային գի-

տատողվի մասնակիցները Մայր Աթոռում: 30-32

531. ՄԱՅՐ ԱԹՈՒՆ: Եկեղեցական թեմ. լուրեր: 33-38

532. ՀՈՒՍԻԿ արքեպիսկոպոս ՍԱՆԹՈՒՐՑԱՆ, Քարոզ: 39-40

533. Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը արքեպիսկոպոս պատվի արժանալու առթիվ: 41-43

534. ՈՍԿԱՆ Եպիսկոպոս ԳԱԼՓԱՔՑԱՆ, Քարոզ: 44-45

535. Տ. Գարեգին Եպիսկոպոս Ներսիսյանի քարոզը (19 հոկտեմբեր 1986): 46-47

536. ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍ-ԹԱՆ, Արժվոք (Վիպերգ): 48-52

537. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ա. Ղազարի (Իրան) Ա. Հոփսիմե եկեղեցու Ռիմնադրման 50-ամյա տոնակատարությունը: 53-53

բ. Օրջանավարտներու ընդունությունը առաջնորդարանի մեջ: 54

գ. Հիմնարկեք եկեղեցվո: 54-55

դ. ԹՂԹԱԿԻՑ, Սարկավագական և քահանայական ձեռնադրություն Մելքուտնի Ա. Աստվածածին եկեղեցում: 56-57

Քահանա Է ձեռնադրվել Կիրակոս սարկավագը՝ ստանալով Ասողիկ քահանա անունը

ե. ՎՈԼՈՂԹԱ ԱՐԲԱՀԱՄԹԱՆ, Նիցցայի հայոց Ա. Աստվածածին եկեղեցում կից Պարսամյան համալիրի Ռիմնօրհները: 59

զ. ԹՂԹԱԿԻՑ, Զույգ տարեդարձների տոնախմբություն ի Կ. Պոլիս: 59-63

Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի Ռիմնադրության 525-ամյակը և Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի զահակալության 25 - ամյակը

Է. Լուրեր թորոնթոյից: 63-65

Նոր եկեղեցի կառուցելու մասին

538. ԹՂԹԱԿԻԹ, Համատեղ աղօթք համայն աշխարհի խաղաղության համար: 66

539. ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ,

Աղերս: 67

Ասիզի: 68

Ուտանավորներ

540. ԱՆԱՆԻԱ, եպիսկոպոս ԱՐԱԲԱԶԹԱՆ, Սոփեաական Միությունում գործող եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների պետերի և ներկայացուցիչների հավաք Մոսկվայում: 69-71

541. Խաղաղության համաժողով Բաքվում: 72

542. ԾՆՈՐՀՔ արքեպիսկոպոս ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, «Քրիստոնեությունը ամենուրեք կազմակերպում էր եպիսկոպոսական հիմքի վրայ»: 73-76

543. ՄԵՍՐՈՊ եպիսկոպոս ԳՐԻԳՈՐԹԱՆ, Երկու աստվածաբան թագավորներ ի Հայաստան. Գագիկ Արծրունի Վասպուրականի և Գագիկ Բագրատունի Անիի: 77-83

544. ԹՂԹԱԿԻԹ, «Վարք և գործք»: 84-85

Գրախոսություն վազգեն Ա-ի գահակալության երեսնամյակին մվիրված գրքի մասին

545. Ս. ԹԱՓՈՒԺԹԱՆ, «Հայ գիրքը դարերու ընդմեջեն»: 86-87

546. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարդալ Ավետարանը: 88-99

Այ. տես № 387, 417, 446, 461, 490, 507, 516

547. ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶԹԱՆ, Գլածորի համալսարանի դերը հայկական միջնադարյան մասնագիտացված երաժշտության զարգացման մեջ: 100-105

548. ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԹԱՆ, Վազքաշենը և հուշարձանները: 106-109

549. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱԹԵԼԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 110-114

Այ. տես № 32, 51, 82, 100, 150, 192, 280, 294, 415, 491

1987

Ա

550. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Ի սեր կարգ ու կանոնի: 3-7

551. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի Ս. Ծննդյան քարոզը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: 8-10

552. Ամանորի և Փրկչի Հրաշափառ Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 11-13

553. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու մվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 14

554. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ: 15-18

555. Ընդունելություն չՍՍՀ Մի-
գիատրների խորհրդում: 19

556. ԹՂԹԱԿԻԹ. Ս. Եճճոյան
Բաճկաւորութիւնները Մայր Աթոռում:
20

557. ԹՂԹԱԿԻԹ. Ամանորը Մայր
Աթոռում: 21-25

558. Ս. Ստեփանոսի տոմը և սար-
կավազական ձեռնադրություն Մայր
Աթոռում: 26-28

*Սարկավազ են ձեռնադրվել
Գևորգ Աջապահյանը, Կամո Արա-
համյանը, Վազգեն Պերպերյանը,
Գառնիկ Կարապետյանը, Վաչե Զի-
րեկյանը, Արծի Գևորգյանը, Սամ-
վել Հովհաննիսյանը*

559. ԹՂԹԱԿԻԹ, Հայրապետա-
կան գնահատություն, 29

*Ավագ քահանայության տվյալ-
յուն եղիշե քահանա Բաղրամյանին,
Գորգեն քահանա Աշոտյանին, Ար-
տակ քահանա Սիմոնյանին*

560. ԹՂԹԱԿԻԹ, Մեղքոյան
հաստատության երգչախումբը Մայր
Տաճարում: 30-36

561. ՄԱՅՐ ԱԹՈՐ: Եկեղեցա-
կան բեմ. լուրեր: 37-38

562. ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս
ՊՈԶԱՊԱԼԹԱՆ, Քարոզ: 39-49

563. ՆԱՐԵԿ քահանա ՄԱՏԱՐ-
ԹԱՆ, Քարոզ: 41-42

564. ԹՂԹԱԿԻԹ, Ռումեն Ուղա-
փառ Եկեղեցու մոր հովապետի գա-
հակալությունը: 43

*Թեոկտիստ Արքաշուի գահակա-
լության մասին*

565. ԹՂԹԱԿԻԹ, Եկեղեցիների
Համաշխարհային Խորհրդի միջեկե-
ղեցական տիեզերական օժանդա-
կության համագումար Կիպրոսում: 44

566. ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋԵԱՆ,
Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն

Հայոց. Տարեգրություն 1908-1955.
Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Կազմեց
Սուրեն Շ. Վանեցի: 45-51

Գրախոսություն

567. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչ-
պես կարդալ Ավետարանը: 52-60

Սկ. տես № 387, 417, 446, 461, 490,
507, 516, 546

Բ - Գ

568. Ամենայն Հայոց Վահափառ
Հայրապետի քարոզը Մայր Տաճա-
րում (1 մարտի 1987 թ.): 3-5

569. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի շնորհավորական հե-
ռագիրը Ալեքսանդրիայի և համայն
Աֆրիկայի Հումաց Ուղղափառ Եկե-
ղեցու մորմնտիր Պատրիարք, Ն.Ա.
Պարթեմիոսին: 6-7

570. Ալեքսանդրիայի և համայն
Աֆրիկայի հումաց Ուղղափառ
Եկեղեցու մորմնտիր Պատրիարք, Ն.
Ա. Պարթեմիոսի պատասխան հեռա-
գիրը Ամենայն Հայոց Վահափառ
Հայրապետին: 7

571. Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հա-
մայն Վրաստանի Պատրիարք-Կա-
թողիկոս, Ն.Ա. Իլիա Բ-ի միջև փո-
խանակված հեռագրեր՝ Վրաստա-
նում պատահած տարերային աղետի
առթիվ: 8-10

572. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ,
Հաղորդագրություն: 11

*Գերագույն Հոգևոր Խորհրդի
կազմի մասին*

573. Վրաստանի հայոց թեմի մյու-
թական օգնությունը Վրաստանի
աղետյալներին: 12

574. ԱՆԱՆԻԱ եպիսկոպոս ԱՐԱԲԱԶԾԱՆ, Միջազգային Ռամաժոդով Մոսկվայում «Համուն միջուկազերծ աշխարհի, Ռամուն մարդու վերապրումի» թեմայով: 13-20

575. Խաղաղության Ռամաժոդովին մվիրված Ռավաք Մայր Աթոռում: 21-24

576. ՎՈԼՈՂԾԱ ԱՐԱՀԱՄԾԱՆ, Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 25-31

577. Վեդարի տվչություն: 32-33

Վեդար է ստանում Արամ ավագ քահանա Բոյաջյանը

578. Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում: 34-38

Աբեղա է ձեռնադրվում Գևորգ Գյուլգույանը՝ ստանալով Օշական անունը

579. Տ. Օշական աբեղա Գյուլգույան: 39

580. ՄԱԹՐ ԱԹՈՒՈՒՄ: Եկեղեցական թեմ. լուրեր: 40-41

581. Գրական երեկո՝ մվիրված արևմտահայ բանաստեղծության: 42-46

582. ՄԵՍՐՈՊ եպիսկոպոս ԳՐԻԳՈՐԾԱՆ, Քարոզ: 47-49

583. ԶԱՎԵՆ աբեղա ԽԱՉԱՏՐԾԱՆ, Քարոզ: 50-51

584. ՍԱՄՎԵԼ սարկավագ ՀՈՎՀԱՆՆԻՍԾԱՆ, Քարոզ: 52-54

585. ԳԵՎՈՐԳ սարկավագ ՄԿՐՏՉԾԱՆ, Իմ Հայրենիք: 55

Ուտանավոր

586. Լուրեր Մոսկվայից: 56-57

ԲՎՆԴ. Ա. Երեկո մվիրված Հայ Առաքելական եկեղեցուն

Բ. Էկումենիկ աղոթք

587. ՆԵՐՍԵՍ աղքեպիսկոպոս ՊՈԶԱՊԱԼԾԱՆ, Եկեղեցիների Համաշխառային Խորհրդի կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը Ժնևում: 58-59

588. ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆԾԱՆ, «Թող Տիրամայրը քաղցրությամբ լսի աղոթքը մրա»: 60-61

Գրախոսություն

589. ԱՍՈՂԻԿ աբեղա ԱՐԻՍԱԿԵՍԾԱՆ, Մայր մեր: 61

Բոլոր մայրերը կույս են: 62

Մայր խաղաղության: 62

Ուտանավորներ

590. ԵԶՆԻԿ քահանա ՊԵՏՐՈՍԾԱՆ, Վարդապետական աստիճանները Հայ եկեղեցու պատմության մեջ: 63-71

591. ՄԱՆԾԱ ՂԱԶԱՐԾԱՆ, Էջմիածնի հարստությունները: 72-83

592. ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԾԱՆ, «Ժխորանաց» երկու մեկնություններին շուրջ: 84-86

593. ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԾԱՆ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների մոր ցուցակ: 87-99

594. ՀԱԿՈՐ ՔՈՍՍԵՍԾԱՆ, Ատոմ Աճնաքին և մրա ներքողը՝ մվիրված Հովհաննես Մկրտչին: 100-106

595. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարդալ Ավետարանը: 107-120

Սկ. տես № 387, 417, 446, 461, 490, 507, 516, 546, 567

Դ

596. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի զատկական քարոզը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում (19 ապրիլի 1987 թ.): 3-5

597. Փրկչի Հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Պատրիարք և Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հետագործում ու գրությունները: 6-8

598. Ամենայն Հայոց Վահափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 9

599. Հայրապետական ողջույններ ԱՄՆ-ի և Կանադայի հոգևորականաց և պատգամավորական ժողովներին: 10

600. Պատվարժան թեմական պատգամավորական ժողովին արևելյան թեմին հայոց Ամերիկայի Միացյալ Նահանգաց: 11-12

601. Հոգևորականաց համագումարին Միացյալ Նահանգաց արևմտյան թեմին: 12

602. Պատգամավորական ժողովին Միացյալ Նահանգաց արևմտյան թեմին: 13

603. Բարեպաշտ տիկնանց համագումարին արևմտյան թեմին հայոց Միացյալ Նահանգաց: 14

604. Պատգամավորական ժողովին թեմին հայոց Գանատայի: 15

605. Ամենայն Հայոց Վահափառ Հայրապետի հետագիրը ՀՐԸՄ մախագահ Ալեք Մանուկյանին: 16

Բուժման առթիվ

606. ՀՐԸՄ-ի մախագահ Ալեք Մանուկյանի պատասխան հետագիրը: 16

607. ԱՎԵՏԻՍ քահանա ԴԱՆԻԵԼԹԱՆ. Վեհափառ Հայրապետ Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցում: 17-20

608. Վեհափառ Հայրապետի հանդիպումը Խորհրդային Միությունում հավատարմագրված արտասահմանցի լրագրողների հետ: 21

609. Ս. Հարության տոնը Մայր Աթոռում: 22

610. ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ, Հոգևոր խոհեր Մեծ պահոց առթիվ: 23-24

Ուսանավոր

611. Մեծ եղեռնի տարելիցը Մայր Աթոռում: 25-27

612. ԱՄՆ արևմտյան թեմի քարեխնամ առաջնորդ, Գերշ. Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի քահանայական ձեռնադրության 35-ամյակի տոնակատարություններ: 28-29

613. ՄԱԹՐ ԱԹՈՐ: Եկեղեցական բեմ. լուրեր: 31-32

614. ԾԱՆՈՒՑՈՒՄ: Դիվան Մայր Աթոռի: 33

Ս. Գալանե վանքի ծիսակատար քահանա Տ. Նշան Բեղլերյանին կարգալույծ անելու մասին

615. Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Զինչիյանի քարոզը Մայր Տաճարում: 34-36

616. ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս ՊՈԶԼՊԱԼԹԱՆ, Քարոզ: 37-38

617. ԿՈՄԻՏԱՍ արքեպիսկոպոս ՆԱՆԹԱՆ, Քարոզ: 39-40

618. ԱԲԵԼ արքեպիսկոպոս ՕՂԼՈՒԳ-ԹԱՆ, Քարոզ: 41-43

619. ՆՈՐԱԹՐ քահանա ԲԱՂ-ԴԱՍԱՐԹԱՆ, Արարատյան հայրապետական թեմում: 44-46

620. Աղբյուր-հուշարձանի բացում Ս. Շողակաթ Եկեղեցում: 47-48

621. Տիկից Աստղիկ Քյուրքչյանի
աճյունատուփը Մայր Հայրենիքում:
49-50

622. Լուրեր Մոսկվայից: 51

Կլոր սեղան «Ընդհանուր անվը-
տանգությունը և բարոյական արժեք-
ները» թեմայով

623. ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ,
Կարապետ Եզյանց: 52-57

624. Ս. ՅԱՓՈՒՋՅԱՆ, Հիմնա-
րար աշխատություն: 58-61

Գրախոսություն Կ. Դալլաքյանի
«Ա. Չոպանյան» գրքի մասին

Ե - Զ

625. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Աղմուկ
վասն ոչնչի: 3-4

Եկեղեցական Կանոնադրության
տարակարծությունների շուրջ

626. ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ:
Հաղորդագրություն: 5

Վեհափառ Հայրապետի կոչը
եվրոպական պառլամենտի նախա-
գահ Փլամպ Քոլեշիլին և ԵՀԽ
քարտուղար Էմիլիո Կաստրոյին՝ Հա-
յոց ցեղասպանությունը ճանաչելու
մասին

627. ՎԱԶԳԵՆ Ա. Ն. Գերա-
զանցություն լորտ Փլամպ Քոլեշի-
լին՝ նախագահ եվրոպական պառ-
լամենտի: 6-7

628. ՎԱԶԳԵՆ Ա. ԵՀԽ ընդհա-
նուր քարտուղար, դոկտ. Էմիլիո
Կաստրոյին: 8-9

Եղեհնի մասին

629. ՎԱԶԳԵՆ Ա. Խոսք Լիբա-
նանի հայության: 10-11

Ծնորհավորանքներ «Ծիրակ» աւ-
սագրին՝ երեսնամյակի առթիվ

630. ՎԱԶԳԷՆ Ա. Խոսք օրհ-
նութեան Ֆրանսայի և Արևմտեան
Եւրոպայի հոգևորականաց համա-
գումարին: 12

631. ԳԻԻՏ Եպիսկոպոս ՆԱԳ-
ԳԱՇԵԱՆ, Ֆրանսայի և Արևմտեան
Եւրոպայի հոգևորականաց համա-
գումարի պատասխանը: 13

632. ՎԱԶԳԵՆ Ա. Վոլոկոլամսկի
և Յուրևսկի Գերաշնորհ Պիտրիմ
Միտրոպոլիտին: 14

Աստիճանի բարձրացման շնոր-
հավորանք

633. ՊԻՏԻՐԻՄ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազ-
